



# Զհաց Մեր Հանապազորդ

ԱՊՐԻԼ | ՄԱՅԻՍ | ՅՈՒՆԻՍ 2024

(April | May | June 2024)

ԼԵ. ՏԱՐԻ  
Բ. ԵՌԱՄՍԵԱՅ

Անձնական եւ Ըստանեկան  
Ամենօրեայ Աստուածաշունչի Ընթերցումներ  
եւ Հոգեւոր Խորհրդածութիւններ

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք  
*Our Daily Bread Ընկերակցութեան որուն*  
Թռյլատուութեամբ *Our Daily Bread գրքոյկէն*  
Թարգմանուած են յաջորդ Էջերու  
Խորհրդածութիւնները

---

Ամերիկայի Հայ Աւտարանչական Ընկերակցութիւն  
Armenian Missionary Association of America  
31 West Century Road  
Paramus, New Jersey 07652  
U.S.A.

Չլքենք մեր հաւաքոյթները, ինչպէս ոմանց սովորութիւնն է. հապա յորդորենք զիրար: [Եբ. 10. 25]

## ՄԻԱՍԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՅԻՍՈՒՍՈՎ

**Կ** եանքի դժուարին պարագաներուն պատճառով՝ երբ անցուցի զգացական եւ հոգեւոր ցաւի ու պայքարի երկար ժամանակ մը, ինծի համար դիւրին պիտի ըլլար հեռանալ եկեղեցին: Ու երբեմն ալ մտածեցի՝ ինչո՞ւ անհանգստանալ: Բայց պարտաւորուած զգացի շարունակել՝ յաճախել եկեղեցի ամէն կիրակի:

Թէ եւ երկար տարիներ շարունակ վիճակս մնաց նոյնը, ուրիշ հաւատեացեալներու հետ հաւաքուելով. պաշտամունքի, աղօթքի ժողովներու եւ Աստուածաշունչի սերտողութեան մասնակցիլը, համբերելու եւ յոյս ունենալու՝ քաջալերանքը տուին: Եւ յաճախ ես ոչ միայն լսեցի ոգեւորիչ պատգամ կամ ուսուցում, այլ ստացայ՝ միխթարութիւն, լսող ականջ կամ գրկախառնում, որոնք պէտք ունէի ստանալու ուրիշներէն:

Երբայեցիներու նամակին հեղինակը գրեց. «Զլքե՞նք մեր հաւաքոյթները, ինչպէս ոմանց սովորութիւնն է. հապա յորդորե՞նք զիրար» (Եբ. 10. 25): Այս հեղինակը գիտէր, թէ երբ մենք դիմագրաւենք նեղութիւններ եւ դժուարութիւններ, կարիքը պիտի ունենանք ուրիշներու հաւատիացումին, եւ ուրիշներ ալ՝ մե՛ր: Այսպէս՝ այս հեղինակը յիշեցուց ընթերցողներուն. «Ամուր բոնկ մեր յոյսին դաւանութիւնը» եւ նկատի առնել «ուշագիր ըլլալ զիրար հրահրելու սիրոյ եւ բարի գործերու» (Հմ. 23-24): Սա՛ խրախուսանքի մեծ մասն է: Ահա՛ թէ ինչո՞ւ Աստուած կ'առաջնորդէ մեզ շարունակել միասին հանդիպելու: Կրնայ մէկը քու սիրոյ խրախուսանքին կարիքը ունենայ եւ դո՛ւն կրնաս զարմանալ անոր գիմաց քու ստացածէդ

**Աղօթք - Սիրոդ Աստուած, օգևէ՛ ինծի չիրաժարիլ միասին հանդիպելէ, այլ միասին զգալ թու խաղաղութիւնն ու սէրդ: Ամէն:**

**Եթէ քաջալերանք զգացիր պաշտամունքի, աղօթքի կամ սերտողութեան պահէ մը ետք, քաջալերէ՛ ու խրախուսէ՛ անոնք, որոնք աջակցութեան եւ վստահութեան պէտքը ունին:**

Հնձուած խոտի վրայ իշած անձրեւի պէս պիտի իշնէ,  
տարափներու պէս՝ որոնք գետինը կը կակուղցնեն: [Սահմ. 72. 6]

## ՍԱՂՄՈՍ 72 ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

2022 Յուլիսին, Բրիտանիոյ վարչապետը՝ ստիպուած էր հրաժարելու, երբ շատեր խորհեցան թէ արդարադատութեան թերացումներ կային (նորանշանակ վարչապետը՝ քանի մը ամիսներ ետք հրաժարեցա՛ւ): Դէպքը սկսաւ երբ երկրի առողջապահութեան նախարարը ներկայ եղաւ տարեկան խորհրդարանական ազօթքի նախաճաշին, զգաց դատապարտուած՝ հասարակական կեանքի մէջ արդարադատ ըլլալու անհրաժեշտութեան եւ հրաժարեցաւ: Երբ միւս նախարարները՝ նոյնպէս հրաժարական ներկայացուցին, վարչապետը հասկցաւ որ պէտք է հրաժարի: Յատկանշական պահեր էին, սկիզբ առած խաղաղ ազօթքի ժողովի մը ատեն:

Ցիսուսի հաւատցողները կանչուած են ազօթելու իրենց քաղաքական առաջնորդներուն համար (Ա. Տիմ. 2. 1-2), եւ Սաղմոս 72-ը՝ լաւ ուղեցոյց մըն է այդ բանը ընելու: Այդ ուղեցոյցը կը նկարագրէ իտէալ ու տիպար առաջնորդը որպէս արդարութեան եւ ուղղամտութեան տէր անձնաւորութիւն (Հմ. 1-2), որ կը պաշտպանէ խոցելիները (Հմ. 4), կը ծառայէ դժբախտներուն (Հմ. 12-13) կը դիմագրէ՝ հարստահարութեան եւ բռնութեան (Հմ. 14): Անոնց պաշտօնավարութեան ժամանակը այնքան թարմացնող է, որ նման է «տարափներու, որոնք գետինը կը կակուղցնեն» (Հմ. 6), երկրին յորդառատութիւն բերելով (Հմ. 3, 7, 16): Մինչ միայն Մեսիան կրնայ լիովին կատարել այդպիսի գեր մը (Հմ. 11), առաջնորդութեան աւելի լաւ ի՞նչ չափանիշի վրայ կարելի է միտումնաւորութիւն:

Գիտուե՞նք «Սաղմոս 72-ի առաջնորդներ» մեր ազգերուն համար եւ օգնե՞նք անոնց՝ ազօթելով որ անոնք մարմնաւորեն այս Սաղմոսին մէջ նշուած յատկութիւնները:

**Աղօթք - Յայր,** կը խնդրեմ, զօրացո՛ւր մեր ղեկավարները՝  
ըլլալու արդարութեան, արդարադատութեան եւ բարութեան  
մարուեր: Ասէն:

**Ի՞նչ յատկանիշներ կը փնտռենք մեր առաջնորդներուն մէջ:**  
**Ինչպէս կրնանք աւելի յաճախ աղօթել՝ մեր տեղական եւ**  
**ազգային առաջնորդներուն համար:**

Դուսապանը կը բանայ անոր, եւ ոչխարները  
կը լսեն անոր ծայնը: [Յովի. 10. 3]

## ԿՇ ԼՍԵ՛Մ ՔԵԶ, ԱՍՏՈՒԱԾ

**Մ**անուկ Կրահամ (Graham) շփոթած ցնցուեցաւ, երբ մայրը գրկած էր զինք՝ մինչ բժիշկները կը դնէին ականջին մէջ՝ անոր առաջին լսողական գործիքը: Բժիշկը գործիքը միացնելէ անմիջապէս վերջ, Կրահամ դադրեցուց իր լացը, աչքեր լայն բացաւ ու ժպտեցաւ: Ան կը լսէր մօր ձայնը, որ հանգստացնելով կը քաջալերէր զինք ու կը կանչէր իր անունը:

Կրահամ լսեց իր մօր խօսակցութիւնը, բայց իրեն պէտք էր օգնութիւն սորվելու թէ ինչպէ՞ս կարելի է ճանչնալ անոր ձայնը եւ հասկնալ անոր ըսած խօսքերուն իմաստը: Յիսուս կը հրաւիրէ մարդոց սորվելու նման գործընթաց մը: Երբ մենք կ'ընդունինք Քրիստոսը որպէս մեր Փրկիչը, մենք կը դառնանք այն ոչխարները, որոնց մօտէն կը ճանչնայ եւ կ'առաջնորդէ զանոնք անձամբ (Յովկ. 10. 3): Մենք կրնանք աճիլ իրեն վստահելու եւ հնագանդելու մէջ, երբ կը սորվինք լսել ու ճանչնալ իր ձայնը (Հմ. 4):

Հին Կտակարանին մէջ Աստուած խօսեցաւ մարգարէներուն միջոցով: Նոր Կտակարանին մէջ՝ Յիսուս՝ մարդեղացած Աստուածը, ուղղակի խօսեցաւ մարդոց հետ: Այսօր Յիսուսի հաւատացողներուն հասանելի է Սուրբ Հոգիին զօրութիւնը, որ կ'օգնէ հասկնալու եւ հնագանդելու Աստուծոյ խօսքերուն, որոնք ինք ներշնչած ու պահպանած է Սուրբ Գիրքին մէջ: Մենք կրնանք ուղղակիօրէն Յիսուսի հետ հաղորդակցիլ մեր աղօթքներուն միջոցով, երբ Ան կը խօսի մեզի հետ Աստուածաշունչին եւ իր ժողովուրդին միջոցով: Երբ մենք կը ճանչնանք Աստուծոյ ձայնը, որ միշտ համապատասխան է Սուրբ Գիրքին մէջ եղած իր խօսքերուն, մենք կրնանք երախտագիտութեամբ գովաբանել. «Կը լսեմ Քեզ, Աստուած»:

**Աղօթք - Աստուած**, կը լսեմ Քեզ: Կը խնդրեմ՝ օգնե՛ ինծի ստանալու եւ բաժնեկցելու ճշմարտութիւնն ու սերը, որ Դո՛ւն կը բացայայտես ինծի՝ երբ կարդա՛մ Աստուածաշունչը: Ամէս: Աստուած կը խօսի մեզի իր խօսքին միջոցով ու կը բացայայտէ իր ո՞վ ըլլալը: Մեզի կը մնայ իր իմաստութեան մասին խօսիլ անոնց, որոնք այսօր միիթարութեան եւ քաջալերանքի պէտք ունին:

Իրեն հետ պիտի ըլլամ տագնապի մեջ: [Սահմ. 91. 15]

## ԱՍՏՈՒՇՈՅ ԲԱԶՈՒԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

**Ա**կռայ ծակող գործիքին ձայնը՝ սարսափեցուց հինգ տարեկան Սառան (Sarah): Ան վեր ցատկեց ատամնաբուժի աթոռէն եւ մերժեց դարձեալ նստիլ: Ատամնաբուժը հասկնալով վիճակը, գլուխով նշան ըրաւ՝ եւ ըսաւ հօր. «Հայրիկ, նստիր աթոռին վրայ»: Ճէյսըն (Jason) խորհեցաւ թէ ցոյց պիտի տայ իր գուստարին, թէ որքան պարզ է: Բայց յետոյ ատամնաբուժը դարձաւ փոքրիկ աղջիկին եւ ըսաւ. «Հիմա՞ բարձրացիր ու նստիր հայրիկին գիրկը»: Հիմա՝ հայրիկը երբ գրկած էր զինք իր հանգստացնող բազուկներուն մէջ, Սառան լիովին հանգստացաւ եւ ատամնաբուժը կրցաւ շարունակել իր գործը:

Այդ օր, Ճէյսըն՝ մեծ դաս մը սորվեցաւ՝ իր երկնաւոր հօր միսիթարող ներկայութեան մասին: Ան ըսաւ. «Երբեմն՝ Աստուած չուզեր ղեկը ստանձնել երբ բանի մը մէջէն անցնելու ըլլանք: Բայց Աստուածինծի ցոյց կուտարթէ նսայտեղ պիտի ըլլամ քեզի հետ»:

Սաղմոս 91-ը՝ կը խօսի Աստուծոյ միսիթարական ներկայութեան եւ գորութեան մասին, որ մեզի ուժ կու տայ դիմագրաւելու մեր փորձութիւնները: Իմանալ, որ մենք կրնանք հանգստանալ Անոր բազուկներուն մէջ, մեզի մեծ վստահութիւն կու տայ, ինչպէս Անոր խոստումը անոնց, որոնք կը սիրեն զինք. «Ինծի պիտի գոչէ եւ իրեն պատասխան պիտի տամ. իրեն հետ պիտի ըլլամ տագնապի մէջ» (Հմ. 15):

Կեանքի մէջ կան բազմաթիւ անխուսափելի մարտահրաւերներ եւ փորձութիւններ, ու մենք անխուսափելիօրէն ստիպուած պիտի ըլլանք անցնիլ ցաւի եւ տառապանքի մէջէն: Բայց եթէ Աստուծոյ յուսադրող բազուկները փաթթուած ըլլան մեզի, մենք կրնանք կրել մեր ծանր ճգնաժամները եւ պարագաները եւ թոյլ կու տանք, որ Ան ամրապնդէ մեր հաւատքը, մինչ մենք կ'աճինք անոնց միջոցով:

**Աղօթք - Ընորհիքի Յա՛յր, շնորհակալ եմ Ձոր յուսադրող ներկայութեանդ համար իմ վիճակներուս մէջ: Կը խնդրե՛մ, օգևէ՛ ինձի որ**

**անոնց միջոցով հասկնամ՝ որ Դուն միշտ ինձի հետ ես: Ամէն:**

**Փորձութիւններու մէջէն անցնիլը անխուսափելի է, սակայն կարելի է մենք մեզի յիշեցնել՝ որ Աստուած միշտ մեզի հետ է:**

Մարդուն մտքին մէջ յաւիտենականութեան  
մտածումը դրաւ: [Ժող. 3. 11]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԱՅԺՄՈՒ ԵՒ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

**Մ**օնիք (*Monique*) կը պայքարէր: Ան ունէր ընկերներ, որոնք կը հաւատային թիսուսի եւ ան կը յարգէր՝ թէ ինչպէ՞ս անոնք կը վարուին կեանքի դժուարութիւններուն մէջ: Ան նոյնիսկ քիչ մըն ալ կը նախանձէր անոնց: Բայց Մօնիք չէր մտածեր, որ կրնայ ապրիլ այնպէս, ինչպէս անոնք կ'ապրէին: Ան կը կարծէր, որ Քրիստոսի հանդէպ հաւատք ուենալը՝ կանոններու հետեւիլ է: Վերջապէս, գոլէճի ուսանող մը օգնեց իրեն տեսնելու, որ Աստուած չէր ցանկար բճացնել իր՝ կեանքը. փոխարէնը, Ան կը ցանկար լաւագոյնը իրեն համար իր վերելքներուն եւ վայրէջքներուն մէջ: Այս բանը հասկնալէ ետք, Մօնիք պատրաստ էր վստահելու Տէր թիսուսի, որպէս իր Փրկիչը եւ ընդունելու իր հանդէպ Աստուծոյ սիրոյ մասին հոյակապ ճշմարտութիւնը:

Սողոմոն թագաւոր՝ կրնար Մօնիքին նման խորհուրդ տալ: Ան ընդունեց որ այս աշխարհը ունի իսկապէս իր վիշտերը: Իսկութան մէջ կայ՝ «ամէ՛ն ինչի ատենը» (Ժող. 3. 1), «Հեծեծելու ժամանակ եւ ցատկուտելու ժամանակ» (Հմ. 4): Բայց կայ աւելին: Աստուած «մարդուն մտքին մէջ յաւիտենականութեան մտածումը դրած է» (Հմ. 11): Յաւիտենականութիւնը, որ նախատեսուած է Անոր ներկայութեան մէջ ապրելու:

Մօնիք ձեռք բերաւ «լիարժէք» կեանք, ինչպէս թիսուս ըսաւ (Յովհ. 10. 10), երբ Անոր վստահեցաւ: Բայց ան շատ աւելին շահեցաւ: Հաւատքի միջոցով ան ունեցաւ յաւիտենականութիւնը իր սրտին մէջ (Ժող. 3.11), որպէս խոստում ապագայի համար՝ երբ կեանքի դժուարութիւնները պիտի մոռցուին (Ես. 65. 17) եւ Աստուծոյ փառաւոր ներկայութիւնը յաւիտենական իրականութիւն պիտի ըլլայ:

**Աղօթք - Սիրելի Յիսուս, Կեանքը թաւալող գնացք մըն է: Ընորհակալ եմ՝ որ այս կեանքը արժեքաւոր ըրիր եւ արժէ ճիզ: Ընորհակալ եմ յաւիտենական ուրախութիւններուն համար, որոնք կը սպասել: Ամեն: Զգացա՞ծ ես՝ Յիսուսի առաջարկած լիարժէք կեանքը: Որո՞նք են իր մէջ քու ունեցած կեանքիդ որոշ բաները, որոնց համար դուն շնորհակալ ես:**

Հագեցք նոր մարդը, որ ստեղծուած է ....  
Աստուծոյ պատկերին համաձայն: [Եկ. 4. 24]

## ՄԵՐ ՆՈՐ ԲՆՈՅԹԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՋ

**Մ**եր կապոյտ եղեւին՝ խոզակներ ու ասեղներ կը թափէր: Ծառի բժիշկը հայեացք մը նետեց անոր եւ բացատրեց խնդիրը եւ ըսաւ. «Պարզապէ՛ս եղեւին է»: Ես աւելի լաւ բացատրութիւն մը լսելու յոյսը ունէի: Կամ ալ դարման մը: Բայց ծառի մարդը ուսերը թօթուելով դարձեալ ըսաւ. «Այդ՝ ուղղակի եղեւին է»: Իր բնոյթին մէջ է ասեղներ թափելը եւ կարելի չէ փոխել:

Բարեբախտաբար, մեր հոգեւոր կեանքը սահմանափակուած չէ՝ միայն անփոփոխ գործողութիւններով եւ վերաբերմունքներով: Պօղոս առաքեալ շեշտեց այս ազատագրող ճշմարտութիւնը եփեսոսի նոր հաւատացեալներուն: Հեթանոսներուն «միտքը խաւարած է» ըսաւ ան, անոնք ուծացած են Աստուծոյ կեանքն: Անոնք ունին կարծրացած սիրտեր, որոնք կը պարունակեն «ամէն տեսակի անմաքրութիւն» եւ կը փնտոեն միայն հաճոյքներ եւ ագահութիւն» (Եփ. 4. 18-19):

Բայց առաքեալը կը գրէ, «Քանի որ գուք ա'յսպէս չսորվեցաք Քրիստոսը» եւ Անոր ճշմարտութեան մասին, ուստի «թօթափեցէք ձեր նախկին վարքին վերաբերող հին մարդը» (Հմ. 22): Պօղոս նշեց, թէ ինչպէս է մեր հին բնոյթը որ «ապականուած է խաբեայ ցանկութիւններով»: Ան ըսաւ. «Նորոգուիք ձեր մտքին հոգիով, ու հագնիք նո՞ր մարդը, որ ստեղծուած է արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ Աստուծոյ պատկերին համաձայն» (Հմ. 22-24):

Ապա ան կը թուարէ՝ ապրելու նոր ուղիներ: Դադրիլ ստելէ: Դիմագրել զայրոյթ: Դադրիլ հայհոյելէ: Հրաժարիլ գողութենէ: Անոր փոխարէն «թող աշխատի՝ իր ձեռքերով գործելով ինչ որ բարի է, որպէսզի բան մը ուենայ տալու կարօտեալին» (Հմ. 28): Մեր նոր անձը Քրիստոսով՝ թոյլ կու տայ մեզի ապրիլ կեանքով մը, որ արժանի է մեր կոչումին, ենթարկուելով մեր Փրկիչին ցոյց տուած ուղիին:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, նորոգէ մեր բնոյթը այսօր, մինչ կը փորձենք աւելի նմանիլ քեզի: Ամեն:

Ի՞նչ կը նշանակէ քեզի համար հազերի նոր բնոյթը եւ ինչպէ՞ս կարելի է ձգտումը ունենալ՝ քալելու Յիսուսի ճանապարհով:

Ծնորհակա'լ եղեք Տերոջմով, որովհետեւ բարի է, որովհետեւ  
անոր կարեկութիւնը յաւիտենական է: [Սաղմ. 107. 1]

## ՅԻՆԳ ԼԱՒ ԲԱՆԵՐ

**Ա**ստ հետազօտութեան՝ մարդիկ, որոնք միտումնաւոր կերպով երախտապարտ են իրենց ունեցածին համար, կը նշեն որ աւելի լաւ կը քնանան, աւելի քիչ են հիւանդութեան ախտանիշերը եւ աւելի շատ երջանիկ են: Հոգեբանները նոյնիսկ կ'առաջարկեն, «երախտագիտութեան օրագիր» մը պահելու մեր բարեկեցութիւնը բարելաւելու համար՝ ամէն շաբաթ գրելով հինգ բաներ, որոնց համար երախտապարտ ենք:

Աստուածաշունչը՝ երկար ժամանակ մղած է երախտագիտութեան սովորութիւնը: Սկսած ճաշէն եւ ամուսնութենէն (Ա. Տիմ. 4. 3-5) մինչեւ արարչագործութեան գեղեցկութիւնը (Սաղմ. 104), Սուրբ Գիրքը կոչ ըրած է մեզի՝ տեսնելու նման բաներ, որպէս պարզեւներ եւ չնորհակալութիւն յայտնելու Տուողին՝ անոնց համար: Սաղմոս 107-ին մէջ թուարկուած են հինգ բաներ, որոնց համար իսրայէլը կրնար յատկապէս երախտապարտ ըլլալ. անապատէն ազատուիլը (Հմ. 4-9), գերութենէն ազատուիլը (Հմ 10-16), Գիւանդութիւններէն բուժուիլը (Հմ. 18-22), անվտանգ ծովուն վրայ նաւարկելը (Հմ. 23-32) եւ անոնց ծաղկումը ամայի երկրին մէջ (Հմ. 33-42): Սաղմոսերգուն կը կրկնէ. «Թող շնորհակալ ըլլան», որովհետեւ այս բոլորը Աստուծոյ «կարեկեցութեան» նշաններն են (Հմ. 8, 15, 21, 31):

Զեռքիդ տակ նօթատերը մը ունի՞ս: Ինչո՞ւ չգրել հինգ լաւ բաներ, որոնց համար այժմ չնորհակալ ես: Այդ կրնայ ըլլալ՝ այն ընթրիքը, որ դուն հիմա վայելեցիր, քու ամուսնութիւնդ, կամ իսրայէլի նման՝ Աստուծոյ փրկարար կէտերը քու կեանքիդ մէջ՝ մինչեւ այսօր: Շնորհակալ եղիր դուրսը երգող թոչուններուն համար, խոհանոցիդ անուշ հոտերուն համար, աթոռիդ հանգստաւետութեան համար, սիրելիններուդ մըմունջներուն համար:

**Աղօթք - Յայր Աստուած՝ երախտապարտ եմ ամեն լաւ բանի համար, որ Դուն բերած ես կեանքիս մէջ: Եւ ամենեն աւելի՝ շնորհակալ եմ քեզի համար: Ամէն:**

**Աստուածաշունչը՝ յաճախ մեզի կը յուշէ եւ կոչ կ'ընէ շնորհակալ ըլլալու: Ո՞ր հինգ լաւ բաներու համար կ'ուզես շնորհակալ ըլլալ այսօր:**

Վրդարներուն յաջողութեամբ՝ քաղաքը կը հրճուի: [Առ. 11. 10]

## ՅՐԵՈՒԱՆՔ ՔԱՂԱՔԻՆ ՄԷԶ

**Ե**րբ Ֆրանսա եւ Արժանթին հանդիպեցան 2022 թուականի ժութպոլի Աշխարհի Ախոյեանութեան եզրափակիչ խաղին համար, անհաւանական մրցում մըն էր, որը շատեր անուանեցին «Աշխարհի Ախոյեանութեան պատմութեան մէջ՝ մեծագոյն խաղը»: Երբ խաղը լրացաւ, յաւելեալ ժամանակ աւելցնելէ ետք արդիւնքը 3-3 էր եւ խումբերը պէտք էր տասնմէկ մեթրէն հարուածներ ընէին: Արժանթին յաղթական կօլը հարուածելէ ետք, ժողովուրդը բուռն խանդափարուեցաւ: Աւելի քան մէկ միլիոն Արժանթինցիներ խուրներամ հեղեղուած էին Պօյնէս Այրէսի (Buenos Aires) քաղաքի կեդրոնը: Անօթաչու թոչող սարքով առնուած նկարները, տարածուեցան ընկերային համացանցերուն վրայ՝ ցուցադրելով այս ազմկոտ եւ ուրախ տեսարանը: BBC-ի տեղեկատուութիւններէն մէկը՝ նկարագրեց թէ ինչպէ՞ս քաղաքը ցնցուեցաւ «ուրախութեան պայթումով»:

Ուրախութիւնը միշտ հիանալի պարգեւ մըն է: Առակները, սակայն, կը նկարագրեն թէ ինչպէ՞ս քաղաք մը, ժողովուրդ մը կրնան ուրախութեան փորձառութիւնը ունենալ, որ աւելի խոր է եւ շատ աւելի երկար կը տեսէ: Առակացը կ'ըսէ. «Արդարներուն յաջողութեամբ՝ քաղաքը կը հրճուի» (11. 10): Երբ անոնք, որոնք իսկապէս կ'ապրին՝ մարդկութեան համար Աստուծոյ ուենցած ծրագիրով, կը սկսին ազգել իրենց շուրջը եղող ժողովուրդին վրայ, ապա այս՝ նորութիւնը ցոյց կու տայ, քանի որ այդ կը նշանակէ, որ Աստուծոյ արդարութիւնը կը տիրէ: Ագահութիւնը կը նուազի: Աղքատները աջակցութիւն կը գտնեն: Ճնշուածները կը պաշտպանուին: Ամէն անգամ, երբ Աստուծոյ համաձայն ճիշդ ապրելակերպը կը ծաղկի, այդ պարագային՝ քաղաքին մէջ հրճուանք եւ «օրհնութիւն» կ'ըլլայ (Հմ. 11):

Աստուած կը հրաւիրէ մեզ ըլլալու՝ աշխարհը բուժելու իր աշխատանքին մէկ մասը եւ հրճուանք բերելու քաղաքին:

**Ալոթք - Սիրելի Աստուած**, կը խնդրեմ՝ օգնէ ինօհի միանալու թեզի, իրճուանք պատճառելու ուրիշներուն: Ամէն:

**Եթէ կը տեսնես քաղաքին մէջ ուրախութեան անհրաժեշտութիւնը, ինչպէ՞ս կրնաս այդտեղ բերել Աստուծոյ ուրախութիւնը:**

Ուրեմն թօթաբէնք խաւարին գործերը, ու հազնինք լոյսին զրահը: [Յօն. 13. 12]

## ՔՐԻՍՏՈՆԵ ՀԱԳԱԾ

**Ա**յնքան ոգեւորուած էի, երբ առաջին անգամ դրի նոր ակնօցներս, բայց ընդամէնը քանի մը ժամ անց ուզեցի զանոնք հանել ու նետել: Աչքերս կը ցաւէին եւ գլուխս կը դառնար՝ նոր թիւերուն պատճառով: Ականջներս կը ցաւէին անծանօթ շրջանակէն: Յաջորդ օրը, հառաչեցի՝ երբ յիշեցէ թէ, պէտք էր զանոնք դնէի: Սակայն ստիպուած եմ գործածել զանոնք ամէն օր, որպէսզի մարմինս յարմարի: Քանի մը շաբաթներ տեւեց, բայց անկէ յետոյ ես գրեթէ չնկատեցի, որ զանոնք դրած էի աչքերուս:

Որեւէ բան գնելը՝ կը պահանջէ ճշդում, բայց ժամանակի ընթացքին՝ մենք կածինք անոր մէջ եւ այդ մեզի աւելի կը յարմարի: Մենք նոյնիսկ կրնանք տեսնել այնպիսի բաներ, որոնք նախապէս չէինք տեսած: Հոռմայեցիներու 13-րդ դլուխին մէջ, Պօղոս առաքեալ հրահանգեց Քրիստոսի հետեւողներուն հազնիլ «Լոյսին զբահը» (Հմ. 12) եւ վարուիլ ճիշդ ապրելակերպով: Անոնք արդէն հաւատացած էին Յիսուսի, բայց կարծես «նիրհած» էին եւ աւելի իքնագոհ դարձած. պէտք ունէին «արթննալու», գործելու, վարվելու արժանապատիւ եւ հրաժարէին իրենց բոլոր մեղքերէն (Հմ. 11-12): Պօղոս խրախուսեց անոնց՝ հազնելու Յիսուսը եւ աւելի նմանելու Անոր՝ իրենց մտքերով եւ գործերով (Հմ. 14):

Մենք չենք սկսիր արտացոլացնել Տէր Յիսուսի սիրառատ,  
մեղմ, բարի, շնորհքով եւ հաւատարիմ ուղիները՝ մէկ գիշերուան  
մէջ։ Ամէն օր «լոյսի զբահը հագնիլը» ընտրելու գործընթաց է,  
նոյնիսկ երբ մենք չենք ուզեր, որովհետեւ այդ անյարմար է։  
Ժամանակի ընթացքին Ան կը փոխէ մեզ դէպի լաւը։

**Աղօթք - Step Յիսո՞ւս, շնորհակալ եմ Ձեզի, որ Դո՞ւն գիս կը փոխեն՝ օրէ օր: Ամէն:**

Ի՞նչ կը նշանակէ քեզի՝ Յիսո՞ւազ հագնիլ: Ինչպէ՞ս Սրբատոսի  
նման ըլլալ կիրառելը ժամանակի ընթացքին՝ աւելի  
յարմարաւէտ կը դառնայ:

Ուզո՞ղ պիտի տամ ժողովուրդին՝ իբր ուխտ, ...  
որպեսզի կոյուերուն աչքերը բանաս: [Ես. 42. 6-7]

## ՏԵՍՆԵԼՈՒ ԱՉՔԵՐ

**Ժ**ընէւել (Genevieve) պէտք էր ըլլար աչքեր՝ իր երեք երեխաներուն համար, որոնցմէ իւրաքանչիւրը ծնած էր բնածին ականքողով (cataract): Ամէն անգամ, երբ անոնց կը տանէր Արեւմտեան Ափրիկէի՝ Պէնին (Benin) Հանրապետութեան մէջ եղող իրենց գիւղը, ան կը կապէր փոքրիկ երեխան իր մէջքին եւ կը բռնէր երկու մեծերուն ձեռքը, միշտ ուշադիր ըլլալով վտանգին: Մշակոյթի մը մէջ՝ ուր կ'ենթադրուէր, որ կուրութիւնը եղած է կախարդութեամբ, Ժընէւել՝ յուսահատ աղաղակեց Աստուծոյ՝ օգնութեան համար:

Ապա՝ իր գիւղէն մարդ մը պատմեց իրեն «Գիթասրտութեան Նաւերու» ծառայութեան մասին, որ կարեւոր վիրահատութիւններ կ'իրականացնեն՝ յարգելու համար Յիսուսի՝ աղքատներուն յոյս բերելու եւ բժշկելու օրինակը: Անորոշ, թէ արդեօք անոնք կրնան օգնել, ան մօտեցաւ անոնց: Երբ երեխաները արթնցան իրենց վիրահատութենէն ետք, անոնք կը տեսնէին:

Աստուծոյ պատմութիւնը միշտ ալ եղած է՝ խաւարի մէջ պատուածներուն կողքին գալու եւ իր լոյսը բերելու մասին: Եսայի մարգարէն յայտարարեց, որ Աստուծած կ'ըլլայ «Հեթանոսներուն լոյսը» (Ես. 42. 6): Ան «կը բանայ կոյր աչքերը» (Հմ. 7) վերականգնելով՝ ո՛չ միայն ֆիզիքական տեսողութիւնը, այլեւ հոգեւոր տեսողութիւնը: Ան խոստացաւ «բռնել» իր ժողովուրդին ձեռքէն (Հմ. 6): Ան վերականգնեց տեսողութիւնը կոյրերուն եւ լոյս բերաւ խաւարին մէջ ապրողներուն:

Եթէ դուն կը զգաս, որ խաւարէն յաղթահարուած ես, կառչի՛ յոյսին, մինչ կ'ընդունիս մեր սիրառատ Հօր խոստումները միաժամանակ ինդրելով, որ Անոր լոյսը լուսաւորէ:

**Աղօթք** - Երկնաւոր Յա՛յր, Դուն կը ցանկաս, որ ո՛չ մէկը ապրի խաւարի մէջ: Տո՛ւր սէրդ անոնց, որոնք ինչ որ կերպ՝ կուրցած են, որպեսզի տեսնեն: Ամէն:

**Ինչպէ՞ն Աստուծած բացած է քու աչքերո՞ ֆիզիքապէս եւ հոգեպէս:** **Ինչպէ՞ն Ան կը հեռացնէ կուրութիւնը, որ դուն կրնաս ուենալ:**

Արօտները հօտերով կը ծածկուին, Եւ հովիտները՝ ցորենով:  
Անոնք ցնծութեամբ կը գոռան ու կ'երգեն: [Սաղմ. 65. 13]

## ԵՐԳՈՂ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԸ

**Յ**աճախ սիրալիր կը կատակեմ կեսուրիս հետ՝ շուներու հետ  
իր խօսելու կարողութեան մասին: Ան կը պատասխանէ  
անոնց հաջոցներուն՝ գորովալիր հասկացողութեամբ:  
Թերեւս հիմա՝ ան եւ ամէն տեղ շուներու տէրերը, նոյնպէս  
կը լսեն իրենց շուներուն ծիծաղները: Գիտնականները՝  
պարզած են, որ շատ կենդանիներ, այդ թիւին մէջ ըլլալով՝  
շուները, կովերը, աղուէսները, փոկերը (ծովահորթերը) եւ  
երկարապոջ թութակները, բոլորն ալ ունին «ձայնային խաղի  
ազգանշանները», որ յայտնի է որպէս ծիծաղ: Այս ուղեկցող  
չնչիւններու բացայայտումը կօգնէ զանազանելու կենդանիին  
խաղային վարքագիծը՝ այն բանէն, որ այլ կերպ կրնայ նմանիլ  
կոռուելու մարդկային դիտորդին:

Կենդանիներու ծիծաղի եւ ուրախութեան արտայայտումը,  
մեզի կու տայ հաճելի շող մը, թէ ինչպիսին կրնայ ըլլալ  
արարչագործութեան միւս մասները, Աստուած փառաւորել  
իրենց յատուկ ձեւերով: Երբ Դաւիթ թագաւոր նայեցաւ իր  
շրջապատին, իրեն թուաց որ «բլուրները խայտանքով կը  
գոտեւորուին» իսկ մարգագետիններն ու ձորերը «ցնծութեամբ  
կը գոռան ու կ'երգեն» (Սաղմ. 65. 12-13): Դաւիթ հասկցաւ, որ  
Աստուած հոգացած եւ հարստացուցած է երկիրը ապահովելով՝  
թէ գեղեցկութիւն եւ թէ սնունդ:

Թէեւ մեր ֆիզիքական շրջապատը բառացիօրէն չի «երգեր»,  
անոնք կը վկայեն Աստուծոյ գործնական աշխատանքին մասին  
Անոր արարչութեան մէջ եւ իրենց հերթին, կը հրաւիրեն մեզ  
փառաբանելու Անոր՝ մեր ձայններով: Թող որ մենք, որպէս «ամբողջ  
երկրի» մաս, «լեցուինք Անոր հրաշալիքներու ակնածանքով»  
եւ պատասխանենք իրեն «ուրախութեան երգերով» (Հմ. 8):  
Մենք կրնանք վստահիլ, որ Ան կը լսէ եւ կը հասկնայ անոնց:

**Աղօթք - Փառք թեզ, Աստուա՛ծ, ստեղծագործութեան մեջ՝**

**շարունակական աշխատանքի համար: Ամէն:**

**Ինչպէ՞ս մեր ֆիզիքական շրջապատը կը խրախուսէ մեզ**

**փառաբանելու զԱստուած: Ուրիշ ո՞ւր կը տեսնենք**

**Անոր ձեռքին գործը:**

Տերը կայնեցաւ անոր քով եւ ըսաւ. «ՔաջալերուԵ՛, Պօղո՞ս, որովհետեւ ինչպէս վկայեցիր ինծի համար Երուսաղեմի մէջ, ա՞յնպէս ալ պէտք է վկայես Հռոմի մէջ: [Գործը 23. 11]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԽԱՂԱՊՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

**Ն**որա (Nora) գնաց խաղաղ ցոյցի, քանի որ մտահոգ էր արդարութեան հարցով: Ինչպէս կը նախատեսուէր, ցոյցը լուռ էր: Ցուցարարները քալեցին լուռ քաղաքին կեղրոնք:

Յետոյ՝ երկու մարդակառքեր կանգնեցան: Գրգոհիչները եկան քաղաքի դուրսի մասսերէն: Շուտով խռովութիւն սկսաւ: Սրտցաւ՝ նորան հեռացաւ: Կը թուէր, թէ անոնց բարի մտադրութիւնները ապարդիւն էին:

Երբ Պօղոս առաքեալ այցելեց Երուսաղէմի տաճարը, մարդիկ՝ որոնք կը հակառակէին իրեն, տեսան անոր այնտեղ: Անոնք «Ասիայի գաւարէն էին» (Գործք 21. 27) եւ Յիսուսը կը համարէին՝ սպառնալիք իրենց ապրելակերպին: Պօղոսի մասին բամբասանքներ եւ սուտեր աղաղակելով՝ անոնք շատ արագ անհանգստութիւն յառաջացուցին (Հմ. 28-29): Ամբոխը, տաճարէն դուրս քաշեց Պօղոսի եւ ծեծեց: Զիոնորները վազելով եկան:

Երբ ձեռքակալեցին անոր, Պօղոս հարցուց Հռոմայեցի հրամանատարին, թէ արդեօք ան կրնա՞յ դիմել ամբոխին (Հմ. 37-38): Երբ թոյլատուութիւն տրուեցաւ, ան խօսեցաւ ամբոխին հետ՝ իրենց լեզուով, զարմացնելով անոնց եւ գրաւելով՝ անոնց ուշադրութիւնը (Հմ. 40): Եւ ճիշդ այդ պահուն, Պօղոս խռովութիւնը վերածեց՝ հնարաւորութեան, բաժնեկցելու մեռած կրօնքին փրկուելու իր պատմութիւնը (Հմ. 2-11):

Ոմանք կը սիրեն բռնութիւնն ու պառակտումը: Մի՛ կորսնցնէք սիրտ: Անոնք պիտի չյաղթեն: Աստուած կը փնտոէ խիզախ հաւատացեալներ որոնք պիտի ուզեն բաժնեկցիլ իր լոյսն ու խաղաղութիւնը՝ մեր յուսահատ աշխարհին հետ: Այն ինչ որ կը թուի ճգնաժամային, կրնայ ըլլալ մեր հնարաւորութիւնը ցոյց տալու մէկու մը Աստուծոյ սէրը:

**Աղօթք -** Սիրելի Յա՛ր, սիրտս կը ցալի՝ մեր կոտրածաշխարհին համար: Օգևէ՛ ինծի հասկնալու, որ թու Յոգիիդ Ներկայութիւնը շատ աւելի հզօն է, քան որեւէ յարձակում, որ աշխարհ կրնայ նետել վրաս: Ամէն: Կրնանք ճգնաժամի մէջ ըլլալ՝ որ հասկնալի չէ: Ի՞նչ կը խորիիս: Սուրբ Յոգին ինչպէ՞ս կրնայ օգնել՝ իմաստ գտնելու եւ գիտնալու

թէ ի՞նչ կարելի է ընել:

Երկիրը ամայի ու դատարկ էր, անդունդին մակերեսին վրայ խաւար կար, եւ Աստուծոյ Հոգին ջուրերուն մակերեսին վրայ կը սաւառնէր: [Ծն. 1. 2]

## ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԻ ԱՍՏՈՒԱԾՈՅ

**Ե**րկիրը ամայի ու դատարկ էր, անդունդին մակերեսին վրայ խաւար կար, եւ Աստուծոյ Հոգին ջուրերուն մակերեսին վրայ կը սաւառնէր: [Ծն. 1. 2]

Սէթ (Seth) առաւ բոլոր գեղերը, որոնք կրնար գտնել գեղերու պահարանին մէջ: Հասակ առած ըլլալով ընտանիքի մը մէջ, որ լեցուն էր կոտրուածութիւններով եւ անկարգութիւններով, անոր կեանքը խառնաշփոթ էր: Անոր մայրը պարբերաբար բռնութեան ենթարկուած էր՝ հօր կողմէ, մինչեւ որ հայրը ինքնասպան եղաւ: Այժմ Սէթ՝ կը ցանկար «Պարզապէս վերջ տալ» իր կեանքին: Բայց յետոյ՝ միտք մը ծագեցաւ թէ ո՞ւր պիտի երթար, երբ մեռնէր: Աստուծոյ շնորհքով՝ Սէթ չմեռաւ այդ օր: Եւ ժամանակի ընթացքին, ընկերոջ հետ Աստուծաշունչը լաւ ուսումնասիրելէ ետք, ընդունեց Տէր թիսուսը՝ որպէս իր Փրկիչը: Այն՝ որ Սէթին մզեց դէպի Աստուած, արարչագործութեան գեղեցկութիւնն ու կարգ ու կանոնը տեսնելն էր: Ան ըսաւ. «Ես կը տեսնեմ բաներ, որոնք պարզապէս գեղեցիկ են: Ինչ որ այս ամէնը՝ մէկը ստեղծած է»:

Ծննդոց 1-ին մէջ մենք կը կարդանք Աստուծոյ մասին, որ իսկապէս ստեղծած է բոլոր բաները: Եւ չնայած «երկիրը կատարեալ քառոս էր» (Հմ. 2), Ան կարդ ու կանոն բերաւ անկարգութենէն: Ան «բաժնեց լոյսը խաւարէն» (Հմ. 4), ցամաքը դրաւ ծովերուն մէջ (Հմ. 10), եւ բոյսեր ու արարածներ ստեղծեց՝ ըստ իրենց «տեսակներուն» (Հմ. 11-12, 21, 24-25): Ան, որ «ստեղծեց երկինքն ու երկիրը եւ ամէն ինչ իր տեղը դրաւ» (Ես. 45. 18), ինչպէս Սէթ յայտնաբերեց, կը շարունակէ՝ խաղաղութիւն եւ կարգ կանոն հաստատել Քրիստոսին յանձնուած կեանքերուն մէջ: Խնդրենք Աստուծմէ, որ օգնէ մեզի գտնելու գեղեցկութիւնն ու կարգը, որը միայն Ան կու տայ:

**Աղօթք - Արարիչ Աստուած**, շնորհակալութիւն խաղաղութեան եւ կարգի համար, որը միայն Դուս կընաս ապահովէլ: Ձու մէջ՝ կոտրած իրերը գեղեցիկ կը դառնան: Ամէն:

**Քառսային վիճակներու մէջ կրնանք ըլլալ.** սակայն Աստուած կ'օգնէ մեզի կարգ ու կանոն եւ խաղաղութիւն հաստատելու իրմով:

Նախ խնդրեցԵ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը: [Մատթ. 6. 33]

## ԱՍՏՈՒՅԾ ԳԻՏ ՄԵՐ ԿԱՐԻՔՆԵՐԸ

**Մ**անիլայի (Manila) մէջ՝ հասարակական փոխադրային միջոցի վարորդ Լանտօն (Lando), սուրճ խմեց ճամբուն եղբին եղող կրպակին մօտ: Ամէնօրեայ ուղեւորները արդէն շատցած էին Պատառութ համաճարակի պատճառով եղած արգելափակումէն ետք: Իսկ մարզական միջոցառումները այսօր կը նշանակեն աւելի շատ ուղեւորներ խորհեցաւ ան: Հետեւաբար կը վերագտնեմ կորսնցուցած եկամուտս եւ դադրիլ անհանգստանլէ:

Ան կը պատրաստուէր սկսիլ ինքնաշարժը վարելու, երբ նկատեց Ռոռնին՝ (Ronnie) մօտը եղող նատարանին վրայ նստած: Փողոց աւլողը՝ անհանգիստ տեսք մը ունէր եւ կարծես խօսելու կարիքը ունէր: Բայց իւրաքանչիւր վայրկեան կարեւոր է, մտածեց Լանտօն: Որքան շատ ուղեւորներ, այնքան աւելի շատ եկամուտ: Ես չեմ կրնար ուշանալ: Բայց ան զգաց, որ Աստուած կը ցանկար, որ ան մօտենայ Ռոռնին եւ այդպէս ալ ըրաւ:

Յիսուս հասկցաւ թէ որքա՞ն դժուար է չանհանգստանալը (Մատթ. 6. 25-27), ուստի Ան կը վստահեցնէ, որ մեր երկնաւոր Հայրը գիտէ ճիշդ ինչի պէտք ունինք (Հմ. 32): Մեզի կը յիշեցնէ՝ որ չանհանգստանանք, այլ վստահինք իրեն եւ նուիրուինք՝ ընելու այն, ինչ որ ինք կը ցանկայ, որ մենք ընենք (Հմ. 31-33): Երբ մենք կ'ընդունինք եւ կը հնազանդինք իր նպատակներուն, մենք կրնանք վստահ ըլլալ, որ մեր Հայրը, որ «կը հագուեցնէ դաշտի խոտը, որ այսօր կայ, եւ վաղը փուռը կը նետուի» կ'ապահովէ մեզի պէտք եղածը՝ իր կամքին համաձայն, ճիշդ այնպէս՝ ինչպէս

Ռոռնիի հետ Լանտօի զրոյցին պատճառով՝ փողոց աւելողը աղօթե՛ց եւ դարձաւ Յիսուսի: Լանտօն ըսաւ. «Եւ Աստուած տակաւին բաւականաչափ ուղեւորներ ապահովեց այդ օր եւինծի յիշեցուց, որ իմ կարիքներս իր մտահոգութիւնն էին, իմս՝ պարզապէս հետեւիլ է իրեն»:

**Աղօթը** - Սիրելի Յա՛յր, անհանգստանալու կարիք չունիմ, քանի որ Դո՛ւն խոստացած ես հոգ տանիլ եւ ապահովել ինծի համար: Ամեն:

Անհանգստութիւններ կը ծանրարան մեր վրայ, սակայն  
կարեւոր է մեր բոլոր հոգերը Աստուծոյ յանձնել:

Երբ երթամ եւ տեղ պատրաստեմ ծեզի, դարձեալ  
պիտի գամ ու քովս ընդունիմ ծեզ: [Յովի. 14. 3]

## ՏՈՒՆԸ ՅԻՍՈՒՄԻ ՀԵՏ

«Տան նման տեղ չկայ», կ'ըսէ Տօրօթին (*Dorothy*)՝ սեղմելով իր  
կարմիր գոյնով սուտակ (*ruby*) հողաթափերուն կրունկները:  
«Օզի Կախարդը» (*The Wizard of Oz*) Փելմին մէջ՝ միայն  
այդ պէտք էր, որ Տօրօթին եւ Թօթօն (*Toto*) կախարդական  
ճանապարհով տեղափոխէին իրենց տունը՝ Գանսասի (Kansas) մէջ:

Դժբախտաբար, չկան բաւարար սուտակ հողաթափեր  
բոլորին համար: Թէեւ շատեր Տօրօթին նման տան կարօտը  
ունին, գտնել այդ տունը որպէս պատկանելու տեղ մը, երբեմն  
աւելի դիւրին է ըսել, քան ընել:

Շատ շարժունակ, անցողիկ աշխարհի մէջ ապրելու  
հետեւանքներէն մէկը՝ անջատուած ըլլալու զգացումն է.  
մտածել՝ թէ արդեօք մենք երբեւէ կը գտնենք տեղ մը, ուր  
մենք իսկապէս կը պատկանինք: Այս զգացումը կրնայ նաեւ  
ցոլացնել աւելի խոր իրականութիւն մը, որը արտայայտած է Գ.  
Ս. Լուիս (*C. S. Lewis*). «Եթէ ես իմ մէջս կը գտնեմ ցանկութիւն,  
որ այս աշխարհի մէջ ո՛չ մէկ փորձ չի կրնար բաւարարել,  
ամենահաւանական բացարութիւնը այն է, որ ես ստեղծուած  
եմ այլ աշխարհի մը համար»:

Խաչին նախորդող գիշերը, թիսուս վստահեցուց իր  
ընկերներուն այդ տան մասին ըսելով. «Շատ բնակարաններ  
կան իմ Հօրս տան մէջ. եթէ այդպէս չըլլար, միթէ պիտի ըսէի՞  
ձեզի թէ կ'երթամ՝ որ տեղ պատրաստեմ ձեզի» (Յովկ. 14. 2):

Մենք ալ հիմա կրնանք տակաւին մեր տունը ըլլալ: Մենք  
ընտանիքի մը մէկ մասն ենք՝ Աստուծոյ եկեղեցին եւ մենք  
կ'ապրինք համայնքի մը մէջ՝ մեր եղբայրներուն եւ քոյրերուն  
հետ: Մինչեւ այն օրը, երբ թիսուս մեզ տանի այն տունը,  
որուն կը փափաքինք, կրնանք ապրիլ Անոր խաղաղութեան եւ  
ուրախութեան մէջ: Մենք միշտ տունն ենք՝ իր հետ:

**Աղօթք** - Սիրոյ եւ շնորհիքի Յա՛յր, օգնէ ինծի յառաջ նայելու՝ Զեզի  
հետ տուևնը ըլլալու, Չու ներկայութեանդ մէջ: Ասէն:  
Ի՞նչն է որ մեզի տուն ըլլալու զգացումը կու տայ: Մինչ կ'ապրինք  
այս աշխարհի վրայ, Տեր Յիսուսը ճանչեալով՝ մենք յաւիտեան  
իր հետ ըլլալու վիճակին մէջ կ'ըլլակը:



Կ'աղաքե՛մ ծեզի, որ ծեր ընթացքը արժանավայել ըլլայ  
այն կոչումին՝ որով կանոնացաք: [Եփ. 4. 1]

## ՊԱՏՐԱՍՏ ԵՐԹԱԼՈՒ ԱՍՈՒՇՈՅ ՀԱՄԱՐ

«Թագնուած Գործիչներ» գիրքը կը պատմէ ծան Կլէննի (John Glenn) դէպի տիեզերք իր թոփչքի նախապատարաստութեան մասին: Համակարգիչները նոր յայտնագործուած էին 1962 թուականին, որոնք ենթակայ էին խանգարումներու: Կլէնն չէր վստահեր անոնց ու կ'անհանգստանար մեկնարկի հաշուարկներով: Ան գիտէր, որ ետեւի սենեակին մէջ կար խելամիտ կինը, որ կրնար թուարկել: Ան կը վստահէր անոր ու ըսաւ. «Եթէ ան կըսէ, որ թիւերը լաւ են, ես պատրաստ եմ երթալու»:

Գաթրին ծանսըն (Katherine Johnson) ուսուցչուհի եւ երեք երեխաներու մայր էր: Ան կը սիրէր Ցիսուսի եւ կը ծառայէր իր եկեղեցիին մէջ: Աստուած օրհնած էր Գաթրինին՝ ուշագրաւ մտքով մը: NASA-ն խնդրեց իրմէ 1950-ականներու վերջաւորութեան, որ օգնէ տիեզերեկան ծրագրին: Ան Կլէննի այսպէս ըսած «խելամիտ կինն» էր՝ «մարդկային համակարգիչներէն» մէկը, որ անոնք վարձած էին այդ ժամանակ:

Մենք կրնանք կոչումը չունենալ փայլուն մաթեմաթիկոսները ըլլալու, բայց Աստուած մեզ կը կանչէ՝ այլ բաներու համար: «Մեզէ իւրաքանչիւրին շնորհք տրուած է՝ Քրիստոսի պարգևելին չափին համեմատ» (Եփ. 4.7): Մենք պէտք է «ապրինք կեանքով մը, որ արժանի է կոչումի», որը մենք ստացած ենք (Հմ. 1): Մենք մէկ մարմինի մը մէկ մասն ենք, ուր «իւրաքանչիւր անդամ իր գործը կ'ընէ» (Հմ. 16):

Գէթրին ծանսընի հաշուարկները հաստատեցին ընթացքին յետնագիծը: Կլէննի՝ ուղեծիր դուրս գալը, նման էր «նետը իր ճիշդ տեղը զառնելու»: Բայց այս Գէթրինի կոչումներէն մէկն էր միայն: Յիշենք, որ ան նաեւ մայր, ուսուցիչ եւ եկեղեցիին մէջ ծառայող մըն էր: Մենք կրնանք մենք մեզի հարց տալ, թէ Աստուած ի՞նչ բանի համար կանչած է մեզ՝ մեծ կամ փոքր: Արդեօք մենք «Պատրաստ ենք» գործադրելու Անոր շնորհները:

**Աղօթք - Սիրելի Դա՛յր, օգնէ իսծի ընդունելու ա՛յն, ինչ որ տուած ես ու ապրելու թու կոչումի արժանի կեանքով: Ամեն:**

**Ի՞նչ ընելու համար Աստուած կանչած է քեզ: Ինչպէ՞ս քեզի շնորհըներ տուած է:**

Ճամբայ կայ՝ որ մարդուն ուղիղ կը թուի, բայց անոր վերջաւորութիւնը մահուան ճամբան է: [Առ. 14. 12]

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐԸ՝ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ

**Հ**ովիւ Տամեանի (*Damian*) ժամանակացոյցը կը ներառէր հիւանդանոցի այցելութիւններ՝ մահամերձ երկու չոփիներու, որոնք ընտրած էին կեանքի երկու տարբեր ուղիներ: Հիւանդանոցի մը մէջ կին մը կար սիրուած իր ընտանիքէն. անոր անձնուրաց հանրային ծառայութիւնը՝ զինք սիրելի անձ մը դարձուցած էր շատերու համար: Ուրիշ Յիսուսի հաւատացողներ՝ հաւաքուած էին անոր շուրջ եւ պաշտամունքով, աղօթքով եւ յոյսով լեցուած էր սենեակը: Ուրիշ հիւանդանոցի մը մէջ՝ մահամերձ էր նաեւ չովիւ Տամեանի եկեղեցիի անդամի մը ազգականը: Անոր կարծրացած սիրտը՝ կը տանէր զինք դէպի դժուար կեանքի եւ անոր խեղճ ընտանիքը կ'ապրէր անոր վատ որոշումներուն եւ սիսալ արարքներուն հետեւանքով: Երկու մթնոլորտի տարբերութիւններ կ'արտացոլային այն հակադրութիւնները, թէ ինչպէ՞ս ապրած էր իւրաքանչիւրը:

Անոնք, որոնք չեն կրնար մտածել՝ թէ ո՞ւր կ'ուղուին կեանքի մէջ, յաճախ կը յայտնուին անհանգիստ, անցանկալի ու միայնակ վայրերու մէջ: Առակաց 14. 12-ին մէջ կը նշուի, որ «ճամբայ կայ՝ որ մարդուն ուղիղ կը թուի, բայց անոր վերջաւորութիւնը մահուան ճամբան է»: Երիտասարդ թէ տարեց, հիւանդ կամ առողջ, հարուստ կամ աղքատ, տակաւին ուշ չէ՝ վերանայելու մեր ուղիին: Ո՞ւր պիտի տանի մեզ: Արդեօ՞ք կը պատուէ զԱստուած: Արդեօ՞ք կ'օգնէ կամ կը խանդարէ ուրիշներուն: Արդեօ՞ք այդ լաւագոյն ճամբան է Յիսուսի հաւատացողներուն համար:

Աստուած կ'օգնէ մեզի՝ կատարելու լաւագոյն ընտրութիւնները, երբ դիմենք իրեն՝ իր Որդիին՝ Յիսուսի միջոցով, որ ըսաւ. «Եկէ՛ք ինձի ... եւ ես պիտի հանգստացնեմ ձեզ» (Մատթ. 11. 28):

**Աղօթք - Սիրելի Յիսուս, Դուն ես կեանքի աղքիւրը: Տո՛ւր ինձի քաջութիւնն ու ուժը՝ կեանքս թեզի յանձնելու եւ ընելու այն, ինչ որ կը պատուէ թեզ: Ամէն:**

**Ի՞նչ բան մեզի արգելը կը հանդիսանայ որ Աստուծմէ օգնութիւն եւ քաջութիւն խնդրենք:**

Անոնց համար ես նման եի անոր, որ կը բարձրացնէ փոքրիկ երեխան դեպի այտը: [Ով. 11. 4]

## ԱԱՍՈՒՇՈՅ ՔՆՔՈՒՇ ՍԷՐԸ

**2017 թուականի տեսանիւթի մը մէջ կը տեսնուի հայր մը, որ կը հանգստացնէ իր երկու ամսական որդին, մինչ երեխան կը ստանայ սովորական պատուաստները: Միջազգային ուշադրութիւն գրաւեց, թէ ինչպէս է՝ այս հօր սէրը իր փոքր երեխային հանդէպ: Երբ հիւանդապահը աւարտեց պատուաստումները, հայրը քնքշութեամբ մօտեցուց որդին իր այտին, եւ մանուկը շուտով դադրեցուց իր լացը: Զկայ ասկէ աւելի յուսադրող բան մը, քան սիրող ծնողի մը քնքուշ հոգատարութիւնը:**

Աստուածաշունչին մէջ կան շատ գեղեցիկ նկարագրութիւններ Աստուծոյ մասին՝ որպէս սիրող ծնող. պատկերներ, որոնք կը վկայեն իր զաւակներուն հանդէպ Աստուծոյ ունեցած խոր սիրոյ մասին: Հին Կտակարանի Ովսիա մարգարէին պատգամ մը տրուեցաւ փոխանցելու Հիւսիսային թագաւորութեան մէջ ապրող հսրայէլացիներուն բաժնուած թագաւորութեան ժամանակ: Ան կոչ ըրաւ անոնց՝ վերագառնալու Աստուծոյ հետ յարաբերութեան: Ովսէն յիշեցուց հսրայէլացիներուն՝ իրենց հանդէպ Աստուծոյ ունեցած սիրոյ մասին, քանի որ ան կը պատկերացնէր Աստուած՝ որպէս հեզ Հայր. «Երբ հսրայէլ մանուկ էր զինք կը սիրէի» (Ով. 11. 1) եւ «Անոնց համար ես նման էի անոր, որ կը բարձրացնէ փոքրիկ երեխան դէպի այտը» (Հմ. 4):

Աստուծոյ սիրալիք հոգատարութեան այս նոյն յուսագրող խոստումը՝ ճշմարիտ է մեզի համար ալ: Անկախ անկէ, թէ մենք կը փնտռենք Անոր քնքուշ խնամքը՝ շրջանէ մը ետք, երբ մերժած ենք Անոր սէրը, կամ մեր կեանքին մէջ ցաւի եւ տառապանքի պատճառով, Ան մեզ իր զաւակները կ'անուանէ (Ա. Ցովչ. 3. 1) եւ Անոր միմիթարիչ բազուկները բաց են մեզ ընդունելու համար (Բ. Կորնթ. 1. 3-4):

**Աղօթք - Երկնաւոր Յա՛յր, շնորհակալութիւն, որ Դուն զիս Ձու զաւակր կ'անուանես եւ քնքուշ հոգատարութիւն կը ցուցաբերես, Երբ կը վագեմ Ձու մօտդ: Ամէն:**

**Աստուած իր մեծ սիրով մեր հոգատար Յայրն է. ուստի մեր բոլոր մտահոգութիւններն ու ցաւերը իրեն բերե՞նք այսօր:**

Չորրորդ օրը՝ Օրինութեան հովիտը  
հաւաքուեցան: [Բ. Մսաց. 20. 26]

## ՓԱՌԱՔԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՎԻՏԸ

**Բ**անաստեղծ՝ Ուկլյըմ Քուբըր (William Cowper) իր կեանքի մեծ մասը պայքարեցաւ ճնշուածութեամբ: Անձնասպանութիւն փորձելէ ետք զինք տեղափոխեցին ապաստանարան մը: Հո՞ն՝ Քրիստոնեայ բժիշկի մը հոգածութեամբ, Քուբըր ջերմ ու կենսական հաւատք ունեցաւ Յիսուսի հանդէպ: Շուտով Քուբըր ծանօթացաւ հովիւ եւ հոգեւոր երգերու հեղինակ՝ ձան Նիութընի (John Newton), որ խրախուսեց զինք իր հետ համագործակցելու եւ աշխատելու իրենց եկեղեցին համար իր պատարաստած հոգեւոր երգին վրայ: Քուբըրի գրած հոգեւոր երգերու շարքին է, «Աստուած կը Շարժի Խորհրդաւոր Կերպերով», որ կը պարունակէ խօսքեր, որոնք կու գան իր անցեալի փորձառութեան խառնարանէն. «Քու սուրբերդ, թարմ քաջութիւն կը ստանան, ամպերը՝ որոնցմէ դուն կը սարսափիս, մեծ են ողորմութեամբ եւ օրհնութիւններ կը թափեն գլուխիդ վրայ»:

Ինչպէս Քուբըր, Յուղայի ժողովուրդը նոյնպէս՝ անսպասելիօրէն հանդիպեցաւ Աստուծոյ բարութեան: Երբ զօրքերու դաշնակցութիւն մը ներխուժեցին անոնց վրայ, Յովսափատ թագաւորը հաւաքեց ժողովուրդին աղօթքի համար: Երբ Յուղայի բանակը դուրս եկաւ, առաջին շարքերուն մէջ գտնուող տղամարդիկ՝ փառաբանեցին Աստուծոյ (Բ. Մսաց. 20. 21): Յարձակող բանակը շրջեցաւ ինք իր վրայ ու զիրար կոտորեց ու «ո՛չ մէկը ազատած էր: ... Աւարը երեք օր հաւաքեցին, որովհետեւ յոյժ շատ էր» (Հմ. 24-25): Չորրորդ օրը, այդ նոյն վայրը, ուր թշնամիին ներխուժող ուժը հաւաքուեցաւ Աստուծոյ ժողովուրդին դէմ, կոչուեցաւ Պէրաքահ (Berakah) (Հ. 26), որ տառացի կը նշանակէ «Օրհնութեան Հովիտը» կամ «Օրհնութիւն»: Ինչպիսի փոփոխութիւն: Աստուծոյ ողորմութիւնը կրնայ նոյնիսկ մեր ամենազժուար հովիտները վերածել՝ գովաբանութեան վայրերու, երբ մենք Աստուծոյ կը յանձնենք ամէն բան:

**Աղօթք** - Սիրոյ Աստուած, փառք կու տամ քեզի, որ քու սէրէդ աւելի խոր հովիտ չկայ: Ամէն:

**Աստուած բարիքներ կը բերէ մեր կեանքի դժուարութիւններուն մէջ: Ուստի՝ Կ'արժէ շնորհակալ ըլլալ իրեն:**

Հետամուտ եղեք խաղաղութեան՝ բոլորին հետ: [Եք. 12. 14]

## ԸՆՏԱՆԻՔԸ ԿԱՐԵՒՈՐ Է

**Փ**ոյրս, եղբայրս եւ ես, տարբեր նահանգներէն՝ տարբեր թոփչքներու վրայ ելանք՝ մեր հօրեղբօր յուղարկաւորութեան ներկայ ըլլալու համար եւ կանգ առինք տեսնելու մեր ինխուուն տարեկան մեծմայրիկը: Ան կաթուածահար եղած էր, կորսնցուցած էր խօսելու կարողութիւնը եւ կրնար գործածել միայն իր աջ ձեռքը: Երբ կայնած էինք անոր անկողինին շուրջ, երկարեց այդ ձեռքը եւ բոնեց մեր ձեռքերէն իւրաքանչիւրը եւ մէկը միւսին վրայ իր սրտին գրաւ ու շոյեց: Այս անխօս շարժուձեւով՝ մեծմայրս խօսեցաւ մեր կոտրուած եւ հեռաւոր յարաբերութիւններուն մասին: «Ընտանիքը կարեւոր է»:

Աստուծոյ ընտանիքին՝ եկեղեցին մէջ, մենք նոյնպէս կրնանք իրարմէ բաժնուիլ: Մենք կրնանք թոյլ տալ, որ դառնութիւնը մեզ իրարմէ բաժնէ: Երբայեցիս գիրքին՝ հեղինակը կ'ակնարկէ այն դառնութեան, որ բաժնեց Եսաւը՝ իր եղբայրէն՝ Յակոբէն (Եք. 12. 16) եւ մեզ՝ որպէս եղբայրներ եւ քոյրեր, կո՛չ կ'ընէ կառչելու իրարու՝ Աստուծոյ ընտանիքին մէջ: «Հետամուտ եղէք խաղաղութեան՝ բոլորին հետ» (Հմ. 14): Այստեղ ըսոււած հետամուտ եղէք խօսքը, կը ներկայացնէ կանխամտածուած եւ վճռական ներդրում Աստուծոյ ընտանիքի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ՝ խաղաղութիւն հաստատելու համար: Իւրաքանչիւր նման ջանք՝ այնուհետեւ կը կիրառուի բոլորին նկատմամբ: Ամէնուն: Մէկ:

Ընտանիքը կարեւոր է: Թէ մեր երկրային ընտանիքները եւ թէ ալ Աստուծոյ հաւատացողներուն ընտանիքները: Կրնա՞նք բոլորս ներդնել այն ջաքերը, որոնք անհրաժեշտ են զիրար ամուր պահելու համար:

**Աղօթք - Սիրելի Յայր, շնորհակալ եմ, որ զիս դէպի քէ՛զ կը քաշես: Օգևէ ինծի որ հետամուտ ըլլասմ՝ քու ըստանիքիդ բոլոր անդամներուն հետ խաղաղ ապրելու: Ամէն:**  
**Ի՞նչ կը նշանակէ «հետամուտ ըլլալ խաղաղութեան» Աստուծոյ ընտանիքին մէջ: Արդեօք կա՛յ մէկը, որուն հետ հաշտուելու ենք:**

Ստութեան հացը մարդուն ախորժելի է, բայց վերջաւորութեան՝ անոր բերանը խիճով պիտի լեցուի: Առ. 20. 17]

## ԳՈՂՑՈՒԱԾ ՔԱՂՑՐԵԴԵՆԻ ԴԱՌՆՈՒԹԻՒՆ

**Գ**երմանիայի մէջ՝ գողեր գողցան՝ աւելի քան քսան թօն տուրմով լեցուն բեռնատարի սառնարանային կցասայլը: Գողցուած քաղցրեղէնի գնահատուած արժէքը՝ 80,000 տոլար էր: Տեղական ոստիկանութիւնը խնդրեց բոլորէն, որ եթէ մէկը առաջարկէ մեծ քանակութեամբ տուրմ՝ ոչ աւանդական միջոցներով, անմիջապէս տեղեկացնել այդ մասին: Վատահ՝ անոնք որոնք գողցած են հսկայական քանակութեամբ քաղցրեղէնի, պիտի դիմագրաւեն դառն հետեւանքներ, եթէ անոնք բռնուին ու հետապնդուին:

Առակները կը հաստատեն այս սկզբունքը. «Ստութեան հացը մարդուն ախորժելի է, բայց վերջաւորութեան՝ անոր բերանը խիճով պիտի լեցուի» (20. 17): Այն ինչ որ մենք ձեռք կը բերենք խարէութեամբ կամ սխալ ձեւով, սկզբը կրնայ քաղցր թուիլ մեզի համար համեմուած գրգռութիւնով եւ ժամանակաւոր հաճոյքով: Բայց համը ի վերջոյ կը կորսուի եւ մեր խարէութիւնը պիտի տանի այնտեղ, ուր մենք կը մնանք կարիքաւոր եւ դժուարութեան մէջ: Յանցանքի, վախի եւ մեղքի դառն հետեւանքները կրնան փճացնել մեր կեանքն ու հեղինակութիւնը: «Նոյնիսկ մանուկի մը արարքներէն կը հասկցուի անոր վարքին մաքուր եւ ուղիղ ըլլալը» (Հմ. 11): Թող մեր խօսքերն ու արարքները բացայայտեն Աստուծոյ համար մաքուր սիրտ, ոչ թէ եսասիրական ցանկութիւններու դառնութիւն:

Երբ կը փորձուինք, եկէ՛ք խնդրենք Աստուծմէ, որ զօրացնէ մեզ եւ օգնէ հաւատարիմ մնալու իրեն: Ան կրնայ օգնել մեզի՝ նայելու փորձութեան տեղի տալու կարճամկէտ «քաղցրութենէն» անդին եւ առաջնորդելու մեզ, որ ուշադիր նկատի առնելու երկար ժամկէտ հետեւանքներուն:

**Աղօթք - Սիրելի Աստուած, ուժիո պէտք ուսիմ՝ պայքարելու համար փորձութեան դէմ եւ հաւատարիմ մնալու թեզի: Ամէն: Փորձութիւնը՝ դառն հետեւանքներու կը տանի. ո՞ւստի կարեւոր է հաւատարիմ մնալ Աստուծոյ:**

Երեքպատիկ դերձանը դիւրին չի փրթիր: [Ժող. 4. 12]

## ՅԱՄԱՅՆՔ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՋ

«Դիտէի թէ յաջողութեան հասնելու միակ ճամբան՝ տունը, կինս, որդիս եւ դուստրս մոռնալ է», ըսաւ Ճօրտըն (Jordon): «Հասկցայ թէ չեմ կրնար ընել այդ բանը: Անոնք հիւսուած են սիրտիս եւ հոգիիս մէջ»: Մինակ հեռաւոր շրջանին մէջ Ճօրտըն կը մասնակցէր հեռուստացոյցային իրական ծրագիրի մը, ուր մրցումին մասնակցողները հնարաւոր եղածին չափ՝ գոյատեւելու են դուրսը՝ նուազագոյն պաշարներով: Մրցումէն հրաժարելու պատճառը գորչ արջերը չէին, ոչ ալ ցուրտ ջերմաստիճանը, վիրաւորուիլը չէր, ոչ ալ անօթութիւնը, այլ ճնշող միայնակութիւնը եւ ընտանիքին հետ ըլլալու ցանկութիւնը:

Մենք կրնանք ունենալ անապատի համար անհրաժեշտ գոյատեւման հմտութիւնները, բայց համայքէն բաժնութիւր, ձախողելու հաստատ ճամբան է: Ժողովողի գիրքին իմաստուն հեղինակը ըսաւ. «Երկուքը մէկէն լաւ է, ... քանի որ եթէ իյնան, մէկը ընկերակիցը կը վերցնէ» (4. 9-10): Քրիստոսի յարգող համայնքը, նոյնիսկ իր բոլոր խառնաշփոթութեամբ, կարեւոր է մեր ծաղկման համար: Մենք առիթը չունինք այս աշխարհի փորձութիւններուն դէմ, եթէ փորձենք ինքնուրոյն յաղթահարել անոնց: Մէկը, որ մինակը կը տքնի, ի գուրք կը տանջուի (Հմ. 8): Առանց համայնքի, մենք աւելի ենթակայ ենք վտանգի (Հմ. 11-12): Ի տարբերութիւն մէկ թելի, «Երեքպատիկ գերձանը դիւրին չի փրթիր» (Հմ. 12): Սիրող՝ Քրիստոսակեղրոն համայնքի պարզեւը այն է, որը ոչ թէ միայն կը քաջալերէ, այլեւ մեզի ուժ կու տայ բարգավաճելու՝ հակառակ դժուարին իրավիճակներուն: Մենք իրարու պէտք ունինք:

**Աղօթք** - Յա՛յր շնորհակալ եմ համայնքի պարզեւին համար: Բա՛ց սիրտս սիրելու եւ ուրիշներու հետ ժամանակ անցընելու համար: Ամեն հեքէ՞ն կարելի է պարտաւորուիլ ժամանակ անցընելու համար: Ամեն հաւատացեալներու ընտանիքին հետ, յիշելով որ մեր շրջապատին մէջ կա՛ն մարդեր, որոնք մեկուսացած են եւ կարիքաւոր:

Այս բաները խօսեցայ ձեզի, որպեսզի խաղաղութիւն ունենաք ինձմով: [Ա. Յովի. 16. 33]

## ՅԻՍՈՒՍԻ ճՇՄԱՐԻՏ ԽԱՂԱՂԱՐԱՐԸ

**Դ**եկտեմբեր 30, 1862-ին, սկսաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքացիական կատաղի պատերազմը: Միութեան եւ Համադաշնակցութեան զօրքերը՝ չուրջ եօթը հարիւր մեթր հեռաւորութեամբ՝ դէմ դիմաց բանակցեցան, Թէնըսիի Սթօնզ (Tennessee Stones) գետին հակառակ կողմերուն վրայ: Երբ անոնք կը տաքնային խարոյկին մօտ, Միութեան զինուորները վերցուցին իրենց ջութակներն ու շրթնակերգէնոնները (harmonica) ու սկսան նուագել «Եանգի Տուտըլ» (Yankee Doodle): Ի պատասխան՝ Համադաշնական էր, որ երկու կողմերն ալ միացան եզրափակումին՝ նուագելով «Տուն, Քաղցր Իմ Տուն» (Home, Sweet Home): Երթուեալ թշնամիները բաժնեկցեցան երաժշտութիւն, մութ գիշերուան մէջ՝ աներեւակայելի խաղաղութեան չողեր: Մեղեդային զինուագարը, սակայն, կարծ տեւեց: Յաջորդ առաւօտ անոնք վար դրին ջութակները ու վերցուցին իրենց հրացանները եւ 24,645 զինուոր մեռաւ:

Խաղաղութիւն ստեղծելու մեր մարդկային ջանքերը՝ անխուսափելիօրէն կը մաշին: Ռազմական գործողութիւնները կը դադրին վայրկեան մը, միայն թէ կը բռնկին ուրիշ տեղ մը: Յարաբերական մեր վէճը՝ ներդաշնակութիւն կը գտնէ, սակայն ամիսներ ետք՝ դարձեալ կը ներքաշուկ նեղութեան մէջ: Աստուածաշունչը կ'ըսէ մեզի, որ Աստուած մեր միակ վստահելի խաղաղաբարն է: Յիսուս՝ այդ ճշմարտութիւնը պարզ կերպով ըսաւ. «Խաղաղութիւն ունենաք ինձմով» (16. 33): Մենք խաղաղութիւն ունինք ծիսուսի մէջ: Մինչ կը մասնակցինք Անոր խաղաղաբար առաքելութեան, Աստուծոյ հաշտութիւնն ու վերանորոգութիւնն է, որ հնարաւոր կը դարձնէ իրական խաղաղութիւնը:

Թէեւմեր ջանքերը յաճախապարդիւն են, մերսիրող Աստուածը խաղաղութիւն կը հաստատէ այս ցասկոտ աշխարհին մէջ:

**ԱՊՈԹՔ - Սիրող Դա՛յր, կը իսլորէ՛՛ ցոյց տուլո իսծի խաղաղութեան ճամբան: Ամէն:**

**Ո՞ւր կը տեսնէք, որ մարդիկ կ'աշխատին յանուն խաղաղութեան: Սակայն ինչո՞վ կը տարբերի Աստուծոյ խաղաղութիւնը:**

Ո՞վ որ Աստուծմէ ծնած է կը յաղթէ աշխարհի: [Ա. Յովհ. 5. 4]

## ՅԱՒԱՏՔՈՎ ՅԱՂԹԱՆԱԿ

**Ա**յսօր՝ պատմութիւնը կը փաստէ թէ քաղաքական, ռազմական եւ տնտեսական ուժով կարելի է յաղթանակներ արձանագրել, հողեր գրաւել եւ կայսրութիւններ հիմնել: Անցեալ դարերու պատմութեան էջերուն մէջ՝ շատ օրինակներ կան, որ ռազմական ուժով ու դիւանագիտութեամբ՝ կարելի եղած է յաջողութիւններ արձանագրել ու նուաճումներ ընել: Կարելի է յիշել քանի մը հատ այդ կայսրութիւններէն. Եգիպտական, Փիւնիկեան, Փիւզանդական, Ասորական, Բաբելոնական, Հռովմէական, եւայլն: Սակայն այդ բոլոր կայսրութիւնները բլուզումի ենթարկուած են՝ զանազան պատճառներով եւ ներկայիս անոնց մասին կը կարդանք պատմական գիրքերու մէջ, կամ թանգարաններու մէջ կը հանդիպինք անոնց փառաւոր անցեալին մասին:

Պատերազմները, ցեղասպաննութիւնները, տեղահանութիւնները թոհութոհի մէջ կը ձգեն խեղճ ժողովուրդը, մարդկային ճգնաժամային մարտահրաւէրներու առջեւ դնելով զանոնք: Անապահովութիւնը, անորոշութիւնը, ունեցածը կորսնցնելու ահն ու սարսափը կը տկարցնէ մարդ արարածը ու կը հասցնէ յուսահատութեան ու անկարողութեան: Նման վիճակի մէջ եղած է նաեւ Հայ ազգը անցեալին, ինչպէս Համաշխարհային Ա. Պատերազմի օրերուն՝ Հայկական ցեղասպանութեան հետեւանքով, նաեւ վերջին քանի մը տարիներուն՝ Արցախի ժողովուրդին պատահած անմարդկային ու մարդասպան արարքներով: Աստուծոյ սրբազն խօսքը կըսէ. «Ո՞վ որ Աստուծմէ ծնած է կը յաղթէ աշխարհի» (Ա. Յովհ. 5.4):

Հաւատանք իր Խօսքին ու ամուր կառչած մնանք մեր հաւատքին: Մենք կրնանք յաղթել մեզի դէմ սպառնացող բոլոր մարտահրաւէրներուն՝ մի միայն հաւատքով:

**Աղօթք - Կեանք տուրող Աստուա՛ծ, Դո՛ւն ես մեր յոյսը,**

**Վստահութիւնն ու ապաւելը: Տո՛ր մեզի վստահութիւնն ու համոզումը, որ կարելի է աշխարհին յաղթել հաւատքով: Ամէն:**

**Անյօյս ու անկարելի թուացող բաներ, Աստուծոյ համար անկարելի չեն: Դաստատ հաւատքով՝ անոնք կարելի կ'ըլլան:**

Տերը իմ օգականս է, ուստի պիտի չվախնամ: [Եթ. 13. 6]

## ԱՍՏՈՒԱԾԻ ԻՄ ՕԳՆԱԿԱՆ Է

**Ղ**նկերս՝ Ռալիշ (Raleigh) արագ կը սուրայ դէպի իր ութսուն հինգ գերորդ տարեդարձը: Աւելի քան երեսուն հինգ տարներ առաջ՝ իր հետ իմ ունեցած առաջին զրոյցէն ի վեր, ան ողենչումի աղբիւր եղած է: Երբ վերջերս նշեց, որ հանգստեան թոշակի անցնելէ ետք, ձեռագիր գիրք մը ամբողջացուցած է եւ սկսած մէկ ուրիշ ծառայութեան նախաձեռնութիւն մը. հիացայ բայց չզարմացայ:

Աստուածաշունչին մէջ նշուած՝ ութսուն հինգ տարեկան Քաղէք՝ նոյնպէս պատարաստ չէր կանգ առնելու: Անոր հաւատքն ու նուիրումը Աստուծոյ՝ պահած էին զինք տասնամեակներ շարունակ՝ անապատներու մէջ ապրելով եւ պատերազմներով ապահովելու այն ժառանգութիւնը, որ Աստուած խոստացած էր իսրայէլի ժողովուրդին: Ան ըսաւ. «Այսօր տակաւին ուժեղ եմ, ինչպէս էի այն օրը՝ երբ Մովսէս զիս զրկեց. ինչպէս էր ոյժս այն ատեն, հիմա ալ ոյժս նոյնպէս է պատերազմելու, ելելու եւ մտնելու համար» (Յես. 14. 11): Քաղէք յատարարեց, որ «Տէրը ինծի հետ ըլլայ, ու ես զանոնք փտարեմ, ինչպէս Տէրը ըսաւ» (Հմ. 12):

Անկախ տարիքէն, կեանքի փուլերէն կամ պարագաներէն՝ Աստուած կ'օգնէ բոլոր անոնց, որոնք սրտանց կը վստահին իրեն: Ցիսուսի միջոցով, Աստուած տեսանելի դարձաւ: Աւետարանները հաւատք կը ներշնչեն առ Աստուած այն ամէն բաներուն միջոցով, որ մենք կը տեսնենք Քրիստոսի մէջ: Ան ցոյց տուաւ Աստուծոյ հոգատարութիւնն ու կարեկցութիւնը, բոլոր անոնց հանդէպ, որոնք օգնութիւն կը խնդրէին իրմէ: Ինչպէս երբայեցիս գիրքին հեղինակը կը հաստատէ. «Տէրը օգնականս է, ուստի պիտի չվախնամ» (Եթ. 13. 6): Երիտասարդ, թէ ծեր, թոյլ կամ ուժեղ, կապուած կամ ազատ, արագընթաց կամ կաղացող. ի՞նչը կը խանգարէ մեզ այսօր Անոր օգնութիւնը խնդրելու:

**Աղօթք - Ամենակարող Աստուած, օգնէ ինծի տեսնելու քեզ՝ որպէս օգնութեանս աղբիւր՝ ամէն պարագաներու մէջ: Ամէն: Ո՞վ ներշնչած է քեզ: Ինչպէ՞ն կը տեսնես Աստուած՝ որպէս քո՛ օգնութեան աղբիւր՝ ամէն բանի մէջ:**

Մինչեւ Թեսաղոնիկէ դրկեցիք ինծի պէտք  
Եղածը՝ մէկ-երկու անգամ: [Փիլ. 4. 16]

## ՄԻԱՍԻՆ ԾԱՌԱՅԵԼ ՅԻՍՈՒՍՈՎ

**Փ**րկարարները՝ համագործակցեցան իրարու հետ Միքրո-նէզիայի (*Micronesia*) կղզին վրայ արգելափակուած երկու մարդերու օգնելու համար: Անոնց միասին աշխատիլը անհրաժեշտ էր, քանի որ համատարած առողջական ճգնաժամը իրենցմէ կը պահանջէր սահմանափակել իրարու հետ շփուխը: Օդաչուն, որ առաջինը եղաւ նկատելու նաւաբեկուածները եւ տեղեկացնելու մօտը գտնուող Ավստրալական մարտանաւին: Նաւը զրկեց երկու ուղղաթիռ, որոնք հասցուցին սնունդ, ջուր եւ բժշկական օգնութիւն: Աւելի ուշ Ամերիկայի Միացեալ Նահանգներու առափնիա պահակախումբը հասաւ ստուգելու ու անոնց տրամադրելու հաղորդակցութեան միջոց: Ի վերջոյ, Միքրոնէզիա հսկիչ նաւը, զիրենք տեղափոխեց իրենց նպատակակիտին:

Մենք կրնանք շատ բան ընել, երբ միասին աշխատինք: Փիլիպպէի հաւատացեալները միաւորեցին իրենց ջանքերը՝ աջակցելու Պօղոս առաքեալին: Լիդիան եւ իր ընտանիքը, զինք ընդունեցին իրենց տան մէջ (Գործք 16. 13-15): Կղեմէսը եւ նոյնիսկ Լաւոդիան եւ Սիւնտիքը (որոնք իրարու հետ համաձայն չէին) բոլորն ալ ուղղակիօրէն աշխատեցան առաքեալին հետ՝ բարի լուրը տարածելու համար (Փիլ. 4. 2-3): Աւելի ո՞ւշ, երբ Պօղոս բանտարկուեցաւ Հռոմի մէջ, եկեղեցին հաւաքեց խնամքի ծրաբի համար անհրաժեշտ եղած բաները եւ առաքեց զանոնք եպափրոդիտոսի միջոցով (Հմ. 14-18): Սակայն ամենակարեւորը, թերեւս, Փիլիպպէցիները աղօթեցին իրեն համար՝ իր ծառայութեան ընթացքին (1. 19):

Այս հինաւուրց եկեղեցին մէջ՝ միասին ծառայող հաւատացեալներու օրինակները կրնան ոգեշնչել մեզ այսօր: Համագործակցելով հաւատակիցներու հետ աղօթելու եւ ուրիշներուն ծառայելու համար, ինչպէս Աստուած կ'առաջնորդէ եւ կը զօրացնէ մեզ, շատ աւելին կը հասնի, քան երբեւէ կարող էինք առանձին ընել:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնորեւ՝ ցոյց տուր ինծի, թէ ինչպէս կրնամ միանալ միւսներուն, որոնք կը ծառայեն թեզի: Ամեն:

**Ե՞րբ լաւ ծառայած էք՝ միւս հաւատացեալներուն հետ:** Ի՞նչն է հոգեւոր կապի հիմքը, որ դուք կը բաժնեկցիք անոնց հետ:



Կը լսէ խօսքը, սակայն այս աշխարհի հոգերը ...  
կը խեղդեն խօսքը: [Մատթ. 13. 22]

## ՔԱՇԷ՛ ՀՈԳԵՐՈՒՄ ՄՈԼԱԽՈՏԵՐՈՅ

**Ք**անի մը սերմեր թաղելէ ետք՝ տանս բակի բանջարանոցին մէջ, սպասեցի տեսնելու արդիւնքները: Կարդալով, որ սերմերը բողբոջելու են տասէն՝ տասնչորս օրուան ընթացքին, յաճախ կը ստուգէի՝ հողը ջրելու ընթացքին: Շուտով տեսայ քանի մը կանաչ տերեւներ, որոնք դուրս եկած էին: Բայց իմ ուրախութեան պղպջակը շուտով պայմանացաւ, երբ ամուսինս ըսաւ, որ ատոնք մոլախոտեր են: Ան խրախուսեց զիս, որ շուտով քաշեմ զանոնք, որպէսզի չխեղդեն այն բոյսերը, որոնք ես կը փորձէի աճեխնել:

Ցիսուս նաեւ պատմեց ներխուժողներու հետ գործ ունենալու կարեւորութեան մասին, որոնք կրնան խանգարել մեր հոգեւոր աճումին: Ան բացատրեց իր առակին մէկ հատուածը այսպէս. երբ սերմնացանը իր սերմերը նետեց ոմանք «ինկան փուշերու մէջ ... եւ փուշերը խեղդեցին զանոնք» (Մատթ. 13. 7): Փուշերը կամ մոլախոտերը ճիշդ այդ մէկը կ'ընեն՝ բոյսերուն ու կը դադրեցնեն անոնց աճը (Հմ. 22): Եւ հոգերը, անշուշտ, կը խանգարեն մեր հոգեւոր աճումին: Աստուածաշունչ կարդալը եւ աղօթելը մեր հաւատքը աճեցնելու հիանալի միջոցներ են, բայց հասկցայ, որ պէտք է զգուշանամ հոգերու փուշերէն: Ասոնք «կը խեղդեն» իմ մէջս դրուած բարի խօսքը ստիպելով ինձի կեդրոնանալ այն բանին վրայ, թէ ինչ բան կրնայ սխալ ըլլալ:

Հոգին պտուղները, որոնք կը գտնուի Աստուածաշունչին մէջ, կը ներառեն այնպիսի բաներ, ինչպիսին են սէրը, ուրախութիւնը, խաղաղութիւնը (Փաղ. 5. 22): Բայց որպէսզի մենք տանք այդ պտուղը, Աստուածոյ զօրութեամք՝ պէտք է դուրս քաշենք կասկածի կամ մտահոգութեան որոմք, որ կրնայ շեղել մեզ եւ ստիպել որ կեդրոնանանք որեւէ այլ բանի վրայ, բացի իր վրայ:

**Աղօթք** - Սիրելի Երևանոր Յա՛յր, կը խնդրեմ յիշեցո՞ւր ինձի,  
որ յաճախ մոլախոտ քաշեմ՝ հրաժարելով մտահոգութեան եւ  
խաբեական մտքերէն, որպէսզի աճիմ եւ պտուղ տամ: Ամէն:  
Աստուած կ'օգնէ մեզի որ աճեցնենք այն սերմերը, որոնք ինք  
տնկած է մեր մէջ, եթէ մենք պատրաստ ըլլանք՝ քաշելու հոգերու  
որոմները:

Ահա՝ քու առջեւեղ հրեշտակ մը կը դրկեմ, որ  
ճամբան պահպանէ քեզ: [Ել. 23. 20]

## ՅՐԵՇՏԱԿ ՈՒՂԵԿԻՑՆԵՐ

**Փ**անի որ բժշկական քննութենէ քնութիւն՝ լեցուցին  
Պէսի (Bev) ժամանակացոյցը, ան ծանրաբեռնուեցաւ ու  
հոգնած զգաց: Բժիշկները ահազանգած էին իրեն, երբ ըսէր  
էին, որ իր մարմինին մէջ՝ տեղ մը քաղցկեղ կը փնտռեն:  
Ամէն օր՝ Աստուած հաւատարիմ կերպով կը քաջալերէր զինք,  
ներկայութեան խոսումով եւ մշտական խաղաղութիւնով, երբ  
ան կը դիմէր Անոր կամ կը կարդար Աստուածունչը: Պէս  
կը պայքարէր անորոշութիւններու դէմ եւ յաճախ կը սորվէր  
գլորել «ի՞նչ կ'ըլլար՝ եթէ»ն Աստուծոյ ուսերուն վրայ: Առաւօտ  
մը, Պէս հանդիպեցաւ համարի մը Ելից 23-ին մէջ, որ գուրս  
եկաւ էջէն իր սիրտին՝ լուրջ վիրահատութենէ մը առաջ: «Ահա՝  
քու առջեւէդ հրեշտակ մը կը դրկեմ, որ ճամբան պահպանէ  
քեզ» (Հմ. 20):

Այդ խօսքերը Աստուած՝ Մովսէսի միջոցով ըսաւ իր  
ժողովուրդին՝ Խարայէլացիններուն: Ան կու տար իր օրէնքները,  
որպէսզի իր ժողովուրդը հետեւի եւ առաջնորդեց զիրենք դէպի  
նոր երկիրը (Հմ. 14-19): Բայց այդ հրահանգներուն մէջտեղ  
Ան ըսաւ անոնց, որ հրեշտակ մը կը դրկէ անոնց առջեւէն,  
«որպէսզի պահապանէ զիրենք ճանապարհին»: Թէեւ սա՝ Պէսի  
կեանքի իրավիճակը չէր, ան յիշեց, որ հրեշտակներու խնամքը  
կը յիշատակուի Աստուածաշունչին մէջ: Սաղմոս 91. 11-ին  
մէջ կ'ըսուի. «Արդարեւ իր հրեշտակներուն պիտի պատուիրէ  
քու մասիդ, որ բոլոր ճամբաններուդ մէջ պահպանեն քեզ»: Եւ  
Երրայեցիս 1. 14-ին մէջ կ'ըսուի, որ Աստուած հրեշտակներ կը  
դրկէ՝ որպէս «սպասաւորութիւն ընող հոգիներ»՝ ծառայելու  
թիսուսի հաւատացողներուն:

Եթէ մենք կը ճանչնանք Քրիստոսը, Ան հրեշտակ կամ  
հրեշտակներ ունի մեր մօտ, որպէսզի ծառայեն նաեւ մեզի:

**Աղօթք - Սիրելի Յայր,** Երախտապարտ Եմ, որ Դուն միշտ մօտ  
ես եւ Դո՛ւն նաեւ ունիս Ձու հրեշտակներոյ, որոնք կը հսկեն Ձու  
գաւակներուդ: Ամէն:

**Աստուած շատ բաներ կրնայ ընել իր հրեշտակներուն միջոցով.**  
**ուստի թող քաջալերուինը այս խօսքով:**

Ամեն ատեն աղօթեցք Յոգիով՝ ... յարատեւութեամբ եւ աղերսանքով՝ բոլոր սուրբերուն համար: [Եփ. 6. 18]

## ԱՊՕԹԷ ԵՒ ՅՍԿԷ

**Ե**րբ կը մղուին հոգեւոր մարտեր, Յիսուսի հաւատացողները՝ պէտք է լուրջ վերաբերին աղօթքին: Ֆլորիայէն (*Florida*) կին՝ մը հասկցաւ, թէ որքա՞ն վտանգաւոր կրնայ ըլլալ եթէ անխոհնեմ կերպով կիրառենք աղօթքը: Երբ ան աղօթէր, կը փակէր աչքերը: Բայց օր մը ինքնաշարժը վարած ատեն՝ փակ աչքերով աղօթելով, չկրցաւ կենալ՝ կանգ առնելու ազդանշանին մօտ: Սուրաց խաչմերուկին եւ ճամբէն դուրս ելլելով, մտաւ տան մը բակը: Երբ ան փորձեց ետեւ երթալ եւ դուրս գալ բակէն՝ չյաջողեցաւ: Թէեւ ան չվիրաւորուեցաւ, սակայն ոստիկանները իրեն անզգուշ վարորդի տուգանք տուրին՝ գոյքերու վնաս հասցնելուն համար: Այս աղօթքի մարտիկը՝ չտեսաւ եփեսացիս 6. 18 հատուածին հիմնական մասը՝ Հսկեցէքը:

Որպէս Աստուծոյ ամբողջ սպարազինութեան մաս՝ եփեսացիս 6-ին մէջ, Պօղոս առաքեալ կը ներառէ երկու վերջին կէտեր: Նախ, մենք պէտք է հոգեւոր մարտեր մղելու ենք աղօթքով: Սա՛ կը նշանակէ, աղօթել Հոգիով եւ ապաւինիլ Անոր զօրութեան: Նաեւ հանգստանալով Անոր առաջնորդութեամբ եւ արձագանքելով Անոր յիշեցումներուն՝ աղօթելով՝ ամէն տեսակի աղօթքներ ամէն առիթներով (Հմ. 18): Երկրորդ Պօղոս մեզ քաջալերեց «Հսկելու»: Հոգեւոր Հսկողութիւնը կընայ օգնել մեզ պատրաստուելու Յիսուսի վերադարձին (*Մար. 13. 33*), յաղթել փորձութեան (14. 38) եւ բարեխօսելու այլ հաւատացեալներու համար (Եփ. 6. 18):

Մինչ մենք ամէն օր մարտեր կը մղենք, եկէ՛ք ներթափանցենք մեր կեանքը «աղօթէ եւ Հսկէ» մօտեցումով՝ ու պայքարինք չար ուժերու դէմ եւ խաւարը խոցելով՝ Քրիստոսի լոյսով:

**Աղօթք** - Սիրելի Յայր, կը խնդրե՞մ, օգնե՞մ որ հսկեմ եւ աղօթեմ ինծի եւ ուրիշներու համար: Ամեն:

**Մեր հոգեւոր պայքարներուն մէջ՝ կարեւոր է «աղօթել եւ հսկէլ»ու մտածելակերպը որդեգրել:**

Մենք կը սիրենք զայս, որովհետեւ նախ ան սիրեց մեզ: [Ա. Յովհ. 4. 19]

## ԿԱՐԵԼԻ ՉԵՇ ԶՍԻՐԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ

**Ե**րբ իմ այժմու մեծցած տղաս՝ Զավյէր (*Xavier*), մանկապարտէզ էր, իր բազուկները լայն բացաւ ու ըսաւ. «Ես քեզ այսչափ կը սիրեմ»: Ես ալ աւելի երկար բազուկներս՝ լայն բացի եւ ըսի. «Ես քեզ շատ կը սիրեմ»: Բոռունցքները դնելով կոնքերուն վրայ ան ըսաւ. «Նախ ես քեզ սիրեցի»: Օրօրեցի գլուխս եւ ըսի. «Ես քեզ սիրեցի, երբ Աստուած դրաւ քեզ իմ արգանդիս մէջ»: Զավյէրի աչքերը բացուեցան երբ ըսաւ. «Դուն յաղթեցիր»: Ես ալ ըսի. «Մենք երկուքս ալ յաղթեցինք, որովհետեւ Յիսուս նախ մեզ երկուքս սիրեց»:

Մինչ Զավյէր կը պատրաստուի իր առջինեկին լոյս աշխարհ գալուն, կ'աղօթեմ, որ ան հաճոյք ստանայ իր որդին աւելի շատ սիրելու, մինչ անոնք քաղցր յիշատակներ կը ստեղծեն: Բայց մինչ ես կը պատրաստուիմ մեծմայր դառնալու, կը զարմանամ, թէ որքա՞ն կը սիրէի թոռնիկին՝ այն պահէն, երբ Զավյէր եւ իր կինը մեզի ըսին, որ երեխայ կը սպասեն:

Յովհաննէս առաքեալ հաստատեց, որ Տէր Յիսուսի ունեցած սէրը՝ մեր հանդէպ, մեզի հնարաւորութիւնը կուտայ սիրելու զինք եւ ուրիշներ (*Ա. Յովհ. 4. 19*): Իմանալով՝ որ Ան կը սիրէ մեզ, մեզի կուտայ ապահովութեան զգացում մը, որ կը խորացնը մեր անձնական յարաբերութիւնը իր հետ (*Հմ. 15-17*): Մինչ կ'անդրադառնանք մեզի հանդէպ իր ունեցած սիրոյն խորութեան (*Հմ. 19*), մենք կրնանք աճիլ իր հանդէպ մեր ունեցած սիրոյն մէջ եւ սէր արտայայտել այլ յարաբերութիւններու մէջ (*Հմ. 20*): Յիսուս ո՛չ միայն մեզ կը զօրացնէ սիրելու, այլ նաև կը պատուիրէ սիրել. «Մա՛ պատուիրանը ունինք անկէ. ո՛վ որ կը սիրէ Աստուած, թող սիրէ նաև իր եղայրը եւ քոյրը» (*Հմ. 21*): Երբ հարցը կուտայ լաւ սիրելու, Աստուած միշտ կը յաղթէ: Հոգ չէ՛ թէ որքան ալ աւելի փորձենք, չենք կրնար չսիրել Աստուած:

**Աղօթք** - Սիրելի Փոլիշ, շնորհակալ եմ, որ առաջ Դո՛ւն զիս սիրեցիր, որպեսզի կարենամ սիրել ուրիշները: Ամէն:

**Աստուած կը սիրէ մեզ եւ կ'օգնէ որ մենք ալ ուրիշները սիրենք:**

**Կարելի է սէր ցոյց տալ ուրիշներուն այս շաբաթ:**

Ամեն իշխանութիւն ինծի՛ տրուեցաւ: [Մատթ. 28. 18]

## ՅԻՍՈՒՍԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

**Կ**ոյնի՞սկ, երբ Յիսուս ազատեց որդիս՝ ճէֆֆը (Geoff), տարիներ շարունակ թմրանիւթ չարաշահելէ ետք, ես ունէի տակաւին որոշ մտահոգութիւններ: Մենք՝ միասին շատ բաներու մէջէն անցած ենք, սակայն ուշադրութիւնս երբեմն մնաց իր գժուար անցեալին վրայ, փոխանակ ապագային, որ Աստուած ունէր իրեն համար: Թմրամոլներու ծնողները՝ յաճախ կ'անհանգստանան՝ իրենց զաւականերուն կրկին մոլի ըլլալու մասին: Օր մը՝ ընտանեկան հաւաքոյթի ժամանակ՝ մէկ կողմ քաշեցին ճէֆֆին եւ ըսի «Յիշէ՛, մենք ունինք հզօր հակառակորդ մը»: «Գիտե՛մ՝ Հայրիկ», պատասխանեց ան, «զօրութիւն ունի, սակայն չունի իշխանութիւն»:

Այդ պահուն յիշեցի Յիսուսի անգուգական իշխանութիւնը՝ փրկելու մեզ մեր մեղքերէն եւ փոխելու մեր կեանքը, եթէ մենք կը նայինք իրեն: Անմիջապէս մտածեցի Անոր խօսքերուն մասին ուղղուած աշակերտներուն՝ նախ քան վերադարձը երկինք գտնուող իր Հօր մօտ. «Ամէ՛ն իշխանութիւն ինծի՝ տրուեցաւ՝ երկինքի մէջ ու երկրի վրայ: Ուրեմն գացէ՛ք ...» (Մատթ. 28- 18-19):

Խաչեալ եւ յարուցեալ Յիսուսը՝ մեզի համար ճամբայ բացած է՝ Անոր մօտ գալու, հոգ չէ թէ ի՞նչ է մեր անցեալը: Ան կը պահէ թէ՝ մեր անցեալը եւ թէ՝ մեր ապագան: Քանի որ Ան խոստացած է միշտ մեզի հետ ըլլալ (Հմ. 20), մենք կրնանք վստահ ըլլալ, որ Ան կ'իրականացնէ իր նպատակները եւ մեր կեանքը կը գտնուի իր անխափան ճեռքերուն մէջ: Յիսուս մեզի կու տայ անգուգական յոյս. յոյս մը՝ այնքա՞ն լաւ է, որ չենք կրնար պահել զայն մենք մեզի: Սատանան եւ աշխարհը կրնան ունենալ փոքր ժամանակ՝ քիչ մը զօրութիւն, բայց «ամբողջ իշխանութիւնը» յաւիտեան կը պատկանի Յիսուսի:

**Աղօթք - Սիրելի Յա՛յր, շնորհակալ եմ որ սիրով զիս կանչեցիր քու մօսդ: Կը խնդրե՛մ, առաջնորդէ զիս մէկու մը մօս, որու հետ այսօր կրնամ բաժնեկցիլ քու սէրդ: Ամէն:**  
**Տէր Յիսուսի իշխանութիւնը մեզի յոյս կը ներշնէլ: Յետեւաբար մենք կրնամ բաժնեկցիլ՝ Անոր մեզի համար ըրածը՝ մէկու մը հետ:**

Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին: [Յովի. 3. 16]

## ՍԱՂՄՈՍ 72 ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

**Մ**էրի Շէլլի (Mary Shelley) Ֆրէնքլըշմայնի (Frenkestein) մէջի «Հրէշը», ամենայայտնի գրական կերպարներէն մէկն է, որ կը գրաւէ մեր մշակութային երեւակայութիւնը: Բայց սիրելի վէպին մտերիմ ընթերցողները գիտեն, որ կարելի է հիմնաւոր փաստեր հաստատել, որ Շէլլին իրականութեան մէջ կը պատկերացնէ Վիքթըր Ֆրէնքլըշմայն մոլորուած գիտնականը, որ ստեղծած է այդ արարածը, որպէս իսկական հրէշը: Խելացի արարած մը ստեղծելէ ետք, Վիքթըր կը մերժէ որեւէ առաջնորդութիւն, ընկերակցութիւն կամ երջանկութեան յոյս՝ կարծես երաշխաւորելով արարածին իջնելը դէպի յուսահատութիւն եւ զայրոյթ: Հակառակելով Վիքթըրին, արարածը կ'ողբայ. «Դուն՝ զիս ստեղծողը, պիտի պատուէիր ու յաղթէիր ինձի»:

Աստուածաշունչը կը բացայատէ՛, թէ որքա՛ն տարբեր է բոլոր բաներու ճշմարիտ Արարարիչը, անփոփոխ անխոնջ սիրով իր ստեղծագործութեան հանդէպ: Աստուած քմահաճոյքով չստեղծեց աշխարհը, այլ սիրով մզուած՝ գեղեցիկ, «շատ լաւ» (Ծն. 1. 31): Ու նոյնիսկ այն ժամանակ, երբ մարդկութիւնը հեռացաւ իրմէ՛ ընտրելու հրեշաւոր չարը, Աստուծոյ նուիրումն ու մարդկութեան հանդէպ իր ունեցած սէրը՝ չփոխուեցաւ:

Ինչպէ՞ս Յիսուս բացատրեց Նիկողիմոսի, Աստուծոյ սէրը իր ստեղծագործութեան հանդէպ այնքան մեծ էր, որ Ան պատարաստ էր տալ նոյնիսկ այն, ինչ որ ամենասուզն էր իրեն համար «իր միածին Որդին» (Յովկ. 3. 16), որպէսզի աշխարհը փրկութի: Յիսուս զոհաբերեց ինքզինք՝ կրելով մեր մեղքին պատիմը, որպէսզի «ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանք» (Հմ. 15):

Արարիչ մը ունինք՝ որու կրնանք վստահի՛ մեր սիրտով եւ կեանքով:

**Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ Քեզի՝ լաւ Արարիչ ըլլալուր համար, ու ես կարող եմ վստահիլ Քեզի: Ասէն:**  
**Ինչպէ՞ս Աստուծոյ հաւատարմութիւնը իր ստեղծագործութեան վրայ, կ'ազդէ մեր վրայ: Ինչպէ՞ս կրնանք արծագանգել մեզի հանդէպ անոր ցուցաբերած սիրոյն:**

ወጪ ወጠደቅ ስተኞች ከ ወጪውንም ስጋድ ተከሱዋል.  
አሁን ይጋኙ ዘመኑን የሚፈጸማል፡ [የ. በአፍ. 20. 5]

## ԱՂՈԹՔԻ ՀԱՐՑԵՐ

«Աղոթքներ՝ ուղեղի առաջիկայ քննութեան համար»:  
 «Որպէսզի երեխաներս վերադառնան եկեղեցի»:  
 «Մխիթարութիւն Տէյզին (Dave) համար, ማለት կոբանցուց իր  
 կողակիցը»: Մեր քարտերու ծառայութեան խումբը կը ստանայ  
 նման աղոթքներու խնդրանքներու՝ շաբաթական ցուցակ մը,  
 որպէսզի մենք կարենանք աղոթել եւ իւրաքանչիւր անձի  
 ձեռագիր գրութիւն մը ղրկել: Խնդրանքները ճնշիչ են, եւ  
 մեր ջանքերը կրնան թուկի փոքր ու անկատար: Սակայն այդ  
 փոխուեցաւ, երբ ստացայ սրտագին չնորհակալութեան բացիկ  
 մը Տէյզին, վերջերս սգակիր դարձած ամուսինէն, իր սիրելի  
 կնոջ մահացդի օրինակին հետ: Ես նո՞ր հասկցայ, որ աղոթքը  
 կարեւոր է:

Ցիսուս օրինակ եղաւ, որ մենք պէտք է աղոթենք  
 ջերմեռանդ, յաճախ եւ յուսագրող հաւատքով: Երկրի վրայ իր  
 ժամանակը սահմանափակ էր, բայց Ան առաջնահերթութիւն  
 սեպեց՝ առանցնանալով աղոթելը (Մարկ. 1. 35, 6. 46, 14. 32):

Հարիւրաւոր տարիներ առաջ հսրայէլի եղեկիա թագաւորը  
 նոյնպէս սորվեցաւ այս դասը: Անոր ըսին, որ հիւանդութիւնը  
 շուտով պիտի խէր իր կեանքը (የ. በአፍ. 20. 1): Վիշտի մէջ եւ  
 դառնօրէն լալով, եղեկիա «իր երեսը պատին դարձուց եւ Տէրոջ  
 աղոթեց» (Հմ. 2): Այս դէպքին մէջ՝ Աստուծոյ արձագանքը  
 անմիջական էր: Ան բժշկեց եղեկիայի հիւանդութիւնը,  
 տասնհինգ տարիներ աւելցուց անոր կեանքին վրայ եւ  
 խոստացաւ փրկել թագաւորութիւնը հակառակորդներէն  
 (Հմ. 5-6): Աստուծած պատասխանեց անոր աղոթքին՝ ո՛չ թէ  
 այն պատճառով, որ եղեկիա կ'ապրէր լաւ կեանքով, այլ «իր  
 ծառային Դաւիթի սիրոյն համար» (Հմ. 6): Մենք միշտ չէն, որ կը  
 ստանանք այն ինչ որ կը խնդրենք, բայց կրնանք վստահ ըլլալ,  
 որ Աստուծած կ'աշխատի իւրաքանչիւր աղոթքի մէջ եւ միջոցով:

**Աղօթք -** Երկնաւոր Յա’յո, շնորհակալ եմ՝ որ լսեցիր իս  
 աղօթքներս: Ամէն:

**Ո՞վ այսօր պէտք ունի քու աղօթքիդ?** Ինչպէ՞ս կրնաս յիշել դուն  
 բեզի, որ աւելի յաճախ կենաս եւ աղօթես:

Երբ վախնամ՝ քեզի պիտի վստահիմ: [Սաղմ. 56. 3]

## ՀԱՒԱՏՔԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

**Փ**ոքրիկ չորս տարեկան Կալվինի (*Calvin*) առողջական սովորական քննութիւնը, անոր մարմինին վրայ յայտնաբերեց՝ քանի մը անսպասելի բիծեր: Այցելութեան ընթացքին քանի մը պատուաստներ ըրին ու ներարկման տեղը ծածկեցին կպչուն վիրակապով: Տունը՝ երբ ժամանակը հասաւ կպչուն ծածկը հանելու, Կալվին վախէն՝ հեծկլտաց: Ուզելով հանգստացենլ որդիին՝ հայրը ըսաւ. «Կալվին, գիտե՞ս թէ բնաւ բան մը պիտի չընեմ՝ քեզ ցաւցնելու համար»: Հայրը կ'ուզէր, որ իր որդին աւելի շատ վստահի իրեն, քան վախնալու կպչուն վէրքին կապը հանելէ:

Միայն չորս տարեկանները չէ՛, որոնք կը նոււաղին անհանգստառական պարագային: Վիրահատութիւնները, սիրելիններէն բաժնութիւն, մտային կամ հոգեբանական հարցերը, ու շատ աւելին, կ'առաջացնեն մեր վախերը, հեծեծանքները, լացն ու հառաչանքները:

Դաւիթի սարսափելի պահերէն մէկն էր, երբ ան ինքզինք գտաւ Փղտացիններու տարածքին մէջ, մինչ փախուստ կուտար Սաւուղ թագաւորէն: Երբ ճանչցան զինք, ան մտահոգ էր թէ ի՞նչ կրնայ պատահիլ իր հետ (տես Ա. Թագ. 21. 10-11). «Դաւիթ .. Դէթի թագաւորէն Անգուսէն շատ վախցաւ» (Հմ. 12): Անդրադառնալով այս անհանգիստ իրավիճակին՝ Դաւիթ գրեց. «Երբ վախնամ՝ քեզի պիտի վստահիմ. ... Աստուծոյ կը վստահիմ, պիտի չվախնամ» (Սաղմ. 56. 3-4):

Ի՞նչ ընենք, երբ կեանքի անհանգստութիւնները բորբոքեն մեր վախերը: Մենք կրնանք մեր վստահութիւնը դնե՛լ մեր երկնաւոր հօր վրայ:

**Աղօթք - Սիրելի Յայր,** իմ մարդկային տկարութեանս մէջ՝ ես կը վախնամ: Օգնէ՛ իսծի տեսնելու ու զգալու քու սերդ ու հոգատարութիւնդ, նոյնիսկ իմ փորձութիւններուս եւ անհանգստութիւններուս մէջ: Աւել:

**Որոշ իրավիճակներ կրնան մեզի վախ պատճառել, սակայն կարելի է հանգիստ ըլլալ՝ Անոր ինամքին տակ, եթէ աղօթքով մեր բոլոր վախերը բերենք մեզ սիրող Երկնաւոր Յօրը առջեւ:**

Լալով պիտի գան, եւ աղաչանքներով  
զանոնք պիտի բերեմ: [Եր. 31. 9]

## ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

**Ա**ռաւօտ մը՝ տունէն դուրս գալով, Տիկն (Dean) գտաւ քանի մը ընկերներ, որոնք զինք կը սպասէին փուչիկներով: Իր ընկերը ծօշ (Josh) առաջ անցաւ ու պահարան մը յանձնելէ առաջ ըստ: «Քու գրած բանաստեղծութիւններդ մրցոյթի մտցուցինք»: Պահարանին մէջ բացիկ մը կար՝ որու վրայ գրուած էր «Առաջին մրցանակ», եւ շուտով բոլորը ուրախութենէն սկսան արտասուլի: Տիկնի ընկերները գեղեցիկ բան մը ըրած էին՝ հաստատելով անոր գրելու տաղանդ ունենալը:

Ուրախութենէն արտասուելը՝ տարրաբանական փորձառութիւն մըն է: Արցունքները սովորաբար ցաւի պատասխան են, ո՛չ թէ ուրախութեան. եւ ուրախութիւնը՝ սովորաբար կ'արտայայտուի ծիծաղով եւ ո՛չ թէ արցունքներով: Իտալացի Հոգեբաններ նշած են, որ ուրախութեան արցունքները կու գան խոր անձնական նշանակութիւն ունեցող պահերուն մէջ. օրինակ երբ մենք խորապէս սիրուած կը զգանք կամ երբ կը հասնինք հիմնական նպատակի մը: Այս իրողութիւնը՝ անոնց ստիպեց եղրակացնելու, որ ուրախութեան արցունքները մեր կեանքի իմաստին ցուցանիշներն են:

Ես կը պատկերացնեմ, որ ուրախութեան արցունքները կը ժայթքին ամէն տեղ, ուր Յիսուս կ'երթար: Ինչպէ՞ս կրնային կոյր ծնած մարդուն ծնողները ուրախութենէն չարտասուիլ, երբ Յիսուս բժշկեց անոր (Յով. 9. 1-9), կամ Մարիամն ու Մարթան ուրախութեան արցունքներ չթափէին՝ իրեցն եղբօր յարութենէն ետք (11. 38-44): Երբ Աստուծոյ ժողովուրդը կը բերուի վերականգնած աշխարհը՝ Աստուած կ'ըսէ. «Լալով պիտի գան, եւ աղաչանքներով զանոնք պիտի բերեմ» (Եր. 31. 9):

Երբ արցունքները կը հոսին մեր դէմքերուն վրայ, մենք անկասկած պիտի իմանանք, որ կեանքի իմաստը միշտ ալ եղած է՝ Անոր հետ մտերիմ ապրելով:

**Աղօթք - Յայր Աստուած, շնորհակալ եմ՝ Ձեզ սիրողներուն  
սպասող ուրախութեան համար: Ամէն:**

**Ե՞րբ վերջին անգամ ուրախութենէ լացիր: Ի՞նչ կը խորհիս՝ որ է  
կեանքի իմաստ:**

Ան որ ունի իմ պատուիրաններս եւ կը պահէ զանոնք, անիկա՛ է զիս սիրողը: [Յովի. 14. 21]

## ՍԻՐՈՂ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

**Մ**եր հարսանեկան արարողութեան ընթացքին՝ մեր հովիւը ըսաւ ինծի. «Կը խոստանա՞ս սիրել, յարգել եւ հնազանդիլ ամուսինիդ, մինչեւ որ մահը ձեզ իրարմէ զատէ՛»: Նայելով նշանածիս փսփսացի. «Հնազանդիլ»: Մենք մեր յարաբերութիւնները կառուցած էինք սիրոյ եւ յարգանքի վրայ, ոչ թէ կոյր հնազանդութեան, ինչպէս ամուսնական ուխտը կ'ըսէ՛: Ամուսինիս հայրը՝ ֆիլմի առած էր իմ աչքս լայն բացած պահը, երբ ես կը փորձէի մշակել հնազանդիլ բառը եւ ըսի. «Այո»:

Տարիներու ընթացքին՝ Աստուած ինծի ցոյց տուաւ, որ հնազանդիլ բառին իմ ունեցած դիմադրութիւնս ո՛չ մէկ կապ չունի ամուսինի եւ կնոջ միջեւ անհաւատելի բարդ յարաբերութիւններուն հետ: Ես հասկցած էի՝ որ հնազանդիլ կը նշանակէ «Հպատակիլ» կամ «Հարկադիր ենթարկութիլ», որը չի հաստատեր Աստուածաշունչը: Ընդհակառակը, հնազանդիլ բառը՝ Աստուածաշունչին մէջ, կ'արտայատէ Աստուած սիրելու բազմաթիւ ձեւեր: Երբ ես ու ամուսինս՝ կը նշենք մեր ամուսնութեան երեսուն ամեակը, Սուրբ Հոգիին զօրութիւնով՝ մենք տակաւին կը սորվի՛նք սիրել Յիսուսի եւ զիրար:

Երբ Յիսուս ըսաւ. «Եթէ կը սիրէք զիս՝ պահեցէ՛ք պատուիրաններս» (Յովի. 14. 15): Ան մեզի ցոյց տուաւ, որ Աստուածաշունչին հնազանդիլը, կ'ըլլայ իր հետ շարունակական սիրալիր եւ մտերիմ յարաբերութիւններու արդիւնքը (Հմ. 16-21):

Յիսուսի սէրը անշահախնդիր է, անվերապահ եւ երբէ՛ք բռնի կամ չարաշահական չէ: Երբ մենք կը հետեւինք ու կը պատուենք Անոր մեր բոլոր յարաբերութիւններուն մէջ, Սուրբը Հոգին կրնայ օգնել մեզի տեսնելու Անոր հնազանդիլը, որպէս վստահութեան եւ երկրպագութեան իմաստուն եւ սիրառատ գործողութիւն:

**Աղօթք - Տեր Յիսուս, օգնէ՛ ինծի որ սիրե՛մ թեզ եւ ուրիշները՝**

**Աստուծոյ Խօսքին հնազանդելու միջոցով: Ամէն:**

**Աստուծոյ հնազանդիլը՝ որպէս սիրոյ եւ վստահութեան արարք տեսնելը՝ կը փոխէ մեր տեսակետը՝ Աստուծոյ հնազանդելու ցանկութեան մասին: Աստուած կ'ապացուցանէ որ մենք կրնանք վստահիլ իրեն:**

Ուստի՝ ունենալով շնորհներ, որոնք կը տարբերին այն շնորհին համեմատ՝ որ մեզի տրուած է: [Հռոմ. 12. 6]

## ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԱՆՁՆԱՒՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐԳԵՒՆԵՐ

**S**ասնեակ տարիներ առաջ՝ մասնակցեցայ գոլէճական համագումարի մը, ուր բոլորը կը խօսէին անձնաւրութեան քննութեան տեսակի մասին: Մէկը ըսաւ. «Ես ՆԶՄԴ եմ» (Ներդարձական, Զգացական, Մտածող եւ Դատող - ISTJ - Introversion, Sensing, Thinking, Judgement): Ուրիշ մը ըսաւ. «Ես ԱՆԶԻ եմ» (Արտահեղ, Ներգիտակից, Զգայուն եւ Իմացական - ENFP - Extraversion Intuition, Feeling, Perception): Ես ալ ապշած՝ կատեկեցի ըսելով. «Ես ալ՝ ԱԲԳԲՕՁ եմ (ABCXYZ):

Այդ օրէն ի վեր, ես շատ բան սորվեցայ Մայբրգ-Պրիկզ (Myers-Briggs) քննութեան եւ այլ տեսակի քննութիւններու մասին, ինչպիսին են ԳԱԿՀ (Գերիշխողութիւն, Ազդեցութիւն, Կայունութիւն եւ Համապատասխանութիւն - DISC - Dominance, Influence, Steadiness and Compliance) քննութիւնները: Զանոնք գրափէս կը համարեմ, քանի որ անոնք կրնան օգնել մեզի հասկնալու մենք զմեզ եւ ուրիշներու օգտակար եւ բացայայտող ձեւերով լոյս սփռելու մեր նախասիրութիւններուն, զօրութիւններուն եւ տկարութիւններուն վրայ: Պայմանով՝ որ մենք չափէն աւելի չօգտագործենք զանոնք, որոնք կրնան օգտակար գործիք ըլլալ, որ Աստուած կը գործածէ մեզ աճեցնելու համար:

Աստուածաշունչը՝ մեզի անհատականութեան քննութիւններ չառաջարկեր: Բայց կը հաստատէ իւրաքանչիւր մարդու եղակիութիւնը՝ Աստուծոյ աչքին (տե՛ս Սալմ. 139. 14-16, Երեմ. 1. 5), եւ ցոյց կու տայ՝ թէ ինչպէս Աստուած բոլորս կը զինէ իւրայատուկ անհատականութիւնով եւ եղակի պարզեւներով: Պողոս կ'ըսէ. «Ուստի՝ ունենալով շնորհներ, որոնք կը տարբերին այն շնորհքին համեմատ՝ որ մեզի տրուած է»: Այդ պարզեւները միայն մեզի համար չեն, այլ Աստուծոյ ժողովուրդին՝ Քրիստոսի մարմինին ծառայելու նպատակով են (Հմ. 5): Անոնք մեզ կը հրաւիրեն՝ ըլլալու Աստուծոյ ծառայութեան իւրայատուկ անօթ մը:

Աղօթք - Յա՛յր, շնորհակալ եմ՝ տուած պարգեւներուդ համար: Կը խնդրե՛մ, օգնէ ինձի ընդունելու այն ուղիները, որոնք տուած ես՝ սիրելու եւ ծառայելու ուրիշներուն՝ Չու թագաւորութեանդ մէջ: Ամէն: Աստուած պարգեւներ տուած է մեզի՝ ուրիշներու ծառայելու համար. ո՞ւստի գործածենք զանոնք ուրիշներու ծառայելու համար:

Եղիսէ աղօթելով ըսաւ. «Ո՞վ Տէր, կ'աղերսե՞մ, անոր աչքե՞րը բաց, որպէսզի տեսնե: [Դ. Թագ. 6. 17]

## ՏԵՍՆԵԼՈՒ ԱՉՔԵՐ

**Ճ**օյ (Joy) մտահոգ էր իր ազգական Սէնտիի (Sandy) համար, որ տարիներ շարունակ կը պայքարէր ալքոհոլամոլութեան եւ հոգեկան առողջութեան հետ կապուած խնդիրներու դէմ: Երբ ան գնաց՝ Սէնտիի բնակարանը, դռները կղպուած էին եւ դատարկ կը թուէր ըլլալ: Երբ ան՝ ուրիշ բարեկամներու հետ կը ծրագրէր Սէնտին փնտոելու աշխատանքը, ձօյ աղօթեց. «Աստուած, օգնէ ինձի տեսնելու այն, ինչ որ ես չեմ տեսներ»: Երբ անոնք կը հեռանային, ձօյ ետ նայեցաւ Սէնտիի բնակարանին եւ տեսաւ վարագոյրի փոքր շարժում մը: Այդ պահուն, ան իմացաւ, որ Սէնտին ողջ է: Թէեւ անոր հասնելու համար շտապ օգնութեան կարիքը եղաւ, սակայն ձօյ շատ ուրախացաւ այս պատասխանուած աղօթքին համար:

Եղիսէ մարգարէն գիտէր Աստուծոյ բան մը խնդրելու գօրութիւնը՝ իրեն յայտնելու իր իրականութիւնը: Երբ Սուրբական բանակը շրջապատեց քաղաքը, Եղիսէի սպասարկուն՝ վախէն դողաց: Սակայն ոչ Աստուծոյ մարդը, որովհետեւ Աստուծոյ օգնութեամբ՝ ան նշոյլ մը տեսած էր անտեսանելիի վրայ: Եղիսէ աղօթեց, որ սպասարկուն նոյնպէս տեսնէ եւ «Տէրը սպասաւորին աչքերը բացաւ» տեսնելու՝ որ «լեռը կրակէ ձիերով եւ կառքերով լեցուն էր» (Դ. Թագ. 6. 17):

Աստուած վերցուց հոգեւոր եւ ֆիզիքական աշխարհներուն միջեւ եղող վարագոյրը՝ Եղիսէի եւ իր սպասարկուին համար: Ձօյ կը հաւատար, որ Աստուած օգնեց տեսնելու վարագոյրի փոքր թարթումը, իրեն յոյս ներշնչելով: Մենք ալ կրնանք խնդրել իրմէ, որ մեզի հոգեւոր տեսլական տայ՝ հասկնալու, թէ ի՞նչ կը կատարուի մեր շուրջ: Եւ մենք ալ կրնանք ըլլալ Անոր սիրոյ, ճմարտութեան եւ կարեկցութեան գործակալները:

**Աղօթք** - Բոլոր ողորմութիւններու Յա՛ր, կը խնդրեմ բա՛ց աչքերս՝ տեսնելու օրու սերդ եւ շնորհը, որպէսզի զանոնք բաժնեկցիմ ուրիշներու հետ: Ամեն:

**Մեզ ճնշող պարագաներու մէջ՝ խնդրենք Աստուծմէ,** որ բանայ մեր աչքերը տեսնելու իր ծշմարտութիւնը՝ մեզ ծանրաբեռնող իրավիճակներու մէջ:

Անապատն ու տափաստանը բոլորովին պիտի ծաղկի: [Ես. 35. 2]

## ԾԱՂԿՈՂ ԱՆԱՊԱՏՆԵՐ

**Դ**արմբ առաջ փարթամ անտառներ կը ծածկէին Եթովպիայի (Ethiopia) հողամասին մօտաւորապէս 40 տոկոսը, բայց ներկայիս՝ այդ կը կազմէ միայն մօտ չորս տոկոսը: Հողի մաքրումը՝ բոյսեր մշակելու համար ու ծառերը չպաշտպանելը, պատճառ եղած է կազմուած մարմիններու եւ շրջապատի փոխյարաբերութեան ուսումնասիրութեան ճգնաժամի: Կանաչ եւ բարեբեր մնացած փոքր հատուածներու ճնշող մեծամասնութիւնը՝ պաշտպանուած է եկեղեցիներով: Դարեր շարունակ՝ տեղական Եթովպիական Ուղղափառ Թուայիտո (Tewahido) եկեղեցիները սնուցած են այս ովասիսները՝ ամայի անապատին մէջ: Եթէ նայինք վերէն առնուած պատկերներու, կը տեսնենք կանաչապատ կղզիներ՝ շրջապատուած սրճագոյն աւազով: Եկեղեցիի ղեկավարները կը պնդեն, որ ծառերու վրայ հսկելը՝ Աստուծոյ հանդէպ իրենց հնգանդութեան մէկ մասն է, որպէս Անոր ստեղծագործութեան տնտեսներ:

Եսայի մարգարէն գրեց Իսրայէլին, ժողովուրդի մը՝ որ կ'ապրէր չոր երկրի մէջ, ուր մերկ անապատն ու դաժան երաշտը կը սպառնար: Եւ նկարագրեց Աստուծոյ նախատեսած ապագան, ուր «անապատն ու տափաստանները պիտի բերկրին, եւ անբնակ երկիրը պիտի խայտայ ու նարկիսի պէս պիտի ծաղկի» (Ես. 35. 1): Աստուած մտադիր է բուժելու իր ժողովուրդին, բայց Ան նաեւ մտադիր է բուժելու երկիրը: Ան «նոր երկինք մը ու նոր երկիր մը պիտի ստեղծէ» (65. 17): Աստուծոյ նորոգուած աշխարհին մէջ «անապատը բոլորովին ծաղկիներով կը ծաղկի» (35. 2):

Աստուծոյ հոգատարութիւնը կը մղէ մեզ ըլլալու հոգ տանելու եւ խնամակալները ըլլալու Անոր ստեղծածին: Մենք կրնանք միանալ Աստուծոյ, որպէսզի բոլոր տեսակի անապատները ծաղկին կեանքով եւ գեղեցկութեամբ:

**Աղօթք-Արարիչ Աստուած,** կը խնդրեմցոյց տուրիսծի, թէ ինչպէ՞ս օգնեմ բուժելու եւ վերականգնելու՝ ինչ որ կոտրուած է աշխարհի մէջ: Ամէն:: Երբ տեսնենք արարչագործութեան մաս մը՝ ամուլ եւ տառապող, ի՞նչ ընելով եւ ինչպէ՞ս՝ կարելի է մասնակցիլ անապատներու ծաղկման:

Որովհետեւ դուք շնորհը՞վ փրկուած եք՝ հաւատքի միջոցով, եւ ատհկա ո՞չ թէ ձեզմէ Ե՝ հապա Աստուծոյ ընծան Ե: [Եփ. 2. 8]

## ՓՈՐՁԵ՛Լ ՄԵՆՔ ԶՄԵԶ ՓՐԿԵԼ

**S**արիներ առաջ՝ Նիու Եօրք Քաղաքը մեկնարկեց «Ապահով Մնայ: Հաստատ Մնայ» (Stay Safe. Stay Put) գովազդի արշաւը, մարդոց սորվեցնելու, թէ ինչպէ՞ս պահպանել հանգստութիւն եւ ապահով մնալ երբ վերելակին մէջ արգելափակուին: Փորձագէտները տեղեկացուցին, որ արգելափակուած որոշ մարդեր՝ մեռած են, երբ փորձած են բանալ վերելակին դռները կամ փորձած են դուրս գալ՝ այլ միջոցներով: Նման պարագաներու մէջ լաւագոյնը այն է, որ պարզապէս սեղմեն ահազանգի կոճակը՝ օգնութիւն կանչելու համար եւ սպասեն շուապ օգնութեան գործիչներու ժամանումին:

Պողոս առաքեալ տուաւ շատ տարբեր տեսակի փրկութեան ծրագիր մը՝ օգնելու անոնց, որոնք կը թակարդուին մեղքին ներքեւ: Ան յիշեցուց եփեսացիներուն՝ իրենց կատարեալ հոգեւոր անօգնականութեան մասին՝ եւ ըսաւ թէ իսկապէս «մեռած էին յանցանքներու եւ մեղքերու մէջ» (Եփ. 2. 1): Անոնք թակարդուած էին հնազանդելով սատանային (Հմ. 2) եւ կը հրաժարէին ենթարկուելու Աստուծոյ: Ու այդ վիճակին արդիւնքը եղաւ, որ անոնք դառնան Աստուծոյ բարկութեան առարկան: Բայց Ան չճգեց գանոնք հոգեւոր խաւարի թակարդին մէջ: Իսկ անոնք, որոնք կը հաւատան Յիսուսի, առաքեալը գրեց. «Շնորհքով փրկուած են» (Հմ. 5, 8): Աստուծոյ տուած փրկութեան նախաձեռնութեան արձագանգելու արդիւնքը կը լլայ հաւատք: Եւ հաւատքը կը նշանակէ, որ մենք կը հրաժարինք մենք զմեզ փրկելու փորձէն եւ կը կանչենք Յիսուսի, որ մեզի փրկէ:

Աստուծոյ շնորհքով մեղքի թակարդէն փրկուիլլ մեզմէ չի ծագիր: Այդ «Աստուծոյ պարզեւնէ» միայն Յիսուսի միջոցով (Հմ. 8):

**Աղօթք -** Տեր, ես այսքան երախտապարտ եմ, որ երդ ես թակարդուած էի մեղքի մէջ եւ կը փորձէի փրկել իմ անձս, Դուն նախաձեռնեցիր իմ փրկութիւնս եւ դրկեցիր Փրկիչը՝ զիս ազատելու համար: Ամեն:

**Մենք չենք կրնար մենք զմեզ ազատել մեղքի թակարդէն:**

**Աստուծ տուած է այս միջոցը, որ կրնայ մեզ փրկել:**



Հապա ծեր խօսքը ըլլայ՝ այո՞ն՝ այո՛, եւ ո՛չը՝ ո՛չ. ասկէ աւելին յառաջ կու գայ չարէն: [Մատթ. 5. 37]

## ՔՐԻՍՏՈՍՈՎ ԿԵՆԱԼ ԸՆԹԱՑՔԻՆ ՄԷԶ

**Ե**րբ Կանտալֆ Մոխրագոյնը՝ (*Gandalf the Grey*) ճակատեցաւ Սարուման Սպիտակին (*Saruman the White*) հետ, յստակ եղաւ՝ որ վերջինս շրջած է այն ամէնէն, ինչ որ պէտք էր ընէր օդնելով պաշտպանել Միջին երկիրը՝ Սառուրօնի (*Sauron*) չար ուժէն: Աւելին, Սարումանը դաշնակցեցաւ Սառուրօնին հետ: «Մատանիի Ընկերակցութեան» Փիլմի այս տեսարանին մէջ, որ հիմնուած է ձ. Ռ. Ռ. Թոլքյէնի (*J. R. R. Tolkien*) դասական ստեղծագործութեան վրայ, երկու նախկին ընկերները այնուհետեւ կը մասնակցին դիւցազներգական բարիի-չարի դէմ պայքարի մը: Եթէ միայն Սարումանը մնար այդ ընթացքին եւ ըներ այն, ինչ գիտէր թէ ճիշդ է:

Սաւուղ թագաւոր՝ նոյնպէս գժուարութիւններ ունեցաւ շարունակելու իր ընթացքը: Մէկ արձանագրութեան մը մէջ, ան իրաւացիօրէն «վկուներն ու նշանագէտները հաներ էր» Խսրայէլէն (*Ա. Թագ. 28. 3*): Լաւ քայլ էր, քանի որ Աստուած յայտարարած էր, որ դիւթաբանութեամբ զբաղելը «գարշելի էր» (*Բ. Օր. 18. 9-12*): Բայց երբ Աստուած չպատասխանեց թագաւորին խնդրանքին, նախկին անյաջողութիւններուն պատճառով, թէ ինչպէ՞ս վարուիլ Փղշտացիներու հսկայական բանակին հետ, Սաւուղ զիջեցաւ ու ըսաւ. «Ինծի վկուկ կին մը վինտուեցէք, որպէսզի երթամ անոր խորհուրդ հարցնեմ» (*Ա. Թագ. 28. 7*): Ամբողջական հակադարձութիւն: Սաւուղ անգամ մը եւս ձախողեցաւ, քանի որ իր հրամանին դէմ գնաց, ինչ որ կը կարծէր թէ ճիշդ էր:

Հազարամեակ մը վերջ Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Հապա ձեր խօսքը ըլլայ այո՞ն՝ այո, եւ ո՛չը՝ ո՛չ. ասկէ աւելին յառաջ կու գայ չարէն» (*Մատթ. 5. 37*): Այլ խօսքով, եթէ մենք յանձնառու եղած ենք հնազանդելու Քրիստոսի, կենսական է՝ որ պահենք մեր ուխտերը եւ ըլլանք ճշմարտացի:

**Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ՝ օգնէ ինծի շարունակելու ընթացքը շաւիղներուդ հետեւելով: Ամէն:**

**Կարեւոր է մեր ըրած խոստումները լի ու լի կատարել ու շարունակել միշտ ճշմարիտ ըլլալ:**

Երբ կը մտաբերեմ քու մէջդ եղած անկեղծ հաւատքը,  
որ նախ բնակեցաւ մեծ մօրո՞ Հաւողեայի ու մօրո՞  
Եւսիկէի մէջ: [Բ. Տիմ. 1. 5]

## ՅՈԳԵՒՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ՄԸ ԶԳԵԼ

**Պ**րափս գեռահաս, քոյրս եւ ես չէինք հասկնար մօրս որոշումը՝  
ընդունելու Յիսուս որպէս իր Փրկիչը, բայց մենք չէինք  
կրնար ժխտել այն փոփոխութիւնները, որ տեսանք իր մէջ։  
Ան ունէր աւելի շատ խաղաղութիւն եւ ուրախութիւն. եւ  
սկսաւ հաւատարիմ ծառայել եկեղեցին։ Աստուածաշունչը  
ուսումնասիրելու այնպիսի քաղցը ունէր, որ յաճախեց եւ  
աւարտեց Աստուածաբանական ձեմարանը։ Մօրս որոշումէն  
քանի մը տարիներ ետք, քոյրս ընդունեց Քրիստոսը եւ սկսաւ  
ծառայել Անոր: Եւ անկէ քանի մը տարիներ ետք՝ ես ալ նոյնպէս  
վստահեցայ Յիսուսի եւ սկսայ ծառայել իրեն։ Շատ տարիներ  
անց՝ հայրս ալ միացաւ մեզի՝ հաւատալով նաեւ Անոր։ Մօրս  
որոշումը Քրիստոսի համար ստեղծեց կեանք փոխող ալիքքային  
ազգեցութիւն՝ մեր անմիջական եւ մեծ ընտանիքին մէջ։

Երբ Պօղոս առաքեալ գրեց իր վերջին նամակը Տիմոթէոսի  
եւ քաջալերեց զինք յարատեւելու Յիսուսի հանդէպ իր  
հաւատքին մէջ, ան նշեց Տիմոթէոսի հոգեւոր ժառանգութիւնը։  
«Երբ կը մտաբերեմ քու մէջդ եղած անկեղծ հաւատքը, որ նախ  
ընակեցաւ մեծ մօրդ՝ Լաւոգեայի ու մօրդ՝ եւնիկէի մէջ, եւ  
համոզուած եմ թէ քու մէջդ ալ կայ» (Բ. Տիմ. 1. 5):

Մայրեր եւ մեծ մայրեր, ձե՛ր որոշումները կրնան ազդել  
սերունդներու վրայ։

Որքա՞ն գեղեցիկ է, որ Տիմոթէոսի մայրն ու մեծ մայրը  
օգնեցին դաստիարակելու իր հաւատքը, որպէսզի ան կարենայ  
դառնալ այն մարդը, որուն Աստուած կը կանչէր։

Այս Մայրերու Օրուան մէջ եւ անդին, եկէ՛ք յարգենք մեր  
մայրերուն, որոնք որոշում կայացուցած են՝ հետեւելու Յիսուսի:  
Հոգեւոր ժառանգութիւն ալ ձգենք նաեւ մեր սիրելիներուն։

**Աղօթ - Յայր Աստուած, շնորհակալ եմ մեր Աստուածապաշտ  
մայրերուն համար։ Կը խնդրեմ, օգնէ իսծի նաեւ հոգեւոր  
ժառանգութիւն ձգելու ուրիշներու համար։ Ամեն։  
Մինչ կը յարգենք մեր Աստուածապաշտ մայրերը, եկէ՛ք հոգեւոր  
ժառանգութիւն մը ձգենք ուրիշներու։**

Տերը կ'ապրի՛. իմ Աստուածս ինծի ինչ որ ըսէ՛  
զայն պիտի խօսիմ: [Բ. Անաց. 18. 13]

## ՄԻԱՅՆԱԿ ԶԱՅՆ ՄԸ

**Փ**արիզի Խաղաղութեան Համաժողովէն ետք, որ աւարտեց  
Առաջին Համաշխարհային Պատերազմը, Ֆրանսացի  
Մարաշախտ Ֆերտինանտ Ֆօշ (Ferdinand Foch) դառնօրէն  
յայտարարեց. «Սա խաղաղութիւն չէ՛: Այս Քսան տարուայ  
զինազադար մըն է՛»: Ֆօշի տեսակէտը հակասեց ժողովրդական  
ընդունուած կարծիքին, որ սարսափելի հակամարտութիւնը՝  
պիտի ըլլայ «բոլոր պատերազմներուն վերջ տալու  
պատերազմը»: Քսան տարի եւ երկու ամիս անց բռնկեցաւ  
Երկրորդ Համաշխարհային պատերազմը: Ֆօշ ճիշդ էր:

Դարեր առաջ՝ Միքիան, այդ ժամանակաշրջանի Աստուծոյ  
միայնակ մարգարէն, հետեւողականօրէն մարգարէացած էր  
Խարայէլի կրելիք՝ սարսափելի արդիւնքներուն մասին (Բ. Մնաց.  
18. 7): Ի հակադրութիւն՝ Աքաաբ թագաւորի չորս հարիւր սուտ  
մարգարէները կանխագուշակեցին յաղթանակ ու պալատի  
պաշտօնական պատգամաւոր մը ըսաւ Միքիային. «Ահա՝  
բոլոր մարգարէները մէկ բերանով թագաւորին համար բարիք  
գուշակեցին. կաղերսեմ, քու խօսքդ ալ անոնց մէկուն խօսքին պէս  
թող ըլլայ, ու բարիք գուշակէ» (Հմ. 12): Միքիան պատասխանեց.  
«Իմ Աստուածս ինծի ինչ որ ըսէ՛ զայն պիտի խօսիմ» (Հմ. 13):  
Ան մարգարէացաւ, թէ ինչպէս է Խարայէլը «լեռներու վրայ  
ցրուած տեսայ՝ հովիւ չունեցող ոչխարներու պէս» (Հմ. 16):  
Միքիան ճիշդ էր: Արամայեցիները սպաննեցին Աքաաբին,  
իսկ անոր զօրքը փախաւ (Հմ. 33-34, Գ. Թագ. 22. 35-36):  
Ցիսուս ըսաւ. «Ո՞չ մէկը կու գայ Հօրը քով՝ բացի միայն  
ինձմով՝ (Ցովհ. 14. 6): Շատեր չեն սիրեր այս պատգամը,  
որովհետեւ խստօրէն նեղացուցիչ կը թուի ըլլալ: Զափազանց  
բացառիկ՝ կ'ըսեն մարդիկ: Սակայն Քրիստոս կը բերէ  
միսիթարական պատգամ մը, որ կը ներարէ բոլորը: Ան կ'ողջունէ  
բոլորին, որոնք կը դիմեն իրեն:

**Աղօթք** - Յա՛յր, կը ինորեմ, տո՛ր ինծի իմաստութիւն՝ Ձու  
ճշմարտութիւնդ հասկնալու համար: Ամէն:  
Չոգին կ'առաջնորդէորոշ բաներ ըսելու կամ ընելու՝ սիրով, երբ Աստուած  
մարտահրաւեր կու տայ մեր սեփական ենդաթրութիւններուն:

Ես ուրախութիւնը դրուատեցի, որովհետեւ մարդ արելին տակ աւելի լաւ բան չունի՝ քան ուտել, իմել եւ ուրախանալ: [Ժողով. 8. 15]

## **ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՍԱՍՏՈՒԹԻՒՆ**

**Փ**աղցը բուրումնաւէտ կեռասի ծառը կը ծաղկի ամէն գարնան հեղեղուն ձաբոնական նուրբ եւ վառ վարդագոյն ծաղիկներով՝ ուրախացնելով ինչպէս բնակիչներուն, այնպէս ալ զբոսաշրջիկներուն: Ծաղիկներու կարճատեւ բնոյթը, ձաբոնացիներուն մօտ կը զարգացնէ խոր գիտակցութիւն մը՝ վայելելու գեղեցկութիւնն ու բոյրը, մինչ անոնք կը պահպանուին. այս դիտաւորեալ հաճոյքը կ'անուանեն բան մը, որ արագ կը փոխուի:

Որպէս մարդիկ, հասկնալի է՝ որ մենք կը ցանկանք փնտռել եւ երկարել ուրախութեան զգացումներ: Սակայն, այն իրականութիւնը, որ կեանքը լի է դժուարութիւններով, կը նշանակէ, որ մենք պէտք է զարգացնենք եւ ցաւը, եւ հաճոյքը սիրող Աստուծոյ հանդէպ հաւատքի ոսպնեակին միջոցով դիտելու կարողութիւնը: Պէտք չէ չափազանց հոռետես ըլլանք, աչ ալ պէտք է մեզի անիրատեսական հայեցք ձեւաւորենք կեանքի նկատմամբ:

Ժողովողի գիրքը մեզի համար օգտակար օրինակ կ'առաջարկէ: Թէեւ այս գիրքը երեեմն կը նկատուի բացասական յայտարարութիւններու գրացուցակ, նոյն Սողոմոն թագաւորը, որ գրեց թէ «ամէն ինչ ունայնութիւն է» (1. 2), նաեւ կը խրախուսէ իր ընթերցողներուն ուրախութիւն գտնել կեանքի պարզ բաներուն մէջ՝ ըսելով. «Մարդ արեւին տակ աւելի լաւ բան չունի՝ քան ուտել, իմել եւ ուրախանալ» (8. 15):

Ուրախութիւնը կու գայ, երբ կը խնդրենք Աստուծմէ օգնել մեզի «իմաստութիւն գիտնալու» եւ սորվիլ պահպանել «Աստուծոյ ըրած բոլոր գործերը» (Հմ. 16-17) ինչպէս գեղեցիկ, այնպէս ալ դժուար եղանակներու մէջ (3. 11-14, 7. 13-14), իմանալով՝ որ ո՛չ մէկը մնայուն չէ՝ երկինքի այս կողմը:

**Աղօթք - Սիրելի Դայր, շնորհակալ եմ, որ իմ կեանքիս մէջ գեղեցկութեան եւ ուրախութեան աղբիւրն ես: Ամեն:**

**Ի՞նչ եղանակի մէջ ես հիմա: Ինչպէ՞ս կրնաս անոր մէջ ուրախութիւն գտնել:**

[Զարախօսը] ստախօս Ե' եւ սուտին հայրը: [Յովհ. 8. 44]

## ՍՈՒՏԵՐ ԵՒ ՇՆԱՐՏՈՒԹԻՒՆ

**Ա**տոլֆ Հնթլէր (*Adolf Hitler*) հաւատաց թէ մեծ սուտերը աւելի հզօր են քան փոքրերը, եւ ողբերգականօրէն՝ ան յաջողութեամբ փորձեց իր տեսութիւնը: Իր քաղաքական գործի սկսիզբը ան կը պնդէր, որ գոհ էր աշակցելու ուրիշներու ըղձանքներուն: Ու երբ եկաւ իշխանութեան, ըսաւ որ իր կուսակցութիւնը մտադիր չէ ոեւէ մէկուն հետապնդելու: Աւելի ուշ ան օգտագործեց լրատուական միջոցները՝ ինքզինք ներկայացնելու որպէս հօր պատկեր եւ բարոյական առաջնորդ մը:

Սատանան կ'օգտագործէ սուտը մեր կեանքին մէջ իշխանութիւն ձեռք բերելու համար: Հնարաւորութեան պարագային՝ վախ, բարկութիւն եւ յուսահատութիւն կ'առաջացնէ, քանի որ ան «ստախօս է եւ սուտին հայրը» (Յովհ. 8. 44): Սատանան չի կրնար ըսել ճշմարտութիւնը, քանի որ՝ ինչպէս ըսաւ թիսուս, անոր ներսիդին որեւէ ճշմարտութիւն չունի:

Ահա թշնամիին սուտերէն քանի մը հատը: Առաջին, մեր աղօթքները նշանակութիւն չունին: Ոչ, անոնք կարեւոր են: Աստուածաշունչը կըսէ. «Արդարին ներգործող աղերսանքը շատ ազգեցիկ է» (Յակ. 5. 16): Երկրորդ, երբ մենք դժուարութեան մէջ ենք, ելք չկայ: Կրկին սխալ է: «Ամէն բան կարելի է Աստուծոյ քով» (Մարկ. 10. 27), եւ «ելք մըն ալ պիտի տայ» (Ա. Կորնթ. 10. 13): Երրորդ, Աստուած մեզ չի՝ սիրեր: Այդ ալ սխալ է: Ոչինչ «պիտի կարենայ զատել մեզ» Աստուծոյ սէրէն Յիսուսի Քրիստոսի միջոցով (Հոռմ. 8. 38-39):

Աստուծոյ ճշմարտութիւնը աւելի հզօր է, քան սուտը: Եթէ մենք հնագանդինք Յիսուսի ուսուացումին իր գօրութեամբ, ապա «ճշմարտութիւնը պիտի գիտնանք», մերժենք ինչ որ սուտ է, եւ «ճշմարտութիւնը պիտի ազատէ մեզ» (Յովհ. 8. 31-32)

**Աղօթք - Սիրելի Յիսուս,** Դուս ես ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը: Կը խնդրե՞մ, օգևէ ինծի կառչիլ այս ճշմարտութիւններուն, որոնք կարդացած եմ Աստուածաշունչին մէջ: Ամէն:

**Կան սուտեր,** որոնց հաւանաբար կը հաւատանք, սակայն Աստուած կրնայ թարմացնել մեր միտքը՝ իր ճշմարտութեամբ:

Ի՞նչ հոյակապ է քու անունդ ամբողջ երկրի վրայ: [Սաղմ. 8. 1]

## ԱՍՏՈՒԹՈՅ ԶԵՌԱԳՈՐԾՈՂ

12 Յուլիս, 2022-ին, գիտնականները կը սպասէին տեսնել ձէյմս Ուէպ (James Webb) նոր տիեզերական աստղադիտակէն ամենախոր տիեզերքի առաջին նկարները: Գերազանց աստղադիտակը կրնայ տիեզերքի ամենէն խոր մասին նայիլ, քան մարդկութիւնը երբէք նայած էր անցեալին: Յանկարծ ի յայտ կու գայ շունչ կտրող պատկեր մը՝ Քարինա Նէպուլա (Carina Nebula) գունաւոր տիեզերական պատկերը, որ նախապէս երբէք այսպիսին չէր տեսնուած: Նասսայի աստղագէտ մը մէջբերեց ծանօթ անաստուած Քարլ Սական (Carl Sagan). «Ի՞նչ որ տեղ մը՝ անհաւանական բան մը կը սպասուի»:

Երբեմն մարդիկ կրնան նայիլ Աստուծոյ աչքերուն եւ չտեսնել զինք: Բայց Սաղմոսներգու Դաւիթը՝ նայեցաւ դէպի երկինք եւ գիրցաւ թէ ճիշդ ի՞նչ կը տեսնէ. «Քու փառաւորութիւնդ երկինքէն վեր դրիբ» (Սաղմ. 8. 1): Սակայն ճիշդ ըսած էր, որ «անհաւանական բան մը կը սպասուի», բայց ան չկրցաւ ընդունիլ այն, ինչ որ Դաւիթ յստակ կերպով ընկալեց. «Երբ տեսնեմ երկինքը՝ քու մատներուդ գործը, լուսինը եւ աստղերը՝ որոնք դուն հաստատեցիր, մարդը ի՞նչ է՝ որ զայն կը յիշես, կամ մարդու որդին՝ որ անոր կ'այցելս» (Հմ. 3-4):

Երբ մենք կը տեսնենք ամենախոր տիեզերքի պատկերները, կը զարմանաք, ո՛չ այնքան գիտութեան համար, հապա կը զարմանանք, որովհետեւ արարչագործութեան մեծութեան մէջ Աստուած մեզ «իր գործերուն վրայ տիրել կու տայ» (Հմ. 6): Իրաւ, «անհաւանական բան մը կը սպասուի», Աստուած, կը սպասէ Յիսուսի հաւատացողներու, որ բերէ իր մօտ, երբ Ան վերադառնայ: Սա՝ բոլորէն աւելի հիասքանչ պատկերն է:

**Աղօթք - Յա՛յր, Արարիչ Աստուա՛ծ, զարմացած եմ երկինքի փառքով եւ Ձու ծեռքիդ գործերուն գեղեցկութեամբ: Ըսորհակալ եմ՝ Ձու զարմանահրաշ ստեղծագործութեան մէջ՝ ինծի հոգատար ըլլալուդ համար: Ամեն:**

**Ի՞նչ խորհուրդներ կ'ունենանք՝ երբ կը նայինք տիեզերքի խոր պատկերներուն եւ ինչպէ՞ս կը զգանք Աստուած անոնց մէջ:**

ԱՍՏՈՒԱԾՈՒՅՉ ՄԷԿ ՏԱՐՈՒԱՆ ՄԷԶ | Դ. Թագաւորաց 24-25 - Յովհաննու 5. 1-24

ՄԵՆՔ Կ'ՈՒՂԵՆՔ ՀԵռանալ մարմիննեն ու մօտ  
ըլլալ Տեղոց: [Բ. Կորութ. 5. 8.]

## ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

**Ը**նկերուհիս՝ ծօէննը (Joann) մահացաւ կաթուածէն՝ ճիշդ այն ժամանակ, երբ Պատառոր ժահը սկսաւ տարածուիլ 2020 թուականին: Նախ իր ընտանիքը յայտարարեց թէ անոր յիշատակի պաշտամունքը տեղի պիտի ունենայ եկեղեցին՝ մէջ, սակայն յետոյ որոշեց՝ որ աւելի լաւ պիտի ըլլայ՝ արարողութիւնը կատարել թաղման տան մէջ՝ որպէսզի կարելի ըլլայ սահմանափակել ներկաներուն թիւը: Առցանց ծանուցումը այսպէս կ'ըսէր. «Ճօէնն Ուարնըրգ - Փոխուած Վայր»:

Այո, անոր վայրը փոխուած էր: Ան գացած էր երկրի վայրէն՝ դրախտի վայրը: Աստուած փոխեց անոր կեանքը տարիներ առաջ եւ ան սիրով ծառայեց Աստուծոյ՝ մօտ յիսուն տարիներ: Նոյնիսկ երբ մահամերձ պարկած էր հիւանդանոցը, ան հարցուց ուրիշներու մասին, որոնց կը սիրէր եւ գիտէր թէ անոնք կը պայքարէին դժուարութիւններու դէմ: Այժմ ան ներկայ է Անոր հետ. ան փոխած է հանդիպումի վայրը:

Պողոս առաքեալ ցանկութիւն ունէր Քրիստոսի հետ ըլլալու մէկ այլ վայրի մը մէջ (Բ. Կորնթ. 5. 8), բայց ան նաեւ կը կարծէր, որ աւելի լաւ կ'ըլլար, որ մարդիկ՝ որոնք իրեն համար ծառայեցին՝ մնային երկրի վրայ: Ան գրեց Փիլիպպեցիներուն. «Մարմինի մէջ մնալը աւելի հարկաւոր է ձեզի համար» (Փիլ. 1. 24): Երբ մենք կը սգանք ծօէննին նման մէկու մը համար, մենք կրնանք նման բան մը աղաղակել Աստուծոյ. «Անոնք պէտք են այստեղ՝ ինձի եւ շատ ուրիշներու համար, որոնք սիրեցին ու ծառայեցին»: Բայց Աստուած գիտէ՛, թէ ե՞րբ է անոնց ու մեր վայրը փոխելու լաւագոյն ժամանակը:

Հոգիին գօրութեամք՝ մենք այժմ «պատիւ կը համարենք ընդունելի ըլլալ անոր» (Բ. Կորնթ. 5. 9), մինչեւ տեսնենք գինք դէմ առ դէմ, ինչ որ շատ աւելի լաւ պիտի ըլլայ:

**Աղօթք** - Սիրելի Յայր, ես իմ անծս կը յանձնե՞մ թեզի ու կը խնդրե՞մ, որ լեցնես զիս օրու սիրոյ Յոգիով եւ կեանքս հաշու՞մ թեզի համար: Ամէն: Ինչպէ՞ս կը բացայատենք մեր սէրը Աստուծոյ եւ ուրշներուն հանդէպ, ուր որ ալ ըլլանք: Ինչպէ՞ս կրնանք ծառայել Իրեն այսօր:

Կստուծոյ Հոգիով լեցուցի օայն՝ իմաստութեամբ, հանճարով ու գիտութեամբ, ամեն տեսակ գործի համար: [Ել. 31. 3]

## ԱՍՏՈՒՇՄԷ ԿԱՆՉՈՒԱԾՈ ՈՒ ԶԻՆՈՒԱԾՈ

**Գ**ործի զեկավարը տեղեկացուց ինծի. «Գիրքի Միջազգային Ցուցահանդէսի ընթացքին՝ քու գործդ է՝ կազմակերպել ձայնասփիւռի հաղորդումներ»: Ես՝ վախ զգացի, քանի որ այս, ինծի համար նորութիւն էր: Աղօթեցի. «Աստուած, ես երբէք նման բան չեմ ըրած, կը խնդրեմ օգնէ ինծի»:

Աստուած տրամադրեց միջոցներ ու մարդիկ՝ զիս առաջնորդելու համար. փորձառու մասնագէտներ եւ ձայնասփողներ, առաւել յիշեցումներ ցուցահանդէսի ընթացքին՝ այն բաներուն մասին, որոնք կրնայի նկատի չառնել: Յետադարձ ակնարկ մը նետելով՝ ես գիտեմ, որ ձայնասփոռումը լաւ եղած է, քանի որ Ան գիտէր, թէ ի՞նչ է անհրաժեշտ եւ զիս դրդեց, որ օգտագործեմ՝ այն հմտութիւնները, որոնք Ան արդէն տուած էր ինծի»:

Երբ Աստուած մեզ կը կանչէ որեւէ գործի, Ան նաեւ կը պատրաստէ մեզ ատոր համար: Երբ Ան յանձնարարեց որ Բեսելիէլը աշխատի խորանին վրայ, Բեսելիէլ արդէն հմուտ արհեստաւոր էր: Աստուած՝ յետադային զինեց անոր՝ լեցնելով զինք իր Հոգիով եւ իմաստութեամբ, հանճարով ու գիտութեամբ» (Ել. 31. 3): Աստուած անոր նաեւ օգնական մը տուալ Ոհողիաբը, ինչպէս նաեւ հմուտ աշխատուժ (Հմ. 6): Անոր օգնութեամբ, խումբը նախագծեց եւ պատրաստեց վրանը, ատոր կահաւորումը եւ քահանաներուն տարագները: Ասոնք մեծ դեր ունեցան հսրայէլացիներու կողմէ՝ Աստուծոյ պատշաճ փառաբանութեան մէջ (Հմ. 7-11):

Բեսելիէլ՝ կը նշանակէ «Աստուծոյ ստուէրին կամ պաշտպանութեան մէջ»: Արհեստաւորները աշխատեցան Աստուծոյ նախատեսութեան, զօրութեան եւ ապահովութեան ներքեւ՝ կեանքի ծրագիրի վրայ: Եկէք խիզախօրէն հնազանդինք՝ Անոր տուած յիշեցումներուն, երբ կը կատարենք առաջադրանքը՝ մինչեւ վերջ: Ան գիտէ՛, թէ ի՞նչ պէտք է մեզի, ինչպէ՞ս եւ ե՞րբ տալ զանոնք:

**Աղօթք - Դա՛յր, շնորհակալ եմ, որ զի՞ս զիսեցիր այս ամեն բաներով, որոնց կարիքը ունիմ: Ամեն:**

**Ի՞նչ բանի համար Աստուած կը կանչէ քեզ: Ի՞նչ բաներու մէջ կամ համար դուս կրնաս աղօթել՝ խնդրելով իր առաջնորդութիւնը:**

Փրկութիւնը մեր Աստուծոյնն է՝ որ կը բազմի  
գահին վրայ, նաեւ Գառնուկին: [Յայտ. 7. 10]

## ԱՍՏՈՒՅԾ ԲԱՆԱՉԵԼԻ ԴԱՐՁՆԵԼ

**Ա**ստուծոյ եւ մարդոց հանդէպ սէրը՝ հիմքն է Գաղրինի: (Kathryun) Աստուածաշունչի թարգմանական աշխատանքին: Ան կ'ուրախանայ, երբ Հնդկաստանի մէջ՝ կիներ աւելի խոր կերպով կը հասկնան Աստուածաշունչը՝ կարդալով զայն իրենց մայրենի լեզուով: Ան կը նշէ, որ երբ անոնք կարդան, «Ճաճախ կը սկսին ծափ գառնել եւ ցնծալ: Անոնք կը կարդան Յիսուսի մասին ու կ'ըսեն. ‘Ռ՛հ, հիանալի’»:

Գաղրին կը ցանկայ, որ աւելի շատ մարդիկ կարդան Աստուածաշունչը իրենց լեզուով: Այս ցանկութեան մէջ՝ ան իր սիրտին մօտ կը պահէ Պատմոս կղղիին մէջ ծերացող աշակերտ Յովհաննէսի տեսիլքը: Հոգիին միջոցով՝ Աստուած անոր տարաւ գրախափ գահի սենեակը, ուր ան տեսաւ «մեծ բազմութիւն մը, որ ոչ մէկը կրնար համրել, բոլոր ազգերէն, տոհմերէն, ժողովուրդներէն ու լեզուներէն: Անոնք կայնած էին գահին առջեւ եւ Գառնուկին առջեւ» (Յայտ. 7. 9): Անոնք բոլորը միասին երկրպագեցին Աստուծոյ՝ ըսելով. «Փրկութիւնը մեր Աստուծոյն է» (Հմ. 10):

Աստուած կը շարունակէ աւելցնել շատեր՝ զինք գովաբանող մարդոց մեծ թիւին: Ան կը գործածէ ոչ միայն Աստուածաշունչի թարգմանիչներ եւ անոնց համար աղօթողներ, այլ անոնց, որոնք Յիսուսի բարի լուրը կը հասցնեն իրենց շուրջ եղողներուն: Մենք կրնանք ուրախանալ այս ուրախ առաքելութեամբ՝ զարմանալով, թէ ինչպէ՞ս Աստուած կը ստիպէ աւելի շատ մարդոց միանալ հրեշտակներուն հետ՝ ըսելով. «Ամէ՞ն. օրհնութիւն, փա՛ռք, իմաստութիւն, շնորհակալութիւն, պատի՛ւ, գօրութիւն ու կարողութիւն մեր Աստուծոյն՝ դարէ դար: Ամէն» (Հմ. 12):

**Աղօթք** - Փրկող Աստուած, շնորհակալ եմ Յիսուսի պարգեւին համար: Կը ինորե՛մ, օգնէ ինծի բաժնեկցիլ Զու հրաշալի սերդ՝ ուրիշներու հետ: Ասէ՞ւ:

Աստուած կը դրդէ մարդիկ, որ զինք գովաբանեն ու պատուեն: Ան կը հրաւիրէ նաեւ մե՛զ, որ միանանք Յիսուսի բարի լուրը տարածելու իր առաքելութեան:

Ձեզի պիտի այցելեմ ու ձեզի տուած իմ բարի խոստումս պիտի հրագործեմ՝ ձեզ այս տեղը վերադարձնելով: [Եր. 29. 10]

## ԱՍՏՈՒԱԾ՝ ԱՆՑԵԱԼԻՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԻՆ ՄԷՋ

**Տ**արիներ անցած են այն օրէն, երբ ձգեցինք Օրիկօն (Oregon) քաղաքը, ուր մեծցուցինք մեր ընտանիքը: Մենք հիանալի յիշատակներ ունինք այդ տեղէն եւ վերջերս կատարած մեր այցելութիւնը, ինծի յիշեցուց այն պահերը, որոնք մոռցած էի. մեր աղջկիներուն ֆութպօլի խաղերը, մեր հին տունը, եկեղեցական հաւաքոյթները եւ մեր ընկերներուն Մեքսիքական ճաշարանը: Քաղաքը փոխուած էր, բայց բաւական ծանօթներ կային, որպէսզի այցելութեան համար վերադառնալու ցանկութիւնս աւելցնեն:

Երբ իսրայէլացիները աքսորուեցան Բաբելոն, անոնք կարօտը ունեցան մարդոց ծանօթութեան, տեսարժան վայրերու եւ մշակոյթի: Անոնք մոռցան որ աքսորուած էին՝ Աստուծոյ դէմ ապստամբելու համար: Երբ սուտ մարգարէները ըսին աքսորեալներուն, որ անոնք տուն կը վերադառնան երկու տարիներու ընթացքին (Եր. 28. 2-4, 29. 8-9), անոնք գտան ընկալող ժողովուրդ մը: Հեշտ էր լսել սուտ մարգարէներու խորամանկ խօսքերը, որոնք կը խոստանային չուտով տուն վերադառնալ:

Աստուած բարիացակամ չվերաբերեցաւ անցեալի այս առեւտրականներուն եւ անոնց կեղծ խոստումներուն: Ան ըսաւ. «Զեր մէջ եղող ձեր մարգարէներն ու ձեր դիւթերը ձեզ թող չհրապուրեն» (29. 8): Ան ծրագիրներ ունէր իր ժողովուրդին համար, «ծրագիրներ՝ անոնց ապագայ մը եւ յոյս մը տալու համար» (Հմ. 11): Իրավիճակը մարտահրաւէրներով լեցուն՝ դժուար էր ու նոր, բայց Աստուած իրենց հետ էր: Ան ըսաւ. «Զիս պիտի փնտոէք եւ պիտի գտնէք, որովհետեւ ձեր ամբողջ սիրտով զիս պիտի որոնէք» (Հմ. 13): Աստուած անոնց պիտի վերադարձնէր «այն տեղը, ուրկէ փոխադրէր էր» (Հմ. 14). բայց իր ժամանակին մէջ: Հայրենաբաղձութիւնը խաղ կը խաղայ մտքին վրայ՝ Բայց Աստուած կը կատարէ իր խոստումը:

**Աղօթք - Յա՛յր,** թող որ թեզ որոնեմ Ներկային մէջ ու ո՛չ թէ ցանկութիւն ունենամ անցեալին համար: Ասմէն:

**Երբ դժուարութիւններ եւ նեղութիւններ դիմագրաւենք,** յիշե՛նք թէ Աստուած բարի ու հաւատարիմ Ե՛ մեզի իր տուած խոստումները իրագործելու համար:

Եսաւ վազեց զայն դիմաւորելու. զայն գրկեց, անոր վիզին վրայ ինկաւ, զայն համբուրեց, եւ լացին: [Ծն. 33. 4]

## ԸՆԴԱՐՁԱԿԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ

**Բ**արութի՞ւն, թէ՛ վրէժ: Եսային (*Isaiah*) գլխուն անակնկալ գնդակի հարուած մը ստացաւ, Պէյսպօլի տեղական Փոքր Լիկայի ախոյանութեան խաղի մը ժամանակ: Ան գլուխը բռնած գետին ինկաւ: Բարեբախտաբար, անոր սաղաւարտը պաշտպանեց զինք՝ լուրջ վնասուելէ: Երբ խաղը վերսկսաւ, Եսայի նկատեց որ գնդակ նետողը ցնցուած էր՝ իր ըրած ակամայ սխալէն: Այդ պահուն Եսայի այնքան արտասովոր բան մը ըրաւ, որ իր պատախանին տեսաերիզը տարածուեցաւ: Ան մօտեցաւ գնդակը նետողին, անոր վիզին փաթթուեցաւ համոզիչ կերպով, վատահեցնելու անոր որ ամէն ինչ կարգին է:

Վիճակի մը մէջ, որը կարելի էր ծեծկուառուքի վերածուիլ, Եսայի ընտրեց բարութիւնը:

Հին Կտակարանին մէջ, մենք կը տեսնենք, որ Եսաւ նման, թէեւ շատ աւելի բարդ ընտրութիւն մը կ'ընէ, հրաժարելով՝ իր խաբեբայ երկորեակ եղբօր Յակոբին դէմ վրէժ լուծելու վաղեմի ծրագիրէն: Երբ Յակոբ վերադարձաւ տուն՝ քսան տարիներ աքսորուելէ ետք, Եսաւ ընտրեց բարութիւն եւ ներողամտութիւն՝ վրէժ լուծելու փոխարէն, թէ ինչպէս Յակոբ իրեն հետ վարուած ըլլալուն համար: Երբ Եսաւ տեսաւ Յակոբին, «վազեց զայն դիմաւորելու եւ գրկեց զայն» (Ծնն. 33. 4): Եսաւ ընդունեց Յակոբի ներողութիւնը եւ յայտնեց անոր, որ ամէն ինչ կարգին է (Հմ. 9-11):

Երբ մէկը կը զղջայ մեր դէմ իր կատարած սխալին համար, մենք ընտրութիւն ունինք բարութիւն կամ վրէժինդրութիւն ընելու: Բարութեամբ ընդունելու ընտրութիւնը՝ կը հետեւի Յիսուսի օրինակին (Հոռմ. 5. 8) եւ հաշտութեան ճանապարհին:

**Աղօթք - Տէր Յիսուս, կը ինսդրե՛մ օգնէ ինծի հետեւելու քու օրինակիդ եւ ողորմութիւն ցուցաբերելու, երբ ինծի դէմ անարդարութիւն ըլլայ: Ամեն:**

**Ե՞րբ բարութիւն տեսած ես՝ սխալ մը ընդունելէ ետք: Ինչպէ՞ս կրնաս բարութիւն դրսեւորել՝ ուրիշի մը հանդէավ:**

Վրդարեւ Տերոց աչքերը ամբողջ երկրին մէջ կը շրջագային, որպէսզի իրեն կատարեալ սիրտով յարողները ուժովցնե: [Բ. Սևաց. 16. 9]

## ՊԱՐՊԱՆԵԼՈՎ ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ԵԶՐԸ

**Ռ**օքդի (Rocky) Փիլմերը կը պատմեն պարզ բոնցքամարտիկի մը մասին, որ կը սնուի երբէք չմեռնելու վճռակամութեամբ՝ ու կը յաղթէ ամէն տեսակի անհաւանականութեան խոչնդոտ ախոյեան դառնալու համար: Ռօքդի Գ. Փիլմին մէջ, այժմ յաջողակ Ռօքդին՝ տպաւորուած է իր սեփական ձեռքբերումներով: Հեռուստացոյցի գովազդները կը խաթարեն անոր ժամանակը մարզասրահին մէջ: Ախոյեանը կը դառնայ փափուկ եւ գետին կը խորտակուի՝ մրցակիցի մը կողմէ: Ֆիլմին մնացեալ մասին մէջ՝ Ռօքդի կը փորձէ վերականգնել իր մարտունակութիւնը:

Հոգեւոր իմաստով՝ Յուղայի Ասա թագաւորը կորսնցուց իր մարտունակութիւնը: Իր գահակալութեան սկիզբը, ան ապաւինեցաւ Աստուծոյ սարսափելի դժուարութիւններու ատեն: Երբ հզօր Եթովպիհացիները կը պատրաստուէին յարձակելու, Ասա աղօթեց. «Մեզի օգնէ՛, ո՞վ Տէր, մեր Աստուածը, որովհետեւ քեզի ապաւինեցանք եւ այս բազմութեան դէմ քու անունովդ եկանք» (Բ. Մնաց. 14. 11): Աստուած պատասխանեց անոր աղօթքին, Յուղան հարուածեց եւ ցիր ու ցան ըրաւ թշնամիները (Հմ. 12-15):

Տարիներ ետք՝ Յուղայի դարձեալ սպառնացին: Այս անգամ ինքնագոհ Ասան անտեսեց Աստուծոյ եւ փոխարէնը՝ օգնութիւն խնդրեց Արամի թագաւորէն (16. 2-3): Կարծես յաջողեցաւ: Բայց Աստուած գոհ չէր. Հանանի մարգարէն Ասային ըսաւ, որ ան դադրած է Աստուծոյ վստահելէ (Հմ. 7-8): Ինչո՞ւ հիմա ան Աստուծոյ չէր ապաւիներ, ինչպէս ըրաւ այն ժամնակ:

Աստուած անկասկած վստահելի է: Անոր աչքերը «ամբողջ երկրին մէջ կը շրջագայէն, որպէսզի իրեն կատարեալ սիրտով յարողները ուժովցնէ» (Հմ. 9): Երբ պահենք մեր հոգեւոր առաւելութիւնը՝ պիտի զգանք Անոր զօրութիւնը:

**Աղօթք - Սիրելի Յիսո՞ւս, թող որ ես ամե՞ն օր աւելի շատ հանգստանամ՝ թու մէջդ: Աւել:**

**Մեր տարիքը առնելով՝ աւելի հեշտ է՝, թէ դժուար՝ վստահիլ Երկնաւոր Յօր: Ինչո՞ւ կը կարծես որ այդպէս է: Սակայն յիշե՞նք թէ Աստուած կրնայ մեր հաւատը զօրացնել:**

Երկինքը Կստուծոյ փառքը կը պատմե: [Սաղմ. 19. 1]

## ՆԱՅԻՐ ԴԷՊԻ ԵՐԿԻՆՔ

Ալեքս Սմոլլին (Alex Smalley) կուգէ որ ամէն մարդ առաւօտուն կանուխ արթննայ, կամ գուցէ՝ աւելի շատ դադար առնէ օրուան վերջաւորութեան: Ինչո՞ւ: Արեւածագին եւ մայրամուտին նայելու համար: Այդ անցողիկ պահերը՝ օրուան ամենագեղեցիկ եւ ակնածանք ներշնչող ժամանակներն են, ըստ Սմոլլիի՝ ակնածանք առաջացնող եղանակային ազգեցութիւններու Բրիտանական հետազոտութեան առաջատար հետազօտողին: Նոյնիսկ աւելի քան կապոյտ երկինքը՝ կամ շողջողացող գիշերային տեսարանները, ցնցող արեւածագը կամ մայրամուտը, կրնան բարելաւել մեր տրամադրութիւնը, աւելցնել մեր դրական յոյզերը եւ նուազեցնել ճնշումները: Սմոլլին կ'ըսէ. «Երբ կը տեսնէք հսկայական եւ ապշեցուցիչ տեսարան մը, կամ քան մը որ կ'առաջացնէ այս ակնածանքի զգացումը, ձեր անձնական խնդիրները կրնան պակսիլ եւ դուք այդքան ալ անհանգիստ չըլլաք անոնց մասին»:

Հրաշքներու մասին անոր բացայացումները կը կրկնեն երեմիա մարդաբէի խօսքերը. «Ո՛չ, Տէ՛ր Եհովիա, ահա դուն քու մեծ կարողութեամբդ եւ երկարած բազուկովդ երկինքն ու երկիրը ստեղծեցիր. ո՛չ մէկ քան քեզի համար դժուար է» (Եր. 32. 17):

Դաւիթ նոյնպէս տեսաւ Աստուծոյ ստեղծագործութիւնը՝ յայտարարելով. «Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ» (Սաղմ. 19. 1): Ի՞նչ կը վերաբերի արեգակին, երկինքի մէկ ծայրէն կ'ելլէ, ու կը շրջի մինչեւ միւս ծայրը. ոչի՞նչ կը ծածկուի անոր տաքութենէն»: Ուստի կը գրէ Դաւիթ. «Տէրող Օրէնքը անթերի է, անձը կը վերանորոգէ» (Հմ. 7): Աստուծոյ փառաւոր ստեղծագործութիւնը կ'արտացոլայ ամենահզօր Արարիչը: Ինչո՞ւ այսօր ժամանակ չյատկացնել երկինք նայելու եւ իրմով հիանալու համար:

**Աղօթք - Յա՞յր, Ձու փառահեղ երկինքին մէջ, ցոյց կու տաս ինծի քու օրութեանդ հրաշքը: Ամէն::**

**Ո՞ւր է քու նախասիրած վայրը՝ արեւածագը կամ մայրամուտը դիտելու համար: Երբ կը տեսնես երկինքը, ի՞նչ կը բացայատես Աստուծոյ մասին:**

Կստուած մեզ կը պատժէ՝ մեր օգուտին համար, որպէսզի  
բաժին ստանալու իր սրբութենեն: [Եթ. 12. 10]

## ՅԱՄԲՈՅՐՈՎ ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ

**Ի**բ «Իմաստուն Կինը» առակին մէջ ձորձ Մէկծանըլտ (George MacDanold) կը պատմէ երկու աղջիկներու պատմութիւնը, որոնց եսասիրութիւնը դժբախտութիւն կը պատճառէ բոլորին, մէջը ըլլալով՝ իրենք, մինչեւ որ իմաստուն կին մը կ'ենթարկէ զանոնք շարք մը քննութիւններու, որպէսզի օգնէ անոնց՝ որ դարձեալ «սիրուն» ըլլան:

Աղջիկները՝ իւրաքանչիւր քննութեան մէջ ձախողելէ, ամօթով տառապելէ եւ մեկուսանալէ ետք, անոնցմէ մէկը՝ Ռոզմօնտ (Rosemond) վերջապէս կը հասկնայ, որ չի կրնար փոխել ինքինք: «Զէի՞ր կրնար օգնել ինծի», ան հարցուց իմաստուն կնոջ: «Մի գուցէ կրնայի», կը պատասխանէ կինը, «Հիմա որ դուն կը հարցնես»: Եւ իմաստուն կնոջ խորհրդանշած աստուածային օգնութեամբ՝ Ռոզմօնտ կը սկսի փոխութիւնը: Ցեսոյ՝ ան կը հարցնէ, թէ արդեօք կինը կը ներէր իր պատճառած բոլոր հարցերուն: «Եթէ ես քեզ չներէի» կ'ըսէ կինը, «Ես երբէք չէի պատմէր քեզ»:

Կ'ըլլան ժամանակներ, երբ Աստուած կը խրատէ մեզ: Կարեւոր է հասկնալ, թէ ինչո՞ւ: Անոր սրբագրութիւնը պայմանաւորուած է՝ ո՞չ թէ հատուցումով, այլ մեր բարօրութեան համար հայրական հոգածութեամբ (Եթ. 12. 6): Ան նաեւ կը ցանկայ, որ մենք կարենանք «բաժին ստանալ իր սրբութենէն», վայելելով «արդարութեան խաղաղարարար պտուղը» (Հմ. 10-11): Եսասիրութիւնը կը բերէ դժբախտութիւն, բայց սրբութիւնը մեզի կը դարձնէ իրեն նման ամբողջական, ուրախ եւ «սիրուն»:

Ռոզմօնտ կը հարցնէ իմաստուն կնոջ, թէ ինչպէ՞ս կրնայ սիրել իր նման եսասէր աղջիկ մը: Կինը ծոելով անոր համբուրելու համար կը պատասխանէ: «Տեսայ թէ ի՞նչ պիտի ընես»: Աստուծոյ սրբագրութիւնը նոյնպէ՞ս կու գայ սիրով եւ մեզի այնպիսի մէկը դարձնելու ցանկութեամբ, որ մենք պէտք է ըլլանք:

**Աղօթք - Յա՛ր Կստուած, շնորհակալ եմ Ձո՛ւ տուած ուղղութեանդ համար, որքան ալ ցաւալի ըլլայ այդ: Դո՛ւ իմ լաւութեանս համար կ'ընես: Ամեն:**

**Աստուծոյ խրատը լաւ հասկնալու ենք, ընդունելով՝ որ Ան կրնայ մեզ «սիրուն դարձնել»:**

Ուրեմն մենք դեսպաններ ենք Թրիստոսի համար, ...  
կ'աղերսենք ծեզի Թրիստոսի կողմէն, հաշտուցե՛ք  
Աստուծոյ հետ: [Բ. Կորուսթ. 5. 20]

## ԱՆՈՆՑ ԸՆԵ՛Ր ԹԷ ԱՍՏՈՒԱԾՈ Ի՞ՆՉ ԸՐԱՒ

**Գ**ոլէճի ընկերու Պիլլ Թօպեաս (Bill Tobias) երկար տարիներ ծառայած է որպէս միսիոնար Խաղաղական ովկիանոսի կղզիներէն մէկուն վրայ: Ան կը պատմէ պատմութիւնը երիտասարդի մը մասին, որ լքած է իր Հայրենի քաղաքը իր բախտը փնտուելու համար: Բայց ընկեր մը զինք տարաւ եկեղեցի, որտեղ ան լսեց Յիսուսի առաջարկած բարի լուրը, եւ վստահեցաւ Քրիստոսի՝ որպէս իր Փրկիչը:

Երիտասարդը ուզեց աւետարանը տանիլ իր ժողովուրդին, որոնք «կախարդութեան մէջ թաթախուած» էին, ուստի ան փնտուեց միսիոնար մը, որ հասնի անոնց: Բայց միսիոնարը անոր ըստ պարզապէս «Գնա՝ տունդ քուկիններուդ քով, ու պատմէ՛ անոնց ամէն ինչ որ Տէրը ըրաւ քեզի» (տե՛ս Մարկոս 5. 19): Եւ ան այդ մէկը ըրաւ: Իր Հայրենի քաղաքին մէջ քանի մը հոգի ընդունեցին Յիսուսի, բայց ամենամեծ առաջընթացը եղաւ այն ատեն, երբ քաղաքի կախարդը հասկցաւ, որ Քրիստոս է «ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յովհ. 14. 6): Յիսուսի հաւատալէ ետք, ան ամբողջ քաղաքին պատմեց Անոր մասին: Զորս տարուան ընթացքին մէկ երիտասարդի վկայութիւնը՝ առաջնորդեց տարածաշրջանին մէջ եօթը եկեղեցիներուն հիմնադրութեան:

Բ. Կորունթացիսին մէջ՝ Պօղոս կը ներկայացնէ աւետարանը ծանօթացնելու յստակ ծրագիր մը անոնց, որոնք տակաւին չեն ճանչնար Քրիստոսի եւ այդ կը համապատասխանի այն ինչ որ միսիոնարը ըստ Յիսուսի հաւատացող երիտասարդին: Մենք պէտք է ըլլանք «Քրիստոսի դեսպանները»՝ Անոր ներկայացուցիչները, «որպէս թէ Աստուած կ'աղաչէր ձեզի մեր միջոցով» (5. 20): Իւրաքանչիւր հաւատացեալ ունի իր փրկութեան պատմութիւնը: Եկէք պատմենք ուրիշներու, թէ Ան ի՞նչ ըրած է մեզի համար:

**Աղօթք - Սիրելի Աստուած՝ օգնէ՛ ինծի որ բաժնեկցիմ իմ հաւատոքի պատմութիւնս ուրիշներու հետ: Ամէն:**

Ի՞նչ կը նշանակէ Յիսուսով փրկութիւնը: Ինչպէ՞ս կրնաս աւելի լաւ պատրաստուած ըլլալ՝ քու պատմութիւնդ ուրիշներու հետ բաժնեկցելու:

Անոնց մոխիրի տեղ խոյր տալու, սուզի տեղ՝  
բերկուանքի հոտաւետ իւղ, ու մռայլ հոգիի  
տեղ՝ գովաբանութեան հագուստ: [Ես. 61. 3]

## ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ՝ ՀՈՂԻ ՓՈԽԱՐԷՆ

**Ե**րեկոյ մը, նկատեցի հողի կոկիկ շարքեր իմ տանս մօտ՝  
գտուող ազատ տարածքին վրայ: Իւրաքանչիւր շարք՝  
կը պարունակէր փոքր կանաչ տերեւներ, որոնցմէ՝ դուրս կը  
ցայտէին փոքրիկ բողբոջներ: Յաջորդ առաւտո՛ կանգ առի, երբ  
տեսայ գեղեցիկ կարմիր կակաչներ, որոնք կը բողբոջէին այդտեղ:

Նախորդ աշնան, խումք մը՝ տնկած էր հարիւր հազար  
կոճէզ, Շիքակոյի (Chicago) հարաւային մասի դատարկ  
տարածքներուն մէջ: Անոնք ընտրեցին կարմիրը՝ խորհրդանշելու  
համար, թէ ինչպէս կարմիր գիծերը (դրամատուներու կողմէ  
վարկերու տրամադրումի խտրականութիւնը) ազգած էին  
այն շրջաններուն վրայ, ուր հիմնականին մէջ կ'ապրէին  
փոքրամասնութիւններ: Կակաչները կը խորհրդանշէին այն  
տուները, որոնք կրնային ըլլալ այդ շրջաններուն մէջ:

Աստուծոյ ժողովուրդը գտուարութիւններուն տոկաց՝ իրենց  
հայրենիքէն աքսորուած ըլլալէն սկսած մինչեւ կարմիր գիծերու  
նման խտրականութիւն: Մենք տակաւին կրնանք յոյս գտնել:  
Եսայի աքսորի ժամանակ կը յիշեցնէ հսրայէլի, որ Աստուծած  
չի թողուր անոնց: Ան՝ անոնց «գեղեցկութեան պսակ» կու տայ՝  
մոխիրի փոխարէն: Նոյնիսկ աղքատները կը ստանան «բարի  
լուր»ը (61. 1): Աստուծած խոստացաւ յուսահատ հոգիները  
փոխանակել «գովաբանութեան հագուստով»: Այս բոլոր  
պատկերները կ'առաջացնեն Անոր շքեղութիւնը եւ ուրախութիւն  
կը պատճառեն մարդոց, որոնք այժմ «արդարութեան բեւեկներ»  
կըլլան, վհատած աքսորեալներու փոխարէն (հմ. 3): Այդ  
կակաչները նաեւ ցոյց կու տան, որ Աստուծած կրնայ շքեղութիւն  
ստեղծել կեղտէն եւ խտրականութենէն: Ես անհամբեր կը  
սպասեմ կակաչներ տեսնելու ամէն գարնան, եւ աւելի կարեւորը  
վերանորոգուած յոյս իմ շրջանիս եւ այլ գաղութներու մէջ:

**Աղօթք - Յա՛յր, շնորհակալ եմ Ձեզի՝ այս գեղեցկութեան  
համար, որ Դուն թոյլ կու տաս ինծի տեսնելու, նոյնիսկ երբ իս  
պարագաներս սարսափելի կը թուին ըլլալ: Ամէն:**  
**Եթէ տեսած ես գեղեցկութիւն յուսահատութեան փոխարէն:  
Ինչպէ՞ս կրնաս գեղեցկութիւն ստեղծել՝ յուսահատութեան մէջ:**



Ձեր ոսոյսը, Զարախօսը՝ կը շրջի մռնչող առիւծի պէս,  
փևտուելով թէ ո՞վ կլլէ: [Ա. Պետ. 5. 8]

## ԵՐԲ ԺԱՄՆԱԿՆ Է

**Ե**րբ ընկերներս՝ էլ եւ Գէթի Շիֆֆըր (*Al and Kathy Schiffer*) սաւառնեցին երկրորդ Համաշխարհային Պատերազմի շրջանի սաւառնակ մը՝ օդանաւերու ցուցագրութեան մը, տարեց վեթերաններուն արձագանքն էր ամենէն իմաստալիցը՝ իրենց համար: Անոնք կու գային խօսելու այն պատերազմներուն մասին, ուր ծառայեցին եւ սաւառնակներ վարեցին: Անոնց մարտական պատմութիւններուն մեծ մասը, կը պատմէին արցունքու աչքերով: Շատեր ըսած էին, թէ լաւագոյն լուրը, որ ստացած էին իրենց երկրին համար ծառայելու ընթացքին, «պատերազմը աւարտած է տղաներ եւ տո՛ւն երթալու ժամանակն է» խօսքերն էին:

Աւելի վաղ սերունդի այս խօսքերը կը վերաբերին այն պատերազմին, որով կը զբաղէին Յիսուսի հաւատացողները, որ մեր հաւատքի բարի պատերազմն է սատանային՝ մեր հոգիներուն թշնամիին դէմ: Պետրոս առաքեալ՝ նախազգուշացուց մեզի: «Զեր ոսոյսը, Զարախօսը՝ կը շրջի մոնչող առիւծի պէս, փնտուելով թէ ով կլլէ»: Ան կը փորձէ մեզ տարբեր ձեւերով եւ յուսահատութիւնը կ'օգտագործէ տառապանքի եւ հալածանքի մէջ՝ փորձելով մեզ հեռացնել Տէր Յիսուսի հանդէպ մեր ունեցած հաւատքէն: Պետրոս մարտահրաւէր տուաւ իր առաջին ընթերցողներուն եւ մեզի՝ այսօր, որ «զգաստ եւ արթո՛ւն» ըլլանք (*Ա. Պետ. 5. 8*): Մենք կախեալ ենք Սուրբ Հոգիէն, այնպէս որ մենք թոյլ չենք տար, որ թշնամին ստիպէ մեզ յանձնել կոհւը եւ մեզ վար ձգէ:

Երբ Յիսուս վերադառնայ օր մը, Անոր խօսքերը կ'ունենան այնպիսի ազգեցութիւն, ինչպիսին էր զիուորներու զգացումը, արցունքներ առաջացնելով մեր աչքերուն եւ ուրախութիւն՝ մեր սիրտերուն. «Պատերազմը աւարտած է՝ տղաներ եւ տո՛ւն երթալու ժամանակն է»:

**Աղօթք - Ամենակարող Աստուած**'ծ, Դուն շատ աւելի մեծ ես, քան ուեւ մեկը կամ որեւէ բան, որ կեցած է դիմաց: Կը խնդրեմ՝ օգնէ ինծի՝ որ ապահնիմ Ըու ուժիդ եւ զօրութեանդ: Ամէն: Աստուծոյ օգնութեան պէտք ունինք՝ սատանային ծրագիրներուն դէմ դնելու համար: Մեր հաւատակիցները կրնան օգնել մեզի, որ Աստուծոյ դիմենք՝ օգնութեան համար:

Կես գիշերին՝Պողոս եւ Շիղա կ'աղօթեին ու  
կ'օրիներգեին Աստուծոյ: [Գործը 16. 25]

## ՅԱՆՊԱՏՐԱՍԻՑ ԳՈՎԱՍԱՆՔ

**Ե**թովպիայի մէջ՝ կարճ ժամանակով մեր միսիոնարական ուղեւորութեան ժամանակ, մեր խումբը ուղեցեցաւ տեղական նախարարութեան մէկ այլ խումբի հետ՝ ծանօթանալով խումբի երիտասարդներուն, որոնք դժուար ժամանակներու մէջ ապրած էին ու կը բնակէին տնակներու մէջ, տառացիօրէն՝ աղքանոցի մէջ: Մենք միասին բաժնեկցեցանք վկայութիւններ, քաջալերական խոսքեր եւ աղօթքներ: Այդ երեկոյ իմ նախասիրած պահերէն մէկը այն էր, երբ տեղացի խումբին անդամ մը նուագեց իր կիթարը եւ մենք՝ պաշտամունք բարձրացուցինք՝ մեր նոր ընկերներուն հետ պայծառ լուսինին տակ: Ի՞նչ սուրբ պահ մը էր: Հակառակ իրենց յուսահատ վիճակին, անոնք՝ յոյս եւ ուրախութիւն ունէին, որը կարելի է գտնել միայն Յիսուսի մէջ:

Գործք 16-ին մէջ մենք կը կարդանք՝ մէկ այլ յանպատրաստից գովասանքի ժամանակի մասին: Այս փառաբանութիւնը սկսաւ Փիլիպպէի բանտին մէջ: Պողոս եւ Շիղա ձերբակալուած, ծեծուած, մտրակուած եւ բանտարկուած էին՝ Յիսուսի ծառայելուն համար: Յուսահատութեան տրուելու փոխարէն՝ անոնք իրենց բանտի խցիկին մէջ «աղօթելով եւ երգելով» Աստուած փառաւորեցին: «Յանկարծ հզօր երկրաշարժ մը եղաւ, այնպէս որ բանտին հիմերը սարսեցան. անմիջապէս բոլոր դռները բացուեցան եւ բոլորին կապերը քակուեցան» (Հմ. 26):

Բանտապահին առաջին խորհուրդը՝ իր կեանքին վերջ տալ եղաւ, բայց երբ ան հասկցաւ որ բանտարկեալները չեն փախած, ան ակնածանքով լեցուեցաւ Աստուծոյ հանդէպ, եւ փրկութիւնը եկաւ իրեն եւ իր ընտանիքին (Հմ. 27-34):

Աստուած կ'ուրախանայ լսելով, որ մենք կը գովաբանենք զինք: Եկէք երկրպագենք Անոր, մեր կեանքի՝ թէ բարձունքներուն եւ թէ ցած ժամանակներուն համար:

**Աղօթք** - Սիրելի Ասուա՛ծ, կը խնդրեմ, օգնէ ինծի փառաբանելու թեզ, անկախ անկէ, թէ ինչ կը դիմագրաւեմ իմ կեանքիս մէջ: Ամէն:

Աստուած մեզի ինարաւորութիւնը կու տայ փառաբանելու եւ երկրպագելու իրեն՝ վատ ժամանակներու մէջ: Ուստի՝ պատրաստ ըլլանք նոյնիսկ յանպատրաստից գովաբանելու:

Զա՛ղը եղեք իրարու հանդեպ, գթած, ներելով իրարու: [Եփ. 4. 32]

## ՏԱՐԵՑԷՆ ԽՈՐՃՈՒՐԴ ՍՏԱՆԱԼ

«Հնչի՝ համար կ'ափսոսամ»: Այդ՝ այն հարցումն էր, որու պատասխանեց նիու Եօրք Թայմզի (New York Times) լաւագոյն գրողներին՝ ձորճ Սանտըրզ (George Saunders), 2013-ի Սիրաքուս (Syracuse) Համալսարանի շրջանաւարտից հանդէսի՝ իր պատգամին մէջ: Իր մօտեցումը՝ տարեց անձի մը (Սանտըրզի) մօտեցումն էր, որ բաժնեկցեցաւ մէկ կամ երկու ափսոսանք, որ ունեցած էր իր կեանքին մէջ՝ երիտասարդներուն հետ (շրջանաւարտներուն), որոնք կրնային բան մը սորվիլ իր օրինակէն: Ան թուարկեց քանի մը բաներ, որոնք մարդիկ կրնան ենթագրել՝ որու համար ինք կը զղջայ. օրինակ՝ աղքատ ըլլալը, սարսափելի գործեր աշխատիլ: Բայց Սանտըրզ ըստ, որ իրապէս՝ ընդհանրապէս չի զղջար անոնց համար: Սակայն՝ ան կ'ափսոսայ բարութիւն ընելու անյաջողութեան համար եւ այն հնարաւորութիւններուն համար, որոնք ան ունէր մէկու մը հանդէպ բարի ըլլալու համար, եւ ան թոյլ տուած էր, որ այդ առիթները անցնին:

Պողոս առաքեալ գրեց Եփեսոսի հաւատացեալներուն՝ պատասխանելով այս հարցին. Ինչպիսի՞ն է Քրիստոնէական կեանքը: Փորձութիւն է շտապել մեր պատասխանը տալու. օրինակ՝ ունենալ քաղաքական հայեացք, խուսափիլ որոշակի գիրքերէ եւ ֆիլմերէ, պաշտամունք բարձրացնել՝ որոշ ձեւով մը: Բայց Պողոս իր մօտեցումը՝ չսահմանափակեց զինք իրեն ժամանակակից խնդիրներով: Ան կը նշէ «վատ խօսքերէ հեռու մնալ (Եփ. 4. 29) եւ ազատուիլ այնպիսի բաներէ, ինչպիսին են՝ դառնութիւնն ու բարկութիւնը (Հմ. 31): Ապա՝ կ'եզրափակէ իր «խօսքը», ըստ էլութեան՝ ան կ'ըսէ Եփեսացիներուն՝ ինչպէս նաեւ մեզի. «Քաղցր ըլլալ իրարու հանդէպ, գթած, ներելով իրարու» (Հմ. 32): Եւ ատոր պատճառը այն է, որ Քրիստոսով Աստուած բարի եղաւ ձեզի:

Ամէն բանէ զատ՝ մենք կը հաւատանք թիսուսի մէջ եղած կեանքով, ու անոնցմէ մէկը՝ անշուշտ բարի ըլլան է:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, ինչպէս որ Դուս բարի եղած ես ինծի հանդեպ, օգնե՛ որ ես ալ բարի ըլլամ ուրիշներու հանդեպ: Ամէն: Երբեմն դժուար է բարիք ընել ու բարութեամբ վարուիլ, սակայն

Աստուծոյ շնորհընվ եւ օգնութեամբ կարելի է:

Բարի մարդը՝ բարութիւն կը բխեցնէ իր սիրտին  
բարի գանձնն: [Ղուկ. 6. 45]

## ԲԱՐԵՐԸ ԱՐՏԱՑՈՒԼՈՒՄՆ ԵՆ ՄԵՐ ՍԻՐՏԻՆ

**Ի**նչպէ՞ս կարելի է վերացնել գարշելի լեզուն: Երկրորդական վարժարան մը՝ ընտրեց հաստատել «ո՛չ մէկ վատ լեզու» խոստումը: Աշակերտները երդում ըրին՝ ըսելով. «Ես հանդիսաւոր կերպով կը խոստանամ չօգտագործել որեւէ տեսակի հայահոյանքներ մեր դպրոցի պատերէն ներս եւ ամբողջ տարածքին վրայ»: Սա՛ ազնուական ջանք մըն էր, բայց, ըստ Յիսուսի՝ ոչ մէկ արտաքին կանոն կամ գրաւական երբէք չի կրնար ծածկել գարշելի խօսքին հոտը:

Մեր բերանէն բխող բառերուն գարշահոտութիւնը հեռացնելը կը սկսի մեր սիրտերը նորոգելով: Ինչպէ՞ս մարդիկ կը ճանչնան ծառի տեսակը անոր տուած պտուղներէն (Ղուկ. 6. 43-44), Յիսուս ըստ, որ մեր խօսքը համոզող ցուցիչ է այն բանին, թէ արդեօք մեր սիրտերը ներդաշնակ են իրեն եւ իր ճանապարհներուն, թէ ո՛չ: Պտուղը կը նշանակէ մարդու խօսքը, «քանի բերանը կը խօսի սիրտի լիութենէն» (Հմ. 45): Քրիստոս կը մատնանշէր, որ եթէ մենք իսկապէս կ'ուզենք փոխել այն, ինչ որ գուրս կու գայ մեր բերանէն, մենք նախ պէտք է կեղրոնանաք մեր սիրտերը փոխելու վրայ, երբ Ան կ'օգնէ մեզի:

Արտաքին արտասանուած խոստումները անիմաստ են՝ զսպելու պիղծ լեզուն, որը կը բխի չփոխակերպուած սիրտէն: Մենք կրնանք վերացնել գարշելի խօսքը՝ միայն նախ հաւատալով Յիսուսի (Ա. Կորնթ. 12. 3), ապա հրաւիրելով՝ Սուրբ Հոգին, որ լեցնէ մեզ (Եփ. 5. 18): Ան մեր մէջ կը գործէ՝ ներշնչելու եւ օգնելու մեղի, շարունակաբար շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ (Հմ. 20) եւ քաջալերող եւ կերտիչ խօսքեր ըսելով ուրիշներու (4. 15, 29, Կող. 4. 6):

**Աղօթք - Սիրելի Յիսուս,** կը խնդրեմ՝ օգնէ ինծի ըսելու խօսքեր, որոնք կը պատուեն քեզ եւ ուրիշներու շինութիւն կ'ըլլան: Ամեն:

**Մեր սիրտեն ելած բառերն ու խօսքերը՝ շատ բան կ'ըսեն մեր մասին: Դրաւիրենք Սուրբ Հոգին, որ մեզ ամբողջովին վերանորոգէ:**

Կարեկցեցնք ոմանց՝ զատորոշելով: [Յուդ. 1. 22]

## ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ՝ ՓԻՇՇԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

**Ի**մ եկեղեցին առաջնորդ՝ Հարօլտի (Harold) եւ իր տիկնոջ Փէմի (Pam) կողմէ ընթրիքի հրաւէրը չերմացուց սիրտս, բայց նոյն ատեն զդագրգռեց զիս: Ես միացած էի գոլէճի Աստուածաշունչի սերտողութեան խումբին, որ կ'ուսուցանէր գաղափարներ, որոնք կը հակասէին Աստուածաշունչի որոշ ուսմունքներուն: Անոնք պիտի դասախոսե՞ն ինծի այդ մասին, ես ինծի խորհեցայ:

Փիծծայի շուրջ՝ անոնք պատմեցին իրենց ընտանիքին մասին եւ հարցուցին իմ մասիս: Անոնք լսեցին՝ երբ կը խօսէին տնային աշխատանքներուս, իմ շան՝ Պուչի (Buchi) եւ այն տղային մասին, որու հանդէպ համակրանք ունէի: Միայն աւելի ուշ՝ անոնք մեղմօրէն զգուշացուցին ինծի այն խումբին մասին, ուր ես կը յաճախէի, եւ բացատրեցին՝ թէ ինչն է սխալ անոնց ուսուցմունքներուն մէջ: Անոնց նախազգուշացումը՝ զիս հեռացուց Աստուածաշունչի սերտողութեան մէջ ներկայացուած սուտերէն եւ մօտեցուց Աստուածաշունչի ճշմարտութիւններուն: Իր նամակին մէջ Յուղա ուժեղ լեզու կ'օգտագործէ՝ կեղծ ուսուցիչներու մասին՝ յորդորելով հաւատացեալներուն որ «պայքարին հաւատքին համար» (Յուդ. 1. 3): Ան յիշեցուց, որ վերջին ժամանակներուն պիտի ըլլան ծաղրողներ ... որոնք ձեզ պիտի բաժնեն ... որոնք չունին Հոգին» (Հմ. 18-19): Սակայն, Յուղան նաև կոչ կ'ընէ հաւատացեալներուն «կարեկցիլ ոմանց՝ զատորոշելով» (Հմ. 22): անոնց կողքին գալով՝ կարեկցանք ցուցաբերելով՝ առանց ճշմարտութիւնը զիջելու:

Հարօլտ եւ Փէմ գիտէին, որ ես հաստատ կերպով հիմնաւորուած չեմ իմ հաւատքիս վրայ, բայց զիս դատելու փոխարէն, նախ առաջարկեցին իրենց բարեկամութիւնը, իսկ յետոյ՝ իրենց իմաստութիւնը: Թող Աստուած տայ մեզի նոյն սէրն ու համբերութիւնը՝ կիրառելով իմաստութիւն եւ կարեկցանք, անոնց հետ, որոնք կասկածներ ունին:

**Աղօթք - Յա՛ր,** Ձու իմաստութեանու ու առաջնորդութեանդ կարիքը ունիմ՝ օգնելու անոնց, որոնք կ'ենթարկուին սուտ ուսուցումներու աղեցութեան: Կը խնդրեմ՝ տո՞ւր ինծի ըսելու բառեր: Ամէն: Խեզպէ՞ն կրնանք սիրով առաջնորդել անոնց որոնք կը պայքարին իրենց հաւատքը պահելու դէպի Աստուածաշունչին ճշմարտութիւններուն:

Ան փրկեց մեզ եւ կանչեց սուրբ կոչումով, ո՞չ թէ մեր գործերուն համեմատ, հապա՝ իր առաջադրութեան ու շնորհին համաձայն [Բ. Տիմ. 1. 9]

## ԾԱԿՈՏԵՆ՝ ՍՐԲՈՒԹԵԱՆ

**Փ**ոքը եղած ժամանակ՝ աղջիկս կը սիրէր ճաշի ատեն խաղալ իր Զուիցերիական պանիրին հետ։ Ան՝ դիմակի նման կը դնէր պանիրի դեղին քառակուսի շերտը երեսին ըսելով. «Նայիր մամա»։ Անոր վառ կանաչ աչքերը կը շողային պանիրի երկու ծակերու մէջէն։ Որպէս երիտասարդ մայր, այդ Զուիցերիական պանիրի դիմակը կ'ամփոփէր իմ զգացումներս իմ թափած ջանքերուս մասին՝ անկեղծութեամբ առաջարկուած, սիրով լեցուն, բայց այնքան անկատար։ Ծակոտ՝ ո՞չ սուրբ։

Ո՞չ, որքան կը ցանկանք ապրիլ սուրբ կեանք մը Աստուծոյ համար առանձնացած կեանքով, որ կը բնութագրուի՛ Յիսուսի նման ըլլալով։ Բայց օրէ օր սրբութիւնը կը թուի ըլլալ անհասանելի։ Իր տեղը կը մնայ մեր «սրբութիւնը»։

Բ. Տիմոթէոս 1. 6-7-ին մէջ կը գրէ Պօղոս իր հովանաւորեալ Տիմոթէոսին՝ յորդորելով զինք ապրելու իր սուրբ ըլլալու կոչումին համաձայն։ Առաքեալը ապա կը պարզաբանէ, որ «Աստուած փրկեց մեզ եւ կանչեց սուրբ կոչումով, ո՞չ թէ մեր գործերուն համեմատ, հապա իր առաջադրութեան ու շնորհին համաձայն» (Հմ. 9)։ Այս կեանքը կարելի է, ո՞չ թէ մեր նկարագրին համար, այլ Աստուծոյ շնորհքով։ Պօղոս կը շարունակէ. «Այս շնորհքը տրուեցաւ մեզի դարերու ժամանակներէն առաջ» (Հմ. 9)։ Կրնա՞նք ընդունիլ Աստուծոյ շնորհքը եւ ապրիլ Անոր տրամադրած գորութեան հարթակէն։

Ըլլայ՝ ծնողութիւն, ամուսնութիւն, աշխատանք թէ մեր ընկերը սիրել, Աստուած կը կանչէ մեզ դէպի սուրբ կեանքի, որ հնարաւոր դարձած է՝ ո՞չ թէ կատարեալ ըլլալու մեր ջանքերով, այլ Անոր շնորհքով։

**Աղօթք - Սիրելի Յա՛յր,** կը խնդրե՛մ, օգնէ իսծի յենելու քու շնորհիդ եւ ո՞չ թէ սուրբ կեանքով ապրելու իմ շանքերուս։ Ամէն։  
**Սրբութեան կեանք մը ունենալու համար՝ խնդրե՛նք Աստուծմէ,** որ յիշեցնէ մեզի իր անսահման շնորհին մասին, որով կարելի է սրբութեան կեանք մը ունենալ։



Բարի մարդը կ'ողորմի եւ փոխ կու տայ: [Սահմ. 112. 5]

## ԱՌԱՏԱԶԵՐՆՈՒԹԵԱՄԲ ՏՐՈՒԱԾ ՈՒ ԲԱԺՆԵԿՑՈՒԱԾ

**Ե**րբ ես ու կինս՝ Գէրի (*Cari*), աւարատեցինք մեր բարձրագոյն կրթութիւնը, քանի մը հազար տոլար պարտք ունինք, որը պէտք էր համախմբէինք մէկ տեղ աւելի ցած տոկոսով: Դիմեցինք տեղական դրամատան՝ վարկ ստանալու, բայց մերժուեցանք, քանի որ երկար ժամանակ չէինք ապրած կամ աշխատած այդ քաղաքին մէջ: Մի քանի օրեր ետք՝ պատմեցի կատարուածին մասին ընկերոջս՝ Մինկին (*Ming*), որ մեր եկեղեցիի երէցներէն մէկն էր: «Կ'ուզեմ այս բանը նշել կնոջս», ըսաւ ան՝ գոնին գուրս ելլելու ատեն:

Քանի մը ժամեր անցնելէ ետք, հեռախօսը հնչեց: Մինկն էր. «Էնն (*Ann*) եւ ես՝ կը ցանկանք ձեզի փոխ տալ անհրաժեշտ գումարը՝ առանց տոկոսի» առաջարկեց ան: Չէի դիտեր թէ ինչ ըսելու էի, ուստի պատասխանեցի. «Չեմ կրնար այդ խնդրել քեզմէ»: Մինկ ուրախութեամբ պատասխանեց. «Դուն չե՞ս խնդրեր»: Անոնք սիրով տուին մեզի վարկը եւ ես ու Գէրին հնարաւոր եղածին չափ շուտով՝ վերադարձուցինք այդ գումարը:

Ես կը հաւատամ, որ Մինկ եւ էնն՝ առատաձեռն էին՝ Աստուծոյ հանդէպ իրենց սիրոյ պատճառով: Ինչպէս կ'ըսէ Աստուածաշունչը. «Բարի մարդը կ'ողորմի եւ փոխ կու տայ, իր գործերը իրաւունքով կը վարէ» (*Սահմ. 112. 5*): Անոնք, որոնք կը վստահին Աստուծոյ, կրնան ունենալ «Հաստատ» սիրտեր, որոնք «ապահով են» (Հմ. 7-8): Հասկնալով, որ Ան է իրենց կեանքի մէջ եղած ամէն լաւ բանի աղբիւրը:

Աստուած առատաձեռն եղած է մեզի հետ՝ մեզի կեանք եւ ներում շնորհելով: Եկէք առատաձեռն ըլլանք՝ բաժնեկցելով Անոր սէրը եւ մեր ունեցած միջոցները՝ կարիք ունեցողներուն հետ:

**Աղօթք - Սիրող Յա'յր,** շնորհակալ եմ Ձեզի, որ ինձի տուած ես կեանքի պարգեւը եւ իմ ամենօրեայ պէտքերս կը հոգաս: Օգև՝ ինձի որ վստահիմ Ձեզի եւ ունենամ Ձեզի նման առատաձեռն սիրու մը: Ամեւ:

**Աստուած առատաձեռն եղած է մեզի հետ, ո՛ւստի կարելի է բաժնեկցիլ իր տուած բարիքները առատաձեռնութեամբ՝ կարիք ունեցողներուն հետ:**

Հաւատարիմ եւ արդար է՝ ներելու մեր մեղքերը, ու  
մաքրելու մեզ ամեն անիրաւութենք: [Ա. Յովհ. 1. 9]

## ՄԱՔՐՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՍՈՎ

**Ա**ռաջին կարճ-ժամանակով միսիոնարական ուղեւորութիւնս եղած էր Պրագիի Ամազոնի (Amazon) անտառները՝ օգնելու գետի մը մօտ եկեղեցի կառուցելու: Կէսօրէ ետք մը՝ յայցելեցինք շրջանի այն քիչ տուներէն մէկը, որ ունէր ջուրի գտիչ մեքենայ: Երբ մեզ հիւրընկալողը՝ ջրհորի պղտոր ջուրը լեցուց գործիքին վերի մասը, քանի մը վայրկեանէն բոլոր կեղտերը անհետացան՝ եւ յայտնուեցաւ մաքուր ու զուլալ խմելու ջուր: Ճիշդ հոն՝ այդ մարդուն հիւրասենեակին մէջ, ես տեսայ արտացոլումը, թէ ի՞նչ կը նշանակէ Քրիստոսով մաքրուիլ:

Երբ մենք առաջին անգամ կու գանք Յիսուսի մօտ մեր մեղքերով եւ ամօթով ու կը խնդրենք՝ որ Ան ներէ մեզի. եւ կ'ընդունինք զինք որպէս մեր Փրկիչը, Ան կը մաքրէ մեզ մեր մեղքերէն եւ կը դարձնէ մեզ՝ նոր մարդու: Մենք կը մաքրուինք այնպէս, ինչպէս պղտոր ջուրը վերածուեցաւ մաքուր խմելու ջուրի: Ինչպիսի ուրախութիւն է իմանալ, որ մենք ճիշդ գիրքի մէջ ենք Աստուծոյ հետ՝ Յիսուսի զոհաբերութեան չնորհիւ (Բ. Կորնթ. 5. 21) եւ իմանալ, որ Աստուած կը վերցնէ մեր մեղքերը այնքան, որքան որ արեւելքը հեռու է արեւմուտքէն (Մաղմ. 103. 12):

Բայց Յովհաննէս առաքեալը՝ կը յիշեցնէ մեզի, որ այդ չի նշանակէր, որ մենք այլեւս երբէք չենք մեղանչեր: Երբ մենք մեղք կը գործենք, մենք կրնանք համոզուիլ ջուրի գտիչի պատկերով եւ միսիթարուիլ՝ գիտնալով, որ «եթէ խոստովանինք մեր մեղքերը, ան հաւատարիմ եւ արդար է ներելու մեր մեղքերը, ու մաքրելու մեզ ամէն անիրաւութենէ» (Ա. Յովհ. 1. 9):

Եկէք վատահ ապրինք՝ գիտնալով, որ մենք շարունակաբար կը մաքրուինք Քրիստոսի կողմէ:

**Աղօթք - Սիրելի Յայր, շնորհակալ եմ, որ Դուն հաւատարիմ ես եւ արդար ու կը ներես ինձի, եթէ խոստովանիմ մեղքերս թեզի: Ամեն:**

**Կարեւոր է խնդրել Տեր Յիսուսէն, որ ներէ մեր մեղքերը եւ  
գիտնալ թէ պէտք չ' մեղքին գերին ըլլալ:**



Ինչպես եղերուն ջուրի վտակներուն կը տեսչայ, այնպես ալ իմ անձս քեզի կը տեսչայ, ո՞վ Աստուած: [Սաղմ. 42. 1]

## ԾԱՐԱՒ ՈՒ ԾՆՈՐՉԱԿԱԼ

**Ե**րկու ընկերներ եւ ե՞ս՝ նոր բաներ ընելու մեր բաղձանքի ցուցակին համաձայն, ծանօթ՝ Մեծ Կիրճի (Grand Canyon) ընթացքը քալելու գացինք: Ճամբուն ընթացքին մտածեցինք եթէ բաւականաշափ ջուր ունինք՝ կամ ոչ: Ի՞նչ պիտի ընենք երբ սկսինք մեր արշաւը եւ ջուրը վերջանայ: Մեր մտավախութիւնը իրականութիւն դարձաւ երբ ամբողջովին ջուրէ զուրկ մնացինք ու եզրին հասնելու համար տակաւին կտրելու երկար ճամբայ ունինք: Ուստի հեւքոտ՝ աղօթելու սկսանք: Երբ անկիւն մը դարձանք, կատարուեցաւ անսպասելին, զոր մենք համարեցինք մեծ հրաշք մը: Նկատեցինք երեք ջուրի շիշեր, որոնք թխմուած էին ժայռի մը ճեղքին մէջ, ուր գրուած էր. «Գիտէի՝ որ ասոր պէ՛տք ունիս: Վայելէ՛»: Մենք անհաւատութեամք նայեցանք իրարու եւ շնչեցինք Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելով, պէտք եղած երկու ումազը խմեցինք եւ շարունակեցինք ճամբուն վերջին հատուածը: Ես երբէք այսքան ծարաւ եւ շնորհակալ չեմ եղած իմ կեանքիս մէջ:

Սաղմոսերգուն՝ չունէր Մեծ Կիրճի մը փորձառութիւնը, բայց յստակ է, որ ան գիտէր՝ թէ ինչպէ՞ս եղնիկը կը վարուի, երբ ծարաւ է եւ կարելի է վախցած: Եղնիկը «կը տենչայ» (Սաղմ. 42. 1), բառ մը որ կը մտաբերէ ծարաւ ու անօթութիւնը՝ այն աստիճան՝ որ եթէ բան մը չփոխուի, կը վախնաս որ կրնաս նոյնիսկ մեռնիլ: Սաղմոսերգուն եղնիկին ծարաւի աստիճանը կը հաւասարեցնէ՝ Աստուծոյ համար ունեցած իր ցանկութեան. «Իմ անձս քեզի կը տենչայ» (հմ. 1):

Ինչպէ՞ս որ է շատ անհրաժեշտ եղող ջուրը, Աստուած մեր մշտական օգնութիւնն է: Մենք կը հառաչենք Անոր, որովհետեւ Ան նոր ուժ եւ թարմութիւն կը բերէ մեր յոդնած կեանքին, զինելով մեզ օրուան ճամբորգութեան համար:

**Աղօթթ - Սիրող Աստուած՝ շնորհակալ եմ քեզի՝ այս վերանորոգուած ուժին համար, որ ես կը զգամ՝ երբ Դո՛ւս կը լեցնես իմ կեանքս:**

Ներէ՛ ինծի՝ երբ թեզմէ տարբեր աղբիւր մը կը փևտուեմ: Ամեն:

**Երբ իսկա ծարաւ ու անօթի ըլլանք՝ փափաքինք Աստուծոյ ներկայութեան:**

Չեզ որովայնի մեջ չեւակերպած՝ քեզ կը ճանչնայի,  
դուն քու մօրի արգանդին չելած՝ քեզ սրբացուցի, քեզ  
ազգերուն մարգարէ կարգեցի: [Եր. 1. 5]

## ՅԱՒՆՈՒԱԾ ՈՒ ՍԻՐՈՒԱԾ ԱՍՏՈՒԾՄԷ

**Կ**արծես թէ այդ «Հաւնուած»ը (գիմատետրի (Facebook) բութամատը վերի նշանը) միշտ մեղի հետ եղած է: Բայց կը պարզուի, որ Հաստատումի այս խորհրդանիշը գոյութիւն ունի միայն 2009 թուականէն սկսած:

«Հաւնուած» նշանը՝ հնարող ձասթըն Ռոզենստայն (Justin Rosenstein) ըսաւ՝ թէ կը ցանկար ստեղծել «աշխարհ մը, ուր մարդիկ զիրար կը բարձրացնեն, փոխանակ վար զառնելու»: Բայց Ռոզենստայն սկսաւ ողբալ, թէ ինչպէս իր գիտը՝ անառողջ կախեալ ըլլալու ընկերային ցանցեր օգտագործողներուն՝ մոլութիւնը դարձաւ:

Կը կարծեմ թէ Ռոզենստայնի այս ստեղծագործութիւնը, խոստում է՝ Հաստատումի եւ կապակցութեան մեր անհրաժեշտ կարեւորութեան մասին: Մենք կ'ուզենք գիտնալ, թէ ուրիշներ մեզ կը ճանչնան ու կը նկատեն. եւ այս նաեւ կը հաւնին մեզ: «Հաւնիլը» բաւականին նոր է: Բայց գիտնալու եւ գիտցուելու է, որ մեր քաղցը նոյնքան հին է, որքա՞ն Աստուծոյ կողմէ ստեղծուած մարդ արարածը:

Տակաւին հաւնուած կոճակը այդքան ալ գործը չաւարտեր: Բարեբախտաբար՝ մենք կը ծառայենք Աստուծոյ, որու սէրը այնքան խոր է քան այս թուայնային (digital) Հաստատումը: Երեմիա 1. 5-ին մէջ մենք վկան կ'ըլլանք Անոր նպատակադրուած կապին մարգարէի մը հետ, որու կանչեց իր մօտ: «Քեզ որովայնի մէջ չձեւակերպած՝ քեզ կը ճանչնայի, դուն քու մօրդ արգանդէն չելած՝ քեզ սրբացուցի, քեզ ազգերուն մարգարէ կարգեցի»: Աստուծոյ կը հրաւիրէ նաեւ մեզ նպատակադրուած կեանքի, երբ մենք կը ճանչնանք այս Հայրը, որ այնքա՞ն սերտօրէն կը ճանչնայ, կը սիրէ եւ կը հաւնի մեզ:

**Աղօթք - Յա՛յր,** օգնէ՛ ինծի որ հանգստանամ թու սիրոյդ եւ կեանքի կոչումիդ մէջ, որպէսզի գիտնամ՝ որ Դուն կը հոգաս ինծի համար, ինչպէս որ կը ծեւաւորես զիս՝ այս օրերուն համար, որոնք կը ծրագրես ու կը սահմանես՝ ինծի համար: Ամէն:

**Աստուծոյ մօտէն ճանչնալը՝ կ'ազդէ ուրիշներու հետ մեր ունեցած յարաբերութեան, ուստի՝ կ'արժէ նպատակադրուած ապրելով՝ խաղաղութիւն բերել:**



Երբ սեղան նստաւ՝ անոնց հետ, առաւ հացը, օրինեց, եւ կտրելով տուաւ անոնց: [Դուկ. 24. 30]

## ՇՆՈՐՅԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԷ ԱՍՏՈՒԾՈՅ

**Ղ**նկերուհիս շտապեց հիւանդանոցի իր ճնշիչ աշխատանքէն՝ մտածելով, թէ ի՞նչ պատրաստելու է ընթրիքի համար՝ նախքան ամուսինը վերադառնայ՝ իր նոյնքան պահանջկոտ աշխատանքէն: Կիրակի օր հաւով ճաշ պատրաստած էր, իսկ երկուշաբթի մնացորդները հրամցուցած էր: Յետոյ՝ անոնք երեքշաբթի օր՝ խորոված հաւ կերան: Ան սառնարանին մէջ երկու կտոր ձուկ գտաւ, բայց գիտէր՝ որ ձուկի կտորները ամուսինին նախասիրութիւնը չէին: Զգտնելով որեւէ ուրիշ բան՝ որ կրնար պատրաստել քանի մը վայրկեաններու մէջ, ան որոշեց ձուկը պատրաստել ընթրիքի համար:

Երբ ան դրաւ ճաշը սեղանին վրայ, ներողութիւն խնդրեց ամուսինէն, որ նոր տուն հասած էր. «Գիտե՛մ, որ ա՛յս քու նախասիրութիւնդ չէ»: Ամուսինը նայեցաւ ու ըսաւ. «Սիրելիս, ես պարզապէ՞ս ուրախ եմ որ ճաշ ունինք սեղանին վրայ»:

Անոր վերաբերմունքը կը յիշեցնէ ինծի՝ Աստուծմէ մեզի տրուած ամէնօրեայ ճաշին համար շնորհակալ եւ երախտապարտ ըլլալու կարեւորութեան մասին, ինչպիսին որ ըլլան ատոնք: Մեր ամէնօրեայ հացի կամ ճաշի համար շնորհակալութիւն յայտնելը՝ Յիսուսի օրինակն է: Երբ Ան կերաւ երկու աշակերտներու հետ իր յարութենէն ետք, «առաւ հացը, օրհնեց, եւ կտրելով տուաւ անոնց» (Ղուկ. 24. 30): Ան շնորհակալութիւն յայտնեց իր Հօրը, ինչպէս աւելի կանուխ, երբ կերակրեց հինգ հազարը «Հինգ գարէ նկանակներով եւ երկու ձուկերով» (Յովհ. 6. 9): Երբ շնորհակալութիւն կը յայտնենք մեր ամէնօրեայ կերակուրին եւ այլ պարագաներու համար, մեր երախտագիտութիւնը կ'արտացոլայ Յիսուսի ճանապարհները եւ կը պատուէ մեր երկնաւոր Հայրը: Եկէք այսօր շնորհակալութիւն յայտնենք Աստուծոյ:

**Աղօթք -** Բոլորին Աստուածը, շնորհակալ եմ թեզի՝ իմ ամենօրեայ հացին եւ մսացած բոլոր կարիքներուս համար, որոնք Դուն կը բաւարարեն ինծի համար: Ամէն:

**Յիշե՞նք միշտ շնորհակալութիւն յայտնել Յիսուսի, որը կը պատուէ զինք:**

Աւելի՝ Երանելի է տա՛լ՝ քան ստանալը: [Գործը 20. 35]

## ՈՒՐԱԿԱՌՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ ՄԷՋ

**Ե**րբ Գերիի (*Keri*) կրտսեր որդին կ'անցնէր եւս մէկ մկանային վիրահատութենէ, Գերի՝ կը ցանկար իր միտքը չեռացնել իր ընտանիքի իրավիճակին՝ ուրիշ բան մը ընելով։ Ուստի՝ ան հաւաքեց իր որդիին հին կօշիկները, որոնք այլեւս փոքր էին անոր համար, եւ նուիրեց զանոնք բարեսիրական կազմակերպութեան մը։ Անոր նուիրատուութիւնը՝ դրդեց իր ընկերներն ու ընտանիքի անդամները՝ եւ նոյնիսկ դրացիները միանալու իրեն, եւ շուտով աւելի քան երկու հարիւր զոյգ կօշիկներ հաւաքեցին ու նուիրեցին։

Թէեւ կօշիկները նուիրելու այս արարքը նախատեսուած էր՝ ուրիշներ օրհնելու համար, Գերին կը զգայ, որ իր ընտանիքը աւելի շատ օրհնուեցաւ: «Ամբողջ փորձը իսկապէս բարձրացուց մեր տրամադրութիւնը եւ օգնեց մեզի՝ կեդրոնանալու ուրիշներու վրայ»։

Պօղոս հասկցաւ, թէ որքա՛ն կարեւոր է Յիսուսի հետեւողներուն համար առատածեռն տալը: Երուսաղէմ երթալու ատեն, ան կանգ առաւ Եփեսոսի մէջ։ Ան գիտէր, որ այդ հաւանաբար կըլլայ իր վերջին այցը այնտեղ՝ իր հիմնած եկեղեցիին մարդոց հետ: Եկեղեցիի երէցներուն ուղղուած իր հրաժեշտի խօսքին մէջ՝ ան յիշեցո՞ւց անոնց, թէ ինչպէս ինք ջանասիրութեամբ այխատած է Աստուծոյ ծառայելով (Գործք 20. 17-20) եւ խրախուսեց անոնց՝ ընել նոյնը (Հմ. 35): Յետոյ՝ ան եզրափակեց Յիսուսի խօսքերով. «Աւելի՝ երանելի է տա՛լ՝ քան ստանալը» (Հմ. 35):

Յիսուս կ'ուզէ, որ մենք ազատորէն եւ խոնարհաբար նուիրենք մեր անձերը (Ղուկ. 6. 38): Երբ մենք կը վստահինք իրեն, որ կ'առաջնորդէ մեզ, հնարաւորութիւնը կու տայ մեզի այդ ընելու: Գերիի ընտանիքին նման, մենք ալ կրնանք զարմանալ՝ այն ուրախ զգացումին համար, որ մենք կը զգանք մեր ըրածին արդիւնքը տեսնելով։

**Աղօթք - Սիրելի Յա՛յր,** օգևէ՛ իսծի՝ որ իմ ուսեցած ժամանակէս եւ ուսեցածներէս՝ ազատօրէն տրամադրեմ ուրիշներու: Ամէն:

**Աստուծ կ'ակնկալէ ու կը իրաւիրէ,** որ մեր ուսեցածն ուրիշներու տանք: Ուստի ըլլանք առատածեռն ուրախութեամբ տուղներ:

Ուրեմն իհմա ձեր մէջ եղող օտար աստուածները հանեցե՛ք, ու ձեր սիրտը Տերոց՝ Խորայէլի՝ Աստուծոյն հակեցուցեք: [Յես. 24. 23]

## ՏԱՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ

**Ա**ստուածաշունչի սերտողութեան խումբի տղամարդերը՝ գրեթէ ութսուն տարեկան էին, ուստի զարմացայ՝ որ անոնք կը պայքարէին ցանկութեան դէմ: Ճակատամարտ մը, որ սկսած էր իրենց երիտասարդութեան տարիներուն, տակաւին կը շարունակուէր: Անոնք ըսին՝ թէ ամէն օր խոստացան հետեւիլ Յիսուսի այս հարցով եւ ներողութիւն խնդրեցին այն պահերուն համար երբ ձախողեցան:

Մեզի կրնայ զարմացնել, որ աստուածավախ տղամարդեր՝ տակաւին կը պայքարէին այս մեղքին դէմ՝ կեանքի այս ուշ հանգրուանին մէջ: Կուռքը՝ որեւէ բան է, որ սաստէ գրաւելու Աստուծոյ տեղը մեր կեանքին մէջ, եւ նման բաներ կրնան յայտնուիլ երկար ժամանակ ենթագրելէ ետք՝ որ ատոնք չկան:

Աստուածաշունչին մէջ՝ կը կարդանք թէ Յակոբ հաշտուած էր իր հօրեղբօր՝ Լաբանին եւ իր եղբօր՝ Եսաւին: Ան կը վերադառնար Բեթէլ՝ երկրպագելու Աստուծոյ եւ Հոչակելու Անոր տուած բազմաթիւ օրհնութիւնները, սակայն անոր ընտանիքը տակաւին կը պահէր օտար աստուածներ, որոնք Յակոբ պէտք էր թագէր (Ծնն. 35. 2-4): Յեսուի գիրքին վերջաւորութեան, Խորայէլ ջախջախսելէ ետք իր թշնամիները եւ հաստատուելէ ետք Քանանու երկրին մէջ, Յեսու տակաւին պէտք էր յորդորէր անոնց, որ «իրենց մէջ եղող աստուածները հանե՛ն, ու իրենց սիրտը Տէրոջ՝ Խորայէլի՝ Աստուծոյն հակեցնեն» (Յես. 24. 23): Եւ Դաւիթի կինը Մեղքող, ըստ երեւոյթին, կուռքեր կը պահեր, որովհետեւ ատոնցմէ մէկը դրած իր անկողինին մէջ, որպէսզի մոլորեցնէ իրեն սպաննելու եկած զինուորները (Ա. Թագ. 19. 11-16):

Կուռքերու դիմելու փորձութիւնները կու գան, բայց Աստուծոյ ներումը աւելի մեծ է: Թող որ մենք ընտրուինք Յիսուսի համար՝ շըճելով մեր մեղքերէն եւ ներում գտնելով իրմով:

**Աղօթք - Յա՛ր,** կը խոստովանիս մեղքերս եւ երախտագիտութեամբ կը ստանամ Ձու Ներում Տէր Յիսուսի միջոցով: Ամէն:

**Ո՞րն է ամենադժուար մեղքը եւ փորձութիւնը:** Ի՞նչ քայլեր

**Կրնանք ձեռնարկել այս կուրքը ոչչեցանելու համար:**

Իւրաքանչիւրը թող տայ՝ ինչպէս որոշած է իր սիրտին մէջ: [Բ. Կորնթ. 9. 7]

## ՏԱՌ՝ ՄԵԾ ՍԻՐՏՈՎ

**Դ**պրոցէն ետք՝ Աստուածաշունչի ակումբին մէջ, ուր կինս՝ Սու (Sue) կը ծառայէ շաբաթը մէկ անգամ, երեխաները խնդրեցին գումար մը նուիրել պատերազմէն տուժած Ուքրանիայի (Ukraine) երեխաներուն օդնելու համար: Տասնմէկ տարեկան թոռնուհիին՝ Մակիին՝ (Maggie) ծրագիրին մասին ըսելէ մօտ շաբաթ մը ետք, ստացանք ծրար մը նամակատան միջոցով, որ կը պարունակէր §3.45 տոլար ինչպէս նաեւ գրութիւն մը. «Սա՞ այն ամէնն է, ինչ որ ե՞ս ունիմ Ուքրանիայի երեխաներուն համար: Վերջը՝ աւելի կը դրկեմ»:

Սու չէր առաջարկած Մակիին, որ ան պէտք է օգնէ, բայց գուցէ՝ Հոգին յիշեցուց անոր: Եւ Մակին, որ կը սիրէր թիսուսը եւ կը ձգտէր ապրիլ Անոր համար, պատասխանեց:

Մենք կրնանք շատ բան սորվիլ, երբ կը մտածենք այս փոքր նուէրին մասին, որ տրուած էր մեծ սիրտով: Այդ՝ արտացոլումն է Բ. Կորնթացիս 9-ին մէջ Պողոսի կողմէ տրուած որոշ ցուցմունքներուն: Նախ Պողոս առաջարկեց որ մենք «առատածառնութիւն» պիտի հնձենք (Հմ. 6): «Այն ամէնը, ինչ որ ունիմ»ի նուէր մը, անշուշտ՝ առատածեռն է: Պողոս նաեւ գրեց, որ մեր նուէրները պէտք է տրուին ուրախութեամբ, ինչպէս Աստուած կ'առաջնորդէ եւ ինչպէս կրնանք, ոչ թէ այն պատճառով, որ մենք «հարկադրանքի» տակ ենք (Հմ. 7): Եւ ան նշեց «աղքատներուն տրուած նուէրներուն» արժէքը (Հմ. 9): մէջբերելով Սաղմոս 112. 9-ն:

Երբ նուէրներ տալու առիթը յայտնուի, եկէ՛ք հարցնենք՝ թէ ինչպէ՞ս Աստուած կը ցանկայ, որ մենք պատասխանենք: Երբ առատածեռն եւ ուրախ ենք՝ մեր նուէրները տանք կարիքաւորներուն, ինչպէս Ան կ'առաջնորդէ մեզ:

**Աղօթք - Սիրելի Յայր,** կը խնդրեմ՝ առաջնորդէ զի՞ս, որպէսզի ըլլամ այսպիսի առատածեռն տուրող մը, ինչպիսին Դուն կ'ուզես որ ըլլամ՝ արտացոլացնելով առատածեռն սիրտ մը: Ամէն:

**Երբ կը տեսնենք զանազան կարիքներ մեր շուրջ, խնդրե՞նք Աստուծմէ, որ տայ՝ մեզի առատածեռն ըլլալու հոգի մը,**  
**ո՛րպէսզի տանք մեծ սիրտով:**

Բայց դուն արթո՛ւն եղիր ամէն բանի մէջ, տոկա՛  
չարչարանքներու, աւետարանիչի գո՛րծ ըրե: [Բ. Տիմ. 4. 5]

## ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՊԱՅ՝ ԿԱՐԵՒՈՐ Է

**Ե**րբ Թայթանիք (*Titanic*) նաւը զառնուեցաւ սառնալեռի՝ Ապրիլ 1912-ին, Հովիկ՝ Ճան Հարրըր (*John Harper*) իր վեց տարեկան դուստրին համար տեղ ապահովեց սահմանափակ թիւով փրկութեան նաւերէն մէկուն մէջ: Ան իր փրկարար բաճկոնը տուաւ ուղեկցորդի մը եւ բաժնեկցեցաւ աւետարանը բոլոր անոնց հետ, որոնք կը լսէին: Երբ նաւը խորտակուեցաւ եւ հարիւրաւոր մարդեր կը սպասէին անհաւանական փրկութեան, Հարբըր լողաց՝ մէկ մարդէն միւսը եւ ըստ. «Հաւատայ Տէր Յիսուս Քրիստոսի եւ կը փրկուիս» (Փորձք 16. 31):

Գանատայի Օնթարիո (*Ontario*) նահանգին մէջ՝ Թայթանիք նաւէն փրկուածներու հանդիպումի մը ընթացքին՝ մարդ մը ինքզինք անուանեց «Ճան Հարբըրի վերջին դարձի բերածը»: Մերժած ըլլալով Հարբըրի առաջին հրաւերը, մարդը ընդունեց Յիսուս Քրիստոսը, երբ քարոզիչը դարձեալ հարցուց իրեն: Ան դիտեց, մինչ Հարբըր իր կեանքի վերջին պահերը կը նուիրէր Յիսուսի փրկութեան բարի լուրը բաժնեկցելու համար, նախքան մարմինին ջերմութիւնը կորսնցնելով (*hypothermia*) մեռնի՝ ընկղմի ովկիանոսի սառը ջուրին մէջ:

Պօղոս առաքեալ կը խրախուսէ Տիմոթէոսին՝ նման հրատապութեան եւ անձնուրաց աւետարչութեան նուիրումի: Հաստատելով Աստուծոյ մշտական ներկայութիւնը եւ Յիսուսի անխուսաբելի վերադարձ՝ Պօղոս կը պատուիրէ Տիմոթէոսի քարոզել համբերութեամբ եւ ճշգրտութեամբ (Բ. Տիմ. 4. 1-2): Առաքեալը կը յիշեցնէ երիտասարդ քարոզիչին, որ մնայ կեղրոնացած, թէեւ որոշ մարդիկ պիտի մերժեն Յիսուսի (Հմ. 3-5):

Մեր օրերը սահմանափակ են, ուստի իւրաքանչիւր պահը կարեւոր է: Մենք կրնանք վատահ ըլլալ, որ մեր Հայրը ապահովեց մեր տեղը՝ երկինքի մէջ, երբ կը յայտարարենք. «Յիսուս կը փրկէ»:

**Աղօթք - Տէր Յիսուս, կը խնդրեմ տո՛ւր ինծի հնարաւորութիւնը բաժնեկցելու քու սէրու ուրիշներու հետ: Ամէն:**

**Գիտնալով որ մեր օրերը սահմանափակ են, աւելցնենք Տէր Յիսուսի սիրոյ բարի լուրը բաժնեկցելու հրատապութիւնը՝ ուրշներու հետ:**

Երանելի են այն մեռելները՝ որոնք կը մեռնին  
Տերոշմով: [Յայտ. 14. 13]

## ՍԵԲԱԿՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԸ

**Ի**ռլանտացի բանաստեղծ՝ Ո. ֆ. եէյթս (W. B. Yeats) ցանկաց թաղուիլ Պէն Պուլպըն (Pen Bulben)՝ հարթ գագաթներով վեհ լերան ստորոտը ու վերնագրեց այդ անունով՝ իր վերջին բանաստեղծութիւններէն մէկը: Բանաստեղծութեան վերջին տողը փորագրուած է իր գերեզմանին վրայ. «Զիաւոր, անցի՛ր կողքէն»:

Շատ կարծիքներ տրուած են թէ ի՞նչ կը նշանկէ այդ: Թերեւս այդ բանաստեղծին կողմէ եղած կեանքի եւ մահուան իրականութեան ճանաչումն է: Եէյթս հասաւ իր նպատակին՝ թէ ուր կ'ուզէր թաղուիլ եւ թէ ի՞նչ պիտի ըսէ անոր գերեզմանաքարը: Սակայն ցուրտ ճշմարտութիւնը այն է, որ կեանքը կը շարունակուի առանց մեզի, անտարբեր մեր հեռանալու իրականութենէն:

Ցուղայի պատմութեան սարսափելի ժամանակաշրջաններէն մէկուն ընթացքին՝ Սեբնան, «պալատի կառավարիչ» մը, իրեն համար գերեզման պատրաստեց՝ մահէն յետոյ իր ժառանգութիւնը ապահովելու համար: Բայց Աստուած Եսայի մարգարէին միջոցով ըսաւ անոր. «Դուն հոս ի՞նչ ունիս, եւ հոս ո՞վ ունիս, որ հոս քեզի գերեզման փորեցիր, ինչպէս ան՝ որ իր գերեզմանը բարձր վայրի մէջ կը փորէ, եւ իրեն բնակարան կը կառուցանէ ժայոփ մէջ» (Ես. 22. 16): «[Աստուած] անտարակոյս քեզ պիտի ծրարէ, քեզ գնդակի պէս պիտի գլորէ դէպի ընդարձակ երկիր մը. դուն հոն պիտի մեռնիս» (Հմ. 18):

Սեբնան չէր հասկցած նիւթը: Կարեւորը՝ այն չէ՛ թէ մենք ո՞ւր թաղուած ենք. կարեւորը այն է, թէ մենք որո՞ւ կը ծառայենք: Անոնք որոնք կը ծառայեն Յիսուսի, ունին այս անչափելի մխիթարութիւնը. «Երանելի են այն մեռելները, որոնք կը մեռնին Տէրողմով» (Յայտ. 14. 13): Մենք կը ծառայենք Աստուածոյ մը, որ երբէք անտարբեր չի մնար մեր «մահուան» հանդէպ: Ան կ'ակնկալէ մեր ժամանումը եւ կ'ողջունէ մեզ իր տան մէջ:

**Աղօթք - Երկնաւոր Յա՛ր,** կը խնդրեմ՝ օգնէ ինծի ապրելու կեանքը, ակնկալելով այն ժամանակը, երբ ես քեզի հետ կ'ըլլամ յախտենականութեան մէջ: Ամէն:

**Ի՞նչ կ'ըսէ կեանքս՝ այն մասին, թէ որո՞ւ կը ծառայեմ: Ինչպէ՞ս կ'ուզեմ որ զիս յիշեն:**

Կը ներբողեմ քեզ, որովհետեւ ահաւոր ու սքանչելի կերպով ստեղծուեցայ. Թու գործերդ սքանչելի են եւ անձս լաւ գիտէ: [Սաղմ. 139. 14]

## ԱՍՏՈՒՇՈՅ ՍՏԵՂԾԱԾ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՅԸ

**Թ**էեւ մեր մարմինի ջղային դրութեան գիտութիւնը՝ մեծ առաջընթաց արձանագրած է հասկնալու, թէ ինչպէս կը գործէ ուղեղը, գիտնականները կը խոստովանին թէ թերեւս գիտութիւնը զայն լման հասկնալու սկզբնական փուլերուն մէջ է: Անոնք կը հասկնան ուղեղին ճարտարապետութիւնը, անոր գործառութեան որոշ տուեալները եւ այն մասերը, որոնք կ'արձանագրեն միջավայրին եւ գործի կը լծեն մեր զգայարանքները, կ'առաջացնեն շարժումներ եւ կը պարունակեն զգացումներ: Բայց անոնք տակաւին չեն կրնար պարզել թէ ինչպէս այս բոլոր փոխազդեցութիւնները կը նպաստեն վարմունքին, ընկալումին եւ յիշողութեան: Աստուծոյ այս անհաւանական բարդ, ստեղծուած գլուխ գործոցը մարդկութիւնը, տակաւին առեղծուածային է:

Դաւիթ ընդունեց մարդկային մարմինին հրաշալիքները: Օգտագործլով փոխաբերական լեզու հռչակեց Աստուծոյ զօրութիւնը, ապացուցուած իր գերիշխան վերհսկողութեամբ ծածկուելու «մօր որովայնին մէջ» ամբողջ ընական ընթացքին (Սաղմ. 139. 13): Ան գրեց. «Ահաւոր ու սքանչելի կերպով ստեղծուեցայ. Քու գործերդ սքանչելի են եւ անձս լաւ գիտէ» (Հմ. 14): Հին օրերուն՝ մարդիկ մօր արգանդին մէջ երեխային զարգացումին կը դիտէին՝ որպէս մեծ առեղծուած (տե՛ս Ժող. 11. 5): Նոյնիսկ մարդկային մարմինի հրաշալի բարդութիւններու մասին սահմանափակ գիտակցութեան՝ Դաւիթ տակաւին ակնածանքով ու զարմանքով կանգնած էր Աստուծոյ զարմանալի աշխատանքին եւ ներկայութեան հանդէպ (Սաղմ. 139. 17-18):

Մարդու մարմինի իւրաքանչիւր եւ հիմասքանչ բարդութիւն՝ կ'արտացոլայ Աստուծոյ զօրութիւնն ու իշխանութիւնը: Մեր միակ պատասխանները կրնան ըլլալ՝ գովասանք, ակնածանք եւ զարմանք:

**Աղօթք -** Սիրելի Աստուած, կը գովարանեմ քեզ, որ զիս այսքան սքանչելի ու հիանալի բարդութեամբ ստեղծեցիր: Ինչ զարմանալի ստեղծիչ ես Դուն: Ամէն:

**Մեր մարմիններուն բարդ ստեղծագործութիւնը՝** մեզ մղելու է Աստուած փառաւորելու եւ շնորհակալութիւն յայտնելու իրեն:

Դուք ալ պատրա՞ստ կեցեք, որովհետեւ մարդու Որդին պիտի գայ այսպիսի ժամու մը՝ որ դուք չեք ակնկալեր: [Մատթ. 24. 44]

## ԱԿՆԿԱԼԵԼ ՅԻՍՈՒՍ

**Ա**նկերս՝ *Փոլ* (*Paul*) կը սպասէր մասնագէտին ժամանումին, որպէսզի վերանորոգէ իր սառնարանը, երբ տեսաւ պատգամը իր քջիջային հեռախօսին վրայ նորոգութիւն ընող ընկերութենէն: Հոն գրուած էր. «Յիսուս ճանապարհին է եւ կը սպասուի՝ որ ան ժամանէ առաւօտեան ժամը 11:35-ին»: Շուտով Փոլ յայտնաբերեց, որ մասնագէտին անունը՝ իսկապէս Յիսուս էր (*hay-* Soos):

Բայց ե՞րբ կրնանք սպասել, որ Տէր Յիսուս՝ Աստուծոյ Որդին գայ: Երբ Ան եկաւ որպէս մարդ՝ երկու հազար տարի առաջ եւ կրեց մեր մեղքի պատիժը, Ան ըսաւ, որ կը վերադառնայ, բայց միայն Հայրը գիտէ իր վերադարձի ճշգրիտ «օրն ու ժամը» (*Մատթ. 24. 36*): Ի՞նչ տարբերութիւն կրնայ ըլլալ մեր առօրեայ առաջնահերթութիւններուն մէջ, եթէ մենք իմանայինք այն պահը, երբ մեր Փրկիչը պիտի վերադառնայ երկիր (*Յովհ. 14. 1-3*):

Յիսուս զգուշացուց մեզ՝ որ պատրաստ ըլլանք իր վերադարձին. «Մարդու Որդին պիտի գայ այնպիսի ժամուն մը՝ որ դուք չէք ակնկալեր» (*Մատթ. 24. 44*): Ան յիշեցուց մեզի, որ «արթուն մնանք, որովհետեւ չենք գիտեր թէ մեր Տէրը ո՞ր ժամուն պիտի գայ» (*Հմ. 42*):

Քրիստոսի վերադարձի օրը՝ մենք մեր հեռախօսով ահազանգ պիտի չստանանք՝ մեզ նախազգուշացնելու համար: Ուստի՝ Հոգիին զօրութեամբ, որ կը գործէ մեր միջոցով, եկէ՛ք ամէն օր ապրինք յաւիտենականութեան հեռանկարով, ծառայելով Աստուծոյ եւ օգտուելով սիրոյ եւ յոյսի Անոր ուղերձը ուրիշներու հետ բաժնեկցելու իւրաքանչիւր հնարաւորութենէն:

**Աղօթք** - Յա՞յր, միևնէ համբերութեամբ կը սպասեմ, օգնէ՛ ինծի հնազանդելու թեզի, հետամուտ ըլլալով սրբութեան եւ ապրիլ

Քրիստոսի վերադարձին ակնկալութեամբ: Ամէն:

**Ի՞նչպիսի մղում ունինք Յիսուսի վերադարձին մասին եւ ի՞նչ կ'ակնկալենք՝ երբ Ան նորէն գայ:**

Աղջի՛կ, հաւատքո՞ր բժշկեց քեզ: [Մարկ. 5. 34]

## ԵՐԿԸՆՏՐԱՆՔՆԵՐ ԵՒ ԽՈՐ ՀԱՒԱՏՔ

**Ե**աբաթ առաւօտեան Աստուածաշունչի սերտողութեան ընթացքին, հայր մը շփոթուած էր, որովհետեւ իր սիրելի՝ սակայն կամակոր դուստը վերադարձած էր քաղաք, բայց ան անյարմար կը զգար իր տան մէջ՝ անոր վարմունքին պատճառով: Մէկ ուրիշ մասնակից մը մարմնապէս լաւ չէր, քանի որ երկարատեւ հիւանդութեան եւ ծերութեան պատճառով, ֆիզիքական հետեւանքները իրենց ազդեցութիւնը ձգած էին եւ բազմաթիւ բժիշկներու այցելութիւնները՝ նուազագոյն առաջընթացը արձանագրած էին: Ան յուսահատած էր: Աստուածային նախագիծով՝ Մարկոս 5-րդ գլուխը, Աստուածաշունչի այն հատուածն է, որ անոնք սերտեցին այդ օրը: Երբ սերտողութիւնը վերջացաւ, յոյսը եւ ուրախութիւնը զգալի էր:

Մարկոս 5. 23-ին մէջ, Յայրոս՝ հիւանդ երեխայ ունեցող հայրը, բացագանչեց. «Աղջիկս մեռնելու մօտ է»: Աղջկան այցելելու ճանապարհին, Յիսուս բժշկեց անանուն կնոջ մը, իր երկարատեւ առողջական խնդիրէն՝ ըսելով. «Աղջիկ, հաւատքդ բժշկեց քեզ» (Հմ. 34): Յայրոսն ու կինը, Յիսուսի հանդէպ իրենց ունեցած հաւատքին պատճառով, փնտուեցին Անոր եւ յուսախար չեղան: Սակայն երկու պարագաներուն ալ, նախքան Յիսուսի հետ հանդիպիլը, ամէն ինչ «վատէն՝ աւելի վատ» կ'ընթանար՝ առաջ որ լաւանայ:

Կեանքի երկրնտրանքները խտրականութիւն չեն գներ: Անկախ սեռէ, տարիքէ, ցեղէ կամ դասէն, մենք բոլորս կը դիմագրաւենք իրավիճակներ, որոնք մեզ կը շփոթեցնեն եւ կը լրկեն պատասխաններ փնտուելու: Փոխանակ թոյլ տալու, որ մեր մարտահրաւերները մեզ ետ պահեն Յիսուսէն, եկէք ձգտինք, որ ատոնք խթանեն մեզ աւելի խոր հաւատքի՝ Անոր հանդէպ, որ կը զգայ, երբ մենք կը դպչինք իրեն (Հմ. 30) եւ Ան որ կարող է մեզ առողջացնել:

**Աղօթք -** Սիրելի Յիսուս, Դուև գիտես իմ կեանքիս իւրաքանչիւր իրավիճակը: Կը խնդրեմ, զիս զօրացուր հաւատքի մէջ, նոյնիսկ երբ ամէն ինչ վատէն աւելի վատ կ'ըլլայ: Ամէն:

**Կեանքի որոշ իրավիճակներ կը ստիպէն մեզ դիմելու Յիսուսի:**  
Ուստի՝ սրտանց աղօթենք այսօր:

Ձեր ազատութիւնը մարմինի ցանկութիւններու առիթ չըլլայ,  
հապա սիրո՞վ իրարու ծառայեցեք: [Գաղ. 5. 13]

## ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՍԻՐՏ

**Ե**րբ «Հօրեղբայրս» էմօրի (Emory) մահացաւ, յարգանքի տուրքերը շատ էին ու բազմազան: Սակայն՝ այդ բոլոր պատիւները հետեւողական նիւթ ունեին. Էմօրին ցոյց տուաւ իր սէրը Աստուծոյ հանդէպ՝ ծառայելով ուրիշներուն: Ո՛չ մէկ տեղ ան օրինակելի չէր, որքան որ էր Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ, երբ ան ծառայեց որպէս դիակապետ՝ բժիշկ, որ պատերազմի գնաց առանց զէնքի: Իր խիզախութեան համար՝ ան արժանացաւ զինուորական բարձր պարգեւներու, բայց էմօրին ամենէն շատ յիշուեցաւ իր մատուցած կարեկցական ծառայութեան համար, ինչպէս պատերազմի ընթացքին, այնպէս ալ անկէ ետք:

Էմօրիի անձնուրացութիւնը գործնական օրինակն էր Պօղոսի Գաղատայի եկեղեցին հաւատացեալներուն տուած իր մարտահրաւէրին: Ան գրեց ըսելով. «Որովհետեւ դուք պատութեա՛ն կանչուած էք, եղբայրնե՛ր. միայն թէ ձեր պատութիւնը մարմինի ցանկութիւններու առիթ չըլլայ, հապա սիրով իրարու ծառայեցէք» (Գաղ. 5. 13): Բայց ինչպէ՞ս: Մեր կոտրուածութեան մէջ՝ մենք կը կ'ուզենք մեր անձը առաջին տեղը գնել, ուրիշները գնելու փոխարէն, ո՛ւստի՝ ուրկէ՞ կուգայ այս անբնական անձնուրացութիւնը:

Փիլիպ. 2. 5-ին մէջ՝ Պօղոս կ'առաջարկէ. «Իւրաքանչիւրը թող նկատի չառնէ միայն իր շահը, այլ նաեւ ուրիշներունը: Ունեցէ՞ք այն մտածումը՝ որ Քրիստոս Յիսուսի մէջ էր»: Ան կը նկարագրէ Քրիստոսի պատրաստակամութիւնը նոյնիսկ խաչի վրայ մեզի հանդէպ ունեցած իր մեծ սիրոյն: Անոր Հոգին կ'արտադրէ Քրիստոսի միտքը ուրիշներու համար՝ արտացոլացնելով Յիսուսի կատարած վերջնական զոհը, երբ Ան ինքզինք տուաւ մեզի համար:

Թող որ մենք ենթարկուինք Հոգիին աշխատանքին մեր մէջ:

**Աղօթք - Սիրող Յա՛յր, շնորհակալութիւն Յիսուսի կատարեալ օրինակին եւ ինծի համար իր ըրած զոհաբերութեան համար: Կը ինսդրեմ, օգնէ՛ ունենալու Յիսուսի մտածելակերպը: Ամէն:**  
**Եթէ մէկը զոհաբերաբար ծառայած է մեզի, մենք ալ պատրա՛ստ ըլլանք նոյնը ընելու ուրիշներու, սկսելով մեր ընտանիքէն:**

Խսկոյն մարդը առողջացաւ, եւ առնելով իր  
մահիճը՝ կը քալէր: [Յովհ. 5. 9]

## ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՅՈՅՍ

**Յ**ոյսի նոր առիթ մը ի յայտ եկած էր՝ ողնահարը վնասուելու պատճառով անդամալոյժ մարդերու համար: Գերմանացի հետագօտողներ՝ յայտնաբերած էին նեարդներու աճը խթանելու միջոց մը մկաններու եւ ուղեղին միջեւ նեարդները վերականգնելու համար: Նեարդներուն վերածը թոյլ տուած է անդամալուծուած մուկերուն դարձեալ քալելու եւ քննութիւնները պիտի շարունակուին պարզելու, թէ արդեօ՞ք այս բուժումը անվտանգ եւ արդիւնաւոր է մարդոց համար:

Այն ինչ որ գիտութիւնը կը ձգտի հասնելու անդամալոյժներուն համար, Յիսուս ըրաւ իր հրաշքներու միջոցով: Երբ Ան այցելեց Բեթհեղդա աւազանը, տե՛ղ մը, ուր շատ հիւանդներ բժշկութիւն ստանալու յոյսով հերթի կը սպասէին, Յիսուս անոնց մէջ փնտոեց մարդ մը, որ «Երեսունութտարիներէ ի վեր անդամալոյժ էր» (Յովհ. 5. 5): Հաստատելով, որ մարդը իսկապէս կը ցանկար բժշկուիլ, Քրիստոս հրահանգեց անոր ոտքի ելլել ու քալել: «Իսկոյն մարդը առողջացաւ, եւ առնելով իր մահիճը՝ կը քալէր» (Հմ. 9):

Մեզի խոստում տրուած չէ, որ մեր բոլոր Փիզիքական հիւանդութիւնները կը բուժուին Աստուծոյ կողմէ: Աւազանին մօտ ուրիշներ կային, որոնք այդ օր չբուժուեցան Յիսուսի կողմէ: Բայց անոնք, որոնք կը վստահին Անոր, կրնան զգալ այն բժշկութիւնը, որ Ան կը բերէ վհատութենէ՝ յոյսի, դառնութենէ՝ շնորհքի, ատելութենէ սիրոյ, մեղագրանքէ՝ ներելու պատրաստակամութեան: Ո՛չ մէկ գիտական յայտնագործութիւն՝ (կամ ջուրի աւազան) չի կրնար մեզի՝ նման բուժում առաջարկել. այդ կու գայ միայն հաւատքով:

**Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ՝ որ բուժեցիր իմ մեծագոյն հիւանդութիւնս՝ մեղքի համաճարակը եւ վերականգնեցիր հոգեւոր առողջութիւնս՝ Տեր Յիսուսի միջոցով: Ամեն:**  
**Երբ կը փորձուինք հոգեւոր բժշկութիւն փնտոել Աստուծմէ տարբե՞ր տեղ, յիշե՞նք թէ միայն Տեր Յիսուս կրնայ տալ մեզի կատարեալ՝ բժշկութիւն:**

Եթե արտիդ մէջ հունձք հնձես եւ արտին մէջ  
որայ մը մոռցած ըլլաս ... գաղթականին, որբին  
ու այրիին թող ըլլայ: [Բ. Օր. 24. 19]

## ԱՌԱՏԱՉԵՌՆ ՀԱՒՏՔ

**Փ**անի մը տարիներ առաջ մեր եկեղեցին հրաւէր ստացաւ ընդունելու գաղթականներ, որոնք փախուստ տուած էին իրենց երկրէն՝ քաղաքական զեկավարութեան կատարած խոռվալից փոփոխութիւններէն յետոյ: Լման ընտանիքներ կու գային՝ միայն առնելով այն ինչ որ կրնային տեղաւորել իրենց փոքր պայուսակներուն մէջ: Մեր եկեղեցին ընտանիքներէն մի քանին բացին իրենց տուները, ներառեալ ոմանք որոնք աւելորդ տեղ չունէին:

Անոնց չնորհալի հիւրասիրութիւնը կ'արտացոլացնէ Աստուծոյ երեակ պատուիրանը տրուած հարայէլացիներուն, երբ անոնք մտան խոստացեալ երկիրը (Բ. Օր. 24. 19-21): Որպէս գիւղատնտեսական հասարակութիւն՝ անոնք շատ լաւ կը հասկնային բերքի կարեւորութիւնը: Բերքը՝ անհրաժեշտ էր զիրենք հասցնելու մինչեւ յաջորդ տարին: Այս Աստուծոյ պատուիրանը՝ «մոռցուած որան գաղթականին, որբին եւ այրիին ըլլայ»ն (Հմ. 19), նաեւ իրեն վստահելու խնդրանքի կը դարձնէ: Հարայէլացիները պէտք էր առատաձեռնութիւն դրսեւորէին՝ ոչ թէ տալով միայն այն ատեն, երբ գիտէին թէ բաւական է, այլ նուիրելով այն սիրով՝ որ կը վստահին Աստուծոյ:

Նման հիւրընկալութիւնը նաեւ կը յիշեցնէր «որ (անոնք) եգիպտոսի մէջ ստրուկ էին» (Հմ. 18, 22): Անոնք ժամանակ մը ճնշուած եւ ընչազուրկ եւ չքաւոր էին: Անոնց առատաձեռնութիւնը՝ կը յիշեցնէր Աստուծոյ ըրած ողորմածութիւնը իրենց հանդէպ ազատելով զանոնք գերութենէ:

Յիսուսի հաւատացողները՝ նոյնպէս կոչ ունին առատաձեռն ըլլալու: Պօղոս կը յիշեցնէ մեզի: «Քրիստոս որ թէպէտ հարուստ էր ձեզի համար աղքատ եղաւ, որպէսզի դուք հարստանաք անոր աղաքատանալով» (Բ. Կորնթ. 8. 9): Մենք կու տանք, որովհետեւ Ան տուած է մեզի:

**Աղօթք - Սիրելի Յա՞յր,** կը խնդրեմ բա՛ց աչքերս՝ որ տեսնեմ իմ համայնքիս մէջ լուսանցքի վրայ եղողներուն կարիքները: Ամէն:

**Եթէ մէկը օգնած է քեզի երբ կարիքաւոր էիր, իիմա դուն ալ կրնաս օգնել անոնց՝ որոնք կարիքաւոր են:**



Աստուած միայնակ եղողները ընտանիքի մէջ  
կը բնակեցնե: [Սաղմ. 68. 6]

## ԲԱՐԵԿԱՄ ՄԻԱՅՆԱԿԻՆ

**Հօլի Քուգը** (*Holly Cooke*) չունէր ոեւէ բարեկամ, երբ ան տեղափոխուեցաւ Լոնտոն աշխատանքի համար: Անոր շաբաթավերջերը թշուարական ըլլալ կը թուէին: Քաղաքը՝ ինքնին առաջինն էր մրայլ տեղ մը ըլլալու ցուցակին վրայ. Լոնտոնցիներուն 55 տոկոսը կ'ըսեն թէ միայնակ են, համաձայն համաշխարհային հետազօտութեան, բաղդատած դրացի Բորդուկալի՝ Լիպաօն քաղաքի (*Lisbon, Portugal*) բնակիչներուն 10 տոկոսին հետ:

Կապ մը ունենալու համար՝ Հօլիին հակադարձեց իր վախերուն եւ ստեղծեց ընկերային ցանցի խումբ մը, կոչուած՝ Լոնտոնի միայնակ աղջիկներու ակումբ եւ մօտ երեսունչինդ հազար միացան: Փոքր խումբերու հանդիպումները, որոնք տեղի կ'ունենային քանի մը շաբաթը անգամ մը, կ'առաջարկէին զբոսայգիներու զբոսախնճոյքներ, արուեստի դասեր, սոկերչական սեմինարներ, ընթրիքներ եւ նոյնիսկ բացօդեայ մարզանք ընտանի կենդանիներու հետ:

Միայնակութեան մարտահրաւէրը նոր չէ, ո՛չ ալ մեր մեկուսացումի զգացումներու Բուժիչը: Մեր յաւիտենական Աստուածը, գրեց Դաւիթ, «միայնակ եղողները ընտանիքի մէջ կը բնակեցնէ, կապուածները ազատ կ'արձակէ» (Սաղմ. 68. 6): Աստուծմէ խնդրել, որ մեզի մատնանշէ մեր ճամբան՝ դէպի Քրիստոսանման ընկերներու, սուրբ արտօնութիւն է, եւ հետեւաբար՝ խնդրանք, որ մենք կրնանք ազատորէն գիմել իրեն: «Որբերուն հայրն ու այրիներուն դատաւորը Աստուած է իր սուրբ բնակավայրին մէջ» (Հմ. 5), աւելցուց Դաւիթ: «Օրհնեալ ըլլայ Տէրը օրէ օր. երբ բեռնաւորուինք՝ Աստուած մեզ կը փրկէ» (Հմ. 19):

Ինչպէս բարեկամ է Տէրը: Ան մեզի յաւիտենական ընկերներ կը պարզեւէ՝ սկսած ամէն ատեն իր փառաւոր ներկայութենէն: Ինչպէս կ'ըսէ Հօլին, «Ընկերոջ ժամանակը՝ լաւ է հոգիին համար»:

**Աղօթք - Սիրելի Յիսուս,** երբ սիրուս միայնակ կը զգայ, կը ինտրեմ ցոյց տուր ինձի լաւ ընկեր մը՝ սկսելով թեզմէ: Ամէն:

**Յիսուսի հետ մեր ունեցած բարեկամութիւնը՝ կը սորվեցնէ մեզի ուրիշներու համար յաւիտենական ընկեր ըլլալու մասին:**

Ուստի Եկո՛ւր հիմա, քեզ Փարաւոնին դրկեմ, որ իմ ժողովուրդս՝ ԽրայԵլի որդիները՝ Եգիպտոսն հանես: [Ել. 3. 10]

## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԸ

**Կ**ախագահ Աբրահամ Լինքլն (Abraham Lincoln) երկուք ու կիս տարիներ առաջ ստրկութեան մէջ եղող մարդոց ազատ արձակելու հրաման տուած էր: Դաշնակցային իշխանութիւնը ընդունած ու գործադրած էր, բայց Թէքսաս (Texas) նահանգը տակաւին չէր ճանչցած ստրուկներուն ազատ արձակուիլը: Սակայն, Յունիս 19, 1865-ին՝ Միութեան բանակի սպարապետ Կորտըն Կորդյոնը (Gordon Granger) գնաց Կալվըրսթըն, Թէքսաս (Galveston, Texas) եւ պահանջեց, որ բոլոր ստրկացած անձերը ազատ արձակուին: Պատկերացուցէ՛ք, թէ ի՞նչպիսի ցնցում ու ուրախութիւն տիրեց, երբ կապանքները ինկան եւ գերութեան մէջ գտնուողները լսեցին ազատութեան յայտարարութիւնը:

Աստուած կը տեսնէ ճնշուածները եւ Ան ի վերջոյ կը յայտարարէ անարդարութեան ծանրութեան տակ գտնուողներուն ազատութիւնը: Սա ճշմարիտ է հիմա, ինչպէս որ Մովսէսի օրերուն էր: Աստուած անոր յայտնուեցաւ այրող թուփին հրատապ ուղերձով. «Ճեսայ Եգիպտոսի մէջ եղող ժողովուրդիս տառապանքը» (Ել. 3. 7): Աստուած ոչ միայն տեսաւ Եգիպտոսի դաժանութիւնը իսրայէլի դէմ, այլ նաև ծրագրեց բան մը ընել: «Ուստի իջայ՝ զանոնք ազատելու Եգիպտացիներուն ձեռքէն, ու զանոնք բարձրացնելու այդ երկրէն դէպիլաւ եւ ընդարձակ երկիր մը» (Հմ. 8): Ան մտադիր էր՝ ազատութիւն յայտարարելու իսրայէլի, եւ Մովսէս պիտի ըլլար իր խօսափողը: «Ուստի եկո՛ւր հիմա, քեզ Փարաւոնին դրկեմ, որ իմ ժողովուրդս՝ իսրայէլի որդիները՝ Եգիպտոսէն հանես» (Հմ. 10):

Աստուած կ'ազատէ մեզ բոլոր ստրկութենէն եւ անարդարութենէն: Ան յոյս ու ազատութիւն կու տայ բոլոր ճնշուածներուն:

**Աղօթք -** Սիրելի Աստուած, մեր աշխարհի պատմութեան մէջ այսքան շատ ճնշում կայ, որ հեշտ է յուսահատիլ: Կը խնդրեմ, օգնէ ինձի ներդաշնակ մնալ ազատութեան մասին յայտարարելու թու մտադրութեանդ: Ամէն:

**Աստուած կ'աշխատի ճնշուածներուն օգնելու համար եւ կը հրամարէ մեզ՝ մասնակցելու այդ աշխատանքին:**

Անոր գթութիւնը չի սպարին: Ամէն առտու կը  
վերանորոգուին: [Ողբ Եր. 3. 22-23]

## ՆՈՐ ԵՒ ՈՐՈՇԱԿԻ

**Ե**րեք տարիներ, բացի տան կարիքներէն, Սուզըն (Susan) իրեն համար ոչինչ գնեց: Covid համաճարակը, ազգեց ընկերոջն եկամուտին եւ ան ընդունեց համեստ ապրելակերպ մը: «Օր մը, բնակարանս մաքրելու ատեն, նկատեցի թէ որքա՞ն մաշուած եւ հինցած տեսք ունին իմ ունեցած բաներս», ըսաւ ան: «Այդ ատեն սկսայ կարօտը ունենալ նոր եւ վերանորոգուած բաներ ունենալ՝ թարմութեան եւ գրգռութեան զգացումով: Շրջապատս՝ յոգնած ու հինցած կը թուէր: Զգացի թէ ոչի՞նչ կայ ակնկառոյց սպասելու»:

Սուզըն քաջալերութիւն գտաւ Աստուածաշունչի անհաւանական թուացող գիրքին մէջ: Երեմիայի կողմէ գրուած՝ երուսաղէմը Բաբելոնի ձեռքը իյնալէն ետք, Երեմիայի Ողբը կը նկարագրէ մարգարէին եւ ժողովուրդին կրած վիշտին՝ բաց վէրքը: Սակայն վիշտի յուսահատութեան մէջ, յոյսի հաստատ հիմք մը կայ. Աստուծոյ սէրը: «Անոր գթութիւնը չի սպարին: Ամէն առտու կը վերանորոգուին» (Յ. 22-23):

Սուզան յիշեց, որ Աստուծոյ խոր սէրը՝ ամէն օր նորո՞գ կը թափանցէ: Երբ պարագաները կը ստիպեն մեզ զգալու, որ այլեւս անհամբեր սպասելու ոչինչ կայ, մենք կրնանք յիշել Անոր հաւատարմութիւնը եւ սպասել խոստումին, թէ ինչպէս Ան պիտի հոգայ մեզ: Մենք կրնանք վստահութեամբ յուսալ Աստուծոյ, գիտնալով որ մեր յոյսը երբէ՛ք ի զուր չէ (Հմ. 24-25), որովհետեւ ապահովուած է Անոր հաստատակամ կարեկցութեամբ եւ սիրով:

«Աստուծոյ սէրը՝ ամէն օր իմ «վերանորոգումս է», կ'ըսէ Սուզըն: «Ես կրնամ յոյսով նայիլ դէպի առաջ»:

**Աղօթք - Սիրելի Յայր,** փառք թեզի, որովհետեւ ամէն օրը՝ իր հետ կը բերէ Ձու որոշակի եւ հաստատուն սէրդ: Ամէն:

**Սեր դժուար իրավիճակներուն մէջ՝ չենք տեսներ որեւէ յոյս, սակայն Աստուծոյ սիրոյ խոստումը՝ որպէս «ամէն առտու վերանորոգում»՝ մեզի յոյս կը ներշնէտ:**

Եկէք ինծի, դուք բոլորդ որ կը յոգնիք ու բեռնաւորուած եք, եւ ես պիտի հանգստացնեմ ձեզ: [Մատթ. 11. 28]

## ՀԱՆԳԻՄ ԳՏՆԵԼ ՅԻՍՈՒՍԻ ՄԷՋ

**Ա**նհանգիստ հոգին՝ երբէք չի բաւարարուիր հարստութեամբ եւ յաջողութիւններով: Այս ճշմարտութեան մասին կրնայ վկայել՝ մահացած գաւարային երաժշտութեան տիտան մը: Անոր հրապարակած՝ շուրջ քառասուն ձայնապնակները կ'երեւնան գաւարական երաժշտութեան ցուցակին բարձրագոյն դասին մէջ եւ նոյնպէս առանձիններուն մէջ: Բայց ան նաև ունեցած է բազմաթիւ ամուսնութիւններ եւ ժամանակ անցուցած է բանտի մէջ: Նոյնիսկ իր արձանագրած բոլոր նուածումներուն մէջ, ան անգամ մը ողբաց ըսելով. «Անհանգստութիւն կայ հոգիիս մէջ, որ ես երբէք չեմ նուաճած. ո՛չ շարժումով, ո՛չ ամուսնութիւններով եւ ո՛չ ալ իմաստով ... Այդ տակաւին հոն է՝ որոշ չափով: Եւ հոն ալ պիտի ըլլայ՝ մինչեւ իմ մեռնելու օրս»: Դժբախտաբար՝ ան կրնար հանգստութիւն գտնել՝ իր կեանքը աւարտելէ առաջ:

Յիսուս կը հրաւիրէ բոլոր անոնց, ինչպէս այս երաժիշտին, որոնք յոգնած են մեղքի մէջ տանջուելէն եւ անոր հետեւանքով, անձամբ գալ իրեն. «Եկէք ինծի», կ'ըսէ Ան (Մատթ. 11. 28): Երբ մենք փրկութիւն ստանանք Յիսուսով, Ան կը վերցնէ մեղմէ բեռները եւ «մեզ կը հանգստացնէ»: Միակ պահանջքներն են՝ հաւատալ Անոր եւ յետոյ սորվիլ իրմէ, թէ ինչպէ՞ս ապրելու ենք այն առատ կեանքով, որ Ան կ'ապահովէ (Յովհ. 10. 10): Քրիստոսի աշակերտ ըլլալու լուծը վերցնելու արդիւնքը կ'ըլլայ՝ գտնել «Հանգիստ մեծ հոգիններուն համար» (Մատթ. 11. 29):

Երբ մենք կու գանք Յիսուսի, Ան չի կրծատեր մեր հաշուետուութիւնը Աստուծոյ առջեւ: Ան խաղաղութիւն կու տայ մեր անհանգիստ հոգիններուն ապահովելով մեզ՝ իր մէջ ապրելու նոր եւ նուազ ծանրաբեռ կեանքի ընթացք մը: Ան մեզի կու տայ իսկական հանգիստ:

**Աղօթք - Սիրելի Յիսուս,** թող իմ անհանգիստ հոգին՝ խաղաղութիւն գտնելու հանգչի միայն քու մէջը: Ամէն:

**Կարելի է որ մենք յոգնած ու ծանրաբեռնուած զգանք, սակայն Յիսուս կ'առաջարկէ ու կը խոստանայ մեզի հանգիստ ապրելու կարելիութիւնը:**

Խորանը կանգնեցո՞ւր այս ծեւին համաձայն, որ  
լերան վրայ քեզի ցոյց տրուեցաւ: [Ել 26. 30]

## ՊԱՇՏԱՎՈՒՆՔԻ ՏՈՒՆ

**Ե**րբ երկրորդ Համաշխարհային Պատերազմի ատեն՝ Մեծն Բիրխտանիոյ Կառավարական Պալատը ոմքակոծուեցաւ ու քանդուեցաւ, Վարչապետ Ուինսթոն Չրիչիլ (Winston Churchill) ըսաւ Խորհրդարանին, որ անոնք պէտք է վերակառուցեն զայն՝ իր սկզբնական նախագիծին համաձայն: Նոր շէնքը՝ պէտք է փոքր ըլլայ, այնպէս մը՝ որ բանավէճերը ըլլան դէմ-առ-դէմ: Այդ պէտք է ըլլայ երկայնաձեւ՝ ոչ թէ կիսաշրջանակաձեւ՝ թոյլ տալով քաղաքական գործիչներուն «շարժելու սրահին կեդրոնը»: Այս ձեւը՝ պահպանեց Բիրխտանական կուսակցական համակարգը, ուր ձախերը ու աջերը՝ դէմ առ դէմ կը կենան սրահին իւրաքանչիւր կողմը, պահանջելով զգուշ մտածել՝ նախքան միւս կողմ անցնիլը: Չըրչիլ եղրակացուց. «Մենք կը ձեւաւորենք մեր շէնքերը, իսկ յետոյ մեր շէնքերը կը ձեւաւորեն մեզ»:

Ելից գիրքին ութը գլուխները կու տան խորանի կառուցումին հրահանգներ (գլ. 24-31), եւս վեց գլուխներ՝ կը նկարագրեն՝ թէ ինչպէս իսրայէլ գործադրեց զանոնք (գլ. 35-40): Աստուած մտահոգ էր անոնց բաձրացնելիք պաշտամունքին մասին: Երբ մարդիկ մտան գաւիթը, փայլուն ոսկին եւ խորանի գունաւոր վարագոյրները շացուցին զիրենք (26. 1, 31-37): Ողջակէզներու սեղանը (27. 1-8) եւ ջուրի աւագանը (30. 17-21) յիշեցուցին անոնց իրենց ներումին արժէքը: Խորանը կը պարունակէր աշտանակը (25. 31-40), հացի սեղանը (25. 23-30), խունկի զոհասեղանը (30. 1-6) եւ ուխտի տապանակը (25. 10-22): Իւրաքանչիւր առարկայ՝ մեծ նշանակութիւն ունէր:

Աստուած մեզի չի տար մանրամսան հրահանգներ մեր պաշտամունքի տարածքին համար, ինչպէս Ան ըրաւ իսրայէլի, սակայն մեր երկրպագութիւնը պակաս կենսական չէ: Մեր էութիւնը պէտք է ըլլայ խորան մը, որ առածնացուած է Անոր համար, ուր Ան կը բնակի: Թող այն ամէնը, ինչ որ մենք կ'ընենք, յիշեցնէ մեզի, թէ ո՞վ է Ան եւ ի՞նչ կ'ընէ մեզի համար:

**Աղօթք - Յայր,** Դո՛ւս արժանի ես իմ լաւագոյն պաշտամունքին: Ամեն:

**Մեր բարձրացուցած պաշտամունքը, կը սորվեցնէ՝ մեզի հանդէպ Աստուծոյ ունեցած սիրոյ մասին:**

ՊատուիրԵ՛ բարիք թող գործեն, բարի գործերով թող հարստանան, առատաձեռն եւ ուրիշին կարիքներուն հաղորդակից ըլլան: [Ա. Տիմ. 6. 18]

## ՅԱՐՈՒՄԱԾ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ

**Ը**ուրջ եօթանասուր տարիներու տքնաջան աշխատանքէ ետք որպէս լուացարարուՀի՝ Օսիօլա ՄքՔարդին (*Oseola McCarty*) վերջապէս պատրաստ էր հանգստեան կոչուելու ութսունվեց տարեկանին: Ան բծախնդիր կերպով խնայած էր իր չնչին եկամուտը՝ բոլոր այդ տարիներուն ընթացքին եւ ի զարմանք իր համայնքին Օսիօլան 150,000 տոլար նուիրեց՝ մօտակայ համալսարանի կարիքաւոր ուսանողներուն համար կրթանպաստի հիմնադրամ ստեղծելու: Պգեշնչուած անոր այս անձնուրաց նուէրէն՝ հարիւրաւոր մարդիկ նուիրեցին բաւարար չափով՝ եռապատկելու անոր նուիրատուութիւնը:

Օսիօլան հասկցաւ, որ իր հարստութեան իրական արժէքը ոչ թէ իր սեփական շահին համար օգտագործելն էր, այլ ուրիշներու օրհնելու մէջ էր: Պօղոս առաքեալ յորդորեց Տիմոթէոսի պատուիրել այս աշխարհի մէջ եղած հարուստներուն որ «Հարստանան բարի գործերով» (Ա. Տիմ. 6. 18): Մեզմէ իւրաքանչիւրին տրուած է հարստութիւն, որու տնտես ըլլալու ենք, ըլլայ այդ նիւթական միջոցներ կամ ալ կարելիութիւններ: Փոխանակ մեր կարելիութիւններուն վստահելու՝ Պօղոս կը զգուշացնէ մեզի՝ մեր յոյսը դնել միայն Աստուծոյ վրայ (Հմ. 17) եւ գանձեր դիզել երկինքի մէջ ըլլալով «առատաձեռն եւ ուրիշներուն կարիքներուն հաղորդակից» (Հմ. 18):

Աստուծոյ տնտեսութեան մէջ՝ պահելը եւ առատաձեռն չըլլալը՝ միայն կ'առաջնորդէ դատարկութեան: Մէրէն մզուած ուրիշներուն տալը՝ գոհունակ զգալու ճամբան է: Ունենալ թէ Աստուածապաշտութիւն եւ թէ գոհունակութիւն ինչպէ՞ս կը թուի մեզի համար, եթէ շուայլ ըլլանք կարելիութիւններով՝ ինչպէս որ Օսիօլան էր: Եկէ՛ք այսօր ձգտինք հարուստ ըլլալ բարի գործերով, ինչպէս Աստուած կ'առաջնորդէ մեզ:

**Աղօթը - Յայր Աստուած, շնորհակալ եմ իմ ունեցած կարելիութիւն-ներուս համար: Այսօր այդ բոլորը կը յանձնեմ քեզի: Ամեն: Առատաձեռն ըլլալու հնարաւորութիւնը ունինք, եթէ պատրաստ ենք մեր ունեցածները ուրիշներու հետ բաժնեկցելու գոհունակութիւնը ունենալու:**

Մի՛ վախնաք. որովհետեւ կստուած եկաւ ձեզ փորձարկելու, որպէսզի անոր վախը ձեր առջեւ ըլլայ ու չմեղանչեք: [Ել. 20. 20]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԱԿՆԱԾԱՆՔՈՎ

**Երկիւղը՝** (*phobia*) կը սահմանուի որպէս «անիմաստ վախ» որոշ բաներէ իրավիճակներէ: Ոստայներկիւղը՝ (*arachnophobia*) սարդերէն վախնալ է (հակառակ անոր որ ոմանք կրնան պնդել թէ իմաստալից բան մըն է վախնալ սարդերէն): Ապա՝ կա՞ն այլ տեսակի երկիւղներ՝ գնդաբերկիւղ (*globophobia*) եւ տուրմաներկիւղ (*xoccolatophobia*): Ասոնք եւ մօտ չորս հարիւր տարբեր տեսակի երկիւղներ, իրական են եւ փաստարկուած: Կը թուի թէ մենք կրնանք ամէն ինչէ վախնալ:

Աստուածաշունչը կը պատմէ իսրայէլացիներուն վախին մասին՝ Տասը Պատուիրանները ստանալէ ետք. «Ամբողջ ժողովուրդը տեսաւ որոտումները, շանթերը, ցնցուեցաւ ու հեռու կայնեցաւ» (Ել. 20. 18): Մովսէս միսիթարեց անոնց՝ առաջարկելով այս ամենէն հետաքրքրական արտայայտութիւնը. «Մի՛ վախնաք. որովհետեւ Աստուած եկաւ ձեզ փորձարկելու, որպէսզի անոր վախը ձեր առջեւ ըլլայ ու չմեղանչէք» (Հմ. 20): Կարծէք Մովսէս կը հակասէր ինքն իրեն. «Մի՛ վախնաք, բայց վախցէք»: Իրականութեան մէջ, Եբրայերէնով «վախ» բառը կը պարունակէ առնուազն երկու իմաստ բանի մը հանդէպ գողդողուն սարսափ կամ Աստուծոյ հանդէպ յարգալիր ակնածանք:

Մենք կրնանք ծիծաղի՝ գիտնալով որ գնդաբերկիւղը (*globophobia*) վախ է փուչիկէն, իսկ տուրմաներկիւղը (*xoccolatophobia*) վախ է տուրմէն (շոքոլա): Երկիւղներու հետ կապուած աւելի լուրջ եղրակացութիւնը այն է, որ մենք կրնանք վախնալ ամէն տեսակի բաներէ: Վախերը սարդերու պէս կը մտնեն մեր կեանքը եւ աշխարհը կրնայ սարսափելի տեղ մը ըլլալ մեզի համար: Երբ կը պայքարինք երկիւղներու եւ վախերու դէմ, լաւ է՝ որ մենք մեզի յիշեցնենք, թէ Աստուած ահռելի Աստուած է, որ կ'առաջարկէ մեզ իր ներկայութեան միսիթարութիւնը խաւարի մէջ:

**Աղօթք -** Սիրելի Աստուած, ես շատ բաներէ կը վախնամ: Միսիթարէ զիս եւ օգնէ ինձի որ հանգստանամ թու սիրոյդ մէջ: Ամէն:

**Կրնայ ըլլալ որ մենք շատ բաներէ կը վախնանք, սակայն**

**Աստուծոյ սերը կ'օգնէ մեզի յաղթահարելու ատոնց:**

Չեմ դադրիր շնորհակալ ըլլալէ ձեզի համար՝ յիշելով  
ձեզ իմ աղօթքներուս մէջ: [Եկ. 1. 16]

## ԽՈՆԱՐԴ ԵՕՐՆ

**Ա**նոնք չէին կարծեր, որ Եօրն՝ (Յօրն) հող մշակող վարձակալը,  
շատ բան կրնայ ունենալ: Սակայն հակառակ իր տկար  
տեսողութեան եւ Փիզիքական այլ սահմանափակումներու,  
ան իր անձը նուիրեց Նորվէկիայի իր գիւղի բնակիչներուն  
համար՝ աղօթելով բազմաթիւ գիշերներ, երբ ցաւը զինք  
արթուն կը պահէր: Աղօթքի ժամանակ՝ ան կը տեղափոխուէր՝  
տունէ տուն իւրաքանչիւր անձ անուանելով անհատապէս՝  
իր աղօթքին մէջ, նոյնիսկ այն երեխաները, որոնց տակաւին  
չէր հանդիպած: Մարդիկ կը սիրէին անոր մեղմ հոգին եւ  
կը խնդրէին անոր իմաստութիւնն ու խորհուրդը: Եթէ ան  
չկարենար գործնականին մէջ օգնել անոնց, անոնք տակաւին  
օրհնուած կը զգային, երբ հեռանային՝ ստանալով անոր սէրը:  
Եւ երբ Եօրն մեռաւ, անոր յուղարկաւորութիւնը ամենամեծն  
էր այդ համայնքին մէջ, թէեւ ան այնտեղ ընտանիք չունէր:  
Անոր աղօթքները ծաղկեցան եւ աւելի պտուղ տուին, քան ինք  
կրնար պատկերացնել:

Այս խոնարհ մարդը հետեւեցաւ Պօղոս առաքեալի  
օրինակին, որ կը սիրէր անոնց, որոնց կը ծառայէր եւ կ'աղօթէր  
անոնց համար՝ իր սահմանափակուած վիճակին մէջ: Ան գրեց  
Եփսոսի մէջ գտնուող հաւատացեալներուն, երբ հաւանաբար  
բանտարկուած էր Հռոմի մէջ՝ աղօթելով, որ Աստուած տայ  
անոնց «իմաստութեան եւ յայտնութեան Հոգին» եւ անոնց  
սիրտին աչքերը «լուսաւորութիւն» (Եփ. 1. 17-18): Ան կը  
փափաքէր, որ անոնք ճանչնան Յիսուսի եւ ապրին սիրով եւ  
միասնութեամբ՝ Հոգիին զօրութիւնով:

Եօրն եւ Պօղոս առաքեալ իրենք զիրենք տուին Աստուծոյ՝  
աղօթքով Անոր յանձնելով անոնց, որոնց կը սիրէին եւ ծառայեցին  
Անոր: Թերեւս մենք կրնանք նկատի առնել անոնց օրինակը  
թէ ինչպէս կարելի է սիրել եւ ծառայել ուրիշներու այսօր:

**Աղօթք - Տէր Յիսուս, Դուև ծառայեցիր ուրիշներուն եւ անոնց  
կարիքները դրիր առաջին տեղը: Կը խնդրեմ, օգնէ ինծի՝ որ ամէն  
օր սիրեմ եւ ուրախութեամբ ծառայեմ Ձեզի: Ամէն:**

**Աղօթքի մարտիկները՝ Կ'արտացոլացնեն Թրիստոսի սէրը:**

Չու ամուսինիդ մեռնելին ետք ինչ որ կեսուրիդ ըրիր՝  
բոլորն ալ պատմեցին ինձի: [Հո. 2. 11]

## ԻՐԱՐՄԷ ՍՈՐՎԻԼ

**Զ**ումը (Zoom) հասանելի հաղորդակցութեան միջոց մը ըլլալէ տարիներ առաջ, ընկերուհի մը խնդրեց ինձմէ միանալ իրեն տեսազանգով՝ (video call) քննարկելու համար ծրագիր մը: Ե-նամակներուս ձայնին միջոցով ան հասկցաւ, որ ես շփոթած եմ, ուստի առաջարկեց՝ գտնել դեռահաս պատանի կամ պատանուհի մը, որ օգնէ ինձի հասկնալու թէ ինչպէս կարելի է տեսազանգը պատրաստել:

Անոր առաջարկը կը մատնանշէ՝ միջսերունդներու յարաբերութիւններու արժէքը: Բան մը որ կարելի է նկատել Հոռութիւնում պատմութեան մէջ: Հոռութիւնում պատմութեան մէջ յաճախ կը նշուի որպէս հաւատարիմ հարս մը, որ որոշեց ձգել իր երկիրը եւ Նոյեմիի հետ Բեթլեհէմ վերադառնալ (Հո. 1. 16-17): Երբ անոնք հասան քաղաք. կրտսեր կինը ըստ Նոյեմիին. «Կ'աղերսեմ, արտերը երթամ ու հասկեր քաղեմ անոր ետեւէն՝ որուն աչքերուն առջեւ շնորհք պիտի գտնեմ» (2. 2): Ան օգնեց տարեց կնոջ, որ ետքը իր կարգին օգնեց կրտսեր կնոջ՝ ամուսնանալու Բոռսի հետ: Հոռութիւն տրուած Նոյեմիի խորհուրդը՝ դրդեց Բոռսին քայլեր ձեռնարկել՝ գնելու իր մահացած խնամիներուն ունեցածը եւ առնել Հոռութը «որպէս իր կինը» (4. 9-10):

Մենք կը յարգենք անոնց խորհուրդները, որոնք իրենց փորձուած իմաստութիւնը կը բաժնեկցին երիտասարդ սերունդներուն հետ: Բայց Հոռութ եւ Նոյեմի՝ մեզի կը յիշեցնեն որ փոխանակումը կրնայ ընթանալ երկու ճանապարհով: Սորվելիք բան մը կայ մեզմէ փոքրերէն, ինչպէս նաեւ անոնցմէ, որոնք մեծ են: Եկէ՞ք ձգտինք զարգացնելու սէր եւ հաւատարիմ միջսերունդներու յարաբերութիւններ: Այդ կ'օրհնէ մեզ եւ ուրիշները. եւ կ'օգնէ մեզի՝ սորվելու բան մը որ չենք գիտեր:

**Աղօթք - Յա՛յր, փառք թեզի երիտասարդներուն եւ տարեցներուն մէջ յայտնաբերուած իմաստութեան համար: Սորվեցն'որ ինձի՝ գնահատել եւ արժեւորել միջսերունդներու փոխանակումները: Ամէն:**

**Ի՞նչ սորված ենք երիտասարդներէն եւ ինչպէ՞ս կրնանք աւելի լաւ կերպով կապուիլ անոնց:**

Իսկ հիմա կը բաղձան լաւագոյն հայրենիքի մը,  
այսինքն՝ Երկնայինին: [Եբ. 11. 16]

## ԿԵԱՆՔԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ

**Տ**արբեր դաւանանքներէ՝ աւելի քան երկու հարիւր միլիոն մարդեր ամէն տարի ուխտագնացութիւն կը կատարեն: Դարերու ընթացքին՝ շատերու համար ուխտաւորին պարտականութիւնը եղած է՝ ճամբորդել դէպի սուրբ վայր մը՝ օրհնութիւն ստանալու համար: Ամէնը կապուած է՝ հասնելու տաճար մը, սրբավայր մը կամ տեղ մը, ուր կարելի է օրհնութիւն ստանալ:

Սակայն՝ Մեծն Քրիտանիոյ Կելտական (Celtic) քրիստոնեաները այլ կերպ տեսան ուխտագնացութիւնը: Անոնք շարժեցան առանց որոշ ուղղութեան դէպի բնուութիւնը, կամ թոյլ տուին՝ որ իրենց նաւերը քշուին ուր որ ովկիանոսի հովերը զիրենք տանին: Իրենց համար ուխտագնացութիւնը՝ Աստուծոյ վստահիկ էր՝ անծանօթ տարածքի մէջ: Որեւէ օրհնութիւն կը գտնուէր ո՞չ թէ նպատակակէտի մը մէջ, այլ ճանապարհի ընթացքին:

Եքրայեցիս 11-ը կարեւոր հատուած էր Կելտերուն համար: Քանի որ Քրիստոսով կեանքը՝ աշխահի ուղիները ձգել եւ օտարներու պէս քալել էր դէպի Աստուծոյ քաղաքը (Հմ. 13-16), ուխտագնացութիւնը արձագանգեց իրենց կեանքի ճանապարհը: Վստահելով Աստուծոյ, որ կ'ապահովէ իրենց դժուարին, չյաճախուած ճանապարհով, ուխտաւորը աճեցուց այն հաւատքի այն տեսակը, որ ապրեցան հին օրերու հերոսները (Հմ. 1-12):

Սորվելիք ի՞նչ մեծ դաս է՝ անկախ անկէ թէ մենք Փիզիքապէս կը ճամբորդենք՝ թէ ո՞չ. անոնց համար, որոնք վստահած են Յիսուսի, կեանքը ուխտագնացութիւն մըն է՝ դէպի Աստուծոյ դրախտային երկիրը՝ որ լի է փորձութիւններով, փակուղիներով եւ մութ անտառներով: Մինչ կը ճամբորդենք, թող չփախցնենք Աստուծոյ նախախնամութիւնը զգալու օրհնութիւնը՝ ճամբուն վրայ:

**Աղօթք - Սիրելի Յայր,** շնորհակալ եմ, որ ցոյց տուիր ինծի որ կեանքի փորձութիւնները հնարաւորութիւններ են ինծի համար՝ աւելի ինոր հաւատք զարգացնելու թեզի հանդէա: Ամէն:

**Բաց ըլլակը Աստուծոյ ճանապարհներուն՝ իր պարգեւեները ստանալու համար,** յիշելով որ աշխարհը մեր իսկական տունը է:

Անապատը՝ ջուրի լիճի պիտի վերածեմ, եւ անջրդի  
երկիրը՝ ջուրի ակերու: [Ես. 41. 18]

## ՅԱՒԱՏՔԻ ԱՊԱԳԱՅ ՄԸ՝ ՏԵՍՆԵԼ

2005 թուականի՝ Գագրինա (*Katrina*) փոթորիկին աւերածութենէն յետոյ, Նոր Օրլինզը (*New Orleans*) աշխատեցաւ կամաց-կամաց վերակառուցանել: Ամենէն աւելի վնասուած շրջաններէն մէկը՝ Վարի իններորդ թաղամասն էր, ուր Գագրինայէն տարիներ ետք շարունակ բնակիչները չունէին հիմնական կարիքներուն հասնելու կարելիութիւնը: Պըրնըլլ Գօթլըն (*Burnell Cottlon*) աշխատեցաւ փոխել այդ: Նոյեմբեր 2014-ին ան բացաւ առաջին մթերքի խանութը՝ Վարի իններորդ թաղամասին մէջ: «Երբ ես գննեցի շէնքը, բոլորը կը կարծէին, որ խելագար եմ», կը յիշէ Գօթլըն: Բայց «առաջին յաճախորդը յուզուեցաւ եւ լացաւ, որովհետեւ երբէք չէր խորհեր թէ թաղամասը կը վերադառնայ»: Անոր մայրը ըսաւ, որ իր որդին «տեսաւ մէկ բան, որ ես չտեսայ: Ես ուրախ եմ՝ որ ան յանձն առաւ այդ առիթը»:

Աստուած Եսայի մարգարէին հնարաւորութիւն տուաւ տեսնելու յոյսի անսպասելի ապագան՝ աւերածութիւններու դիմաց: Տեսնելով, որ «գժբախտները ու աղքատները ջուր կը փնտռէին, բայց չկար» (Ես. 41. 17), Աստուած խոստացաւ «անապատը՝ ջուրի լիճի վերածել, եւ անջրդի երկիրը՝ ջուրի ակերու» (Հմ. 18): Երբ սովի եւ ծարաւի փոխարէն Անոր ժողովուրդը եւս մէկ անգամ ծաղկէ՛ր, անոնք պիտի իմանային, որ «ասիկա Տէրողը ձեռքը ըրաւ» (Հմ. 20):

Ան տակաւին վերականգնումի հեղինակն է, որ կը կերտէ ապագան, երբ «արարածները իրե՛նք ալ, կ'ազատուին ապականութեան ստրկութենէն» (Հռոմ. 8. 21): Երբ մենք կը վստահինք Անոր բարութեան, Ան կ'օգնէ մեզի տեսնելու ապագան, ուր յոյսը հնարաւոր է:

**Աղօթը - Վերականգնող Աստուած**, կը խնդրեմ օգևէ՛ ինձի կեանքովս վկայելու քու մէջո՞յ յայտնաբերուած յոյսին եւ քու թերած ապագային մասին: Ամէն:

**Երբ ականատես ըլլանք աւերածութենէ ետք՝ Աստուծոյ ըրած վերականգնումին, փորձե՛նք այդ աշխատանքին մէկ մասը ըլլալ:**

Տերոջ սիրելին իր քով ապահովութեամբ պիտի  
ապրի: [Բ. Օր. 33. 12]

## ԴՈՒՆ ՍԻՐԵԼԻ ԵՄ

**Ի** ՞ ռ տիսրութիւնը արտայայտելու համար, Ալլին (*Allie*)՝ երի-  
տասարդ աղջիկ մը, փայտի կտորի մը վրայ գրեց հետեւեալը  
եւ դրաւ զբօսայգիի մը մէջ. «Անկեղծ ըսած, ես տխուր եմ: Ո՞չ  
մէկը, երբէք չուզեր ինծի հետ շփուիլ եւ ես կորսնցուցի միակ  
մարդուն, որ կը լսէ: Ես ամէն օր կու լամ»:

Երբ մէկը գտաւ այդ գրութիւնը, մայթի կաւիճ բերաւ  
զբօսայգին եւ խնդրեց մարդոցմէ գրել իրենց միտքերը Ալլիին:  
Տասնեակ աջակցութեան խօսքեր ձգեցին մօտակայ դպրոցի մը  
աշակերտները. «Մենք կը սիրենք քեզ»: «Աստուած կը սիրէ  
քեզ»: «Դուն սիրելի ես»: Դպրոցի տնօրէնը ըսաւ. «Աս փոքր  
միջոց մըն է, որով մենք կրնանք ձեռք երկարել եւ գուցէ՛ օգնել  
որ անոր դատարկութիւնը լեցնենք: Ալլին կը ներկայացնէ մեզ  
բոլորս, քանի որ ժամանակին տեղ մը մենք բոլորս ալ պահ մը  
տիսրութիւն եւ տառապանք ապրելու զգացումը ունեցած ենք»:

«Դուն սիրելի ես» արտայայտութիւնը՝ ինծի կը յիշեցնէ  
Մովսէսի գեղեցիկ օրհնութիւնը հսրայէլի թենիամինի ցեղին  
ուղղուած՝ իր մահէն անմիջապէս առաջ. «Տէրող սիրելին իր  
քով ապահովութեամբ պիտի ապրի» (Բ. Օր. 33. 12): Մովսէս  
ուժեղ առաջնորդ մըն էր Աստուածոյ համար՝ որ յաղթեց թշնամի  
ազգերուն, ստացաւ Տասր Պատուիրանները եւ կոչ ըլրաւ անոնց,  
որ հետեւին Աստուածոյ: Ան տուաւ անոնց Աստուածոյ տեսակէտը  
իրենց մասին: Սիրելի բառը՝ կրնայ օգտագործուիլ նաեւ մեզի  
համար ալ, քանի որ Յիսուս ըսաւ. «Աստուած այնպէս սիրեց  
աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին» (Յովէ. 3. 16):

Քանի որ Աստուած կ'օգնէ մեզի ապահով կերպով  
հանգստանալու այն ծմարտութեան մէջ, որ Յիսուսի հաւատա-  
ցող իւրաքանչիւր հաւատացեալ «սիրելի է», մենք կրնանք  
ձգտիլ սիրել ուրիշներուն, ինչպէս ըրին Ալլիի նոր ընկերները:

**Աղօթք** - Սիրելի Յա՛ր, թող ես վստահ ըլլամ՝ ինծի հանդէա Զու  
ունեցած սիրոյդ համար եւ տարածեմ զայն իմ շրջապատիս: Ամեն:

**Սորվինք ապահով կերպով հանգչիլ Աստուածոյ սիրոյն մէջ եւ  
բաժնեկցինք զայն ուրիշներու հետ:**

Զու ի՞նչ հոգդ է. դուն հետեւե՛ ինծի: [Յովի. 21. 22]

## Ի՞ՆՉ Է ԱՅԴ ՔԵԶԻ ՀԱՄԱՐ

«Ինչո՞ւ ես կը ստանամ ելակի շաքարը, երբ ան ունի խաղողինը». Հարցուց վեց տարեկան եղբօրաղջիկս: Եղբօրաղջիկներս ու եղբօրորդիներս ինծի սորվեցուցած են, որ երեխաները յաճախ կը համեմատեն իրենց տրուածը՝ ուրիշներուն տրուածին հետ: Սա՛ կը նշանակէ, որ որպէս խնամանատար հօրաքոյր՝ աւելի լաւ դատողութիւն ցուցաբերեմ:

Ես ալ նոյնպէս երեխմն կը համեմատեմ Աստուծոյ ինծի տուած բաները, ուրիշներու տուածին հետ: «Ինչո՞ւ ես ունիմ այս, իսկ ան՝ այն», կը հարցնեմ Աստուծոյ: Սիմոն Պետրոս ալ նման բան մը հարցուց Յիսուսի Գալիլիա ծովուն մօտ: Յիսուս տակաւին նոր վերականգնած ու ներում չնորհած էր Պետրոսի, զինք նախապէս ուրանալուն համար եւ հիմա կ'ըսէր անոր, որ փառաւորելու է Աստուծոյ՝ մեռնելով նահատակի մահով (Յովի. 21. 15-19): Սակայն Պետրոս՝ Յիսուսի այո՛ պատախաննելու փոխարէն՝ իրեն հետեւելու հրաւէրին, հարցուց Յովհաննէսի համար. «Ճէ՛ր, հապա ասիկա՛ ի՞նչ պիտի ըլլայ» (Հմ. 21):

Յիսուս պատախաննեց. «Քու ի՞նչ հոգդ է» եւ աւելցուց. «Դուն հետեւէ՛ ինծի» (Հմ. 22): Ես կը հաւատամ, որ Յիսուս նոյնը կ'ըսէ մեզի: Երբ Ան արդէն ուղղութիւն տուած է կեանքի որեւէ որորտին մէջ, Ան կը ցանկայ ունենալ մեր վստահութիւնը: Մենք պէտք չէ համեմատենք մեր ուղին ուրիշներու ուղիին հետ՝ այլ պարզապէս պէտք է հետեւինք իրեն:

Աւելի քան երեսուն տարիներ, Պետրոս առաքեալ հետեւեցաւ Աստուծոյ, որպէս առաջին եկեղեցիին խիզախ առաջնորդ: Հստ պատմութեան, ան անվախ ընդունեց մահը՝ չար ներոն կայսրին օրով: Թո՞ղ որ մենք ալ նոյնպէս ըլլանք հաստատուն եւ առանց արարկելու՝ Աստուծոյ հետեւինք, վստահելով Անոր սիրոյն եւ առաջնորդութեան:

**Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ օգնէ ինծի վստահելու Եւ հետեւելու թեզի: Աւել:**

**Մենք յաճախ կը փորձուինք մեր վիճակը համեմատել ուրիշներու հետ ու հարց տալ Աստուծոյ, մինչ մեր կոչումը ըլլալու է Աստուծոյ հետեւիլ:**

## ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Ազդել Մարդոց .....	Ապ. 8, 12
Ակնածութիւն առ Աստուած .....	Մայ. 16
Աղօթք .....	Ապ. 29, Մայ. 3, 18, Յուն. 25
Աշակերտութիւն .....	Մայ. 13
Առատածեռնութիւն .....	Յուն. 2, 7, 9, 17, 23
Աստուածաշունչ՝ Վարդապետութիւն .....	Մայ. 31
Աստուծոյ Նկարագիրը .....	Մայ. 20
Աստուծոյ Սէրն ու Հոգատարութիւնը .....	Ապ. 4, 18, 25, 30 Մայ. 2, 20, 24, Յուն. 5, 12, 20, 24
Աստուծոյ Սպասել .....	Մայ. 20
Աստուծոյ Վստահիլ ...	Ապ. 25, Մայ. 3, 4, 14, 18, Յուն. 4, 14, 27
Արդարութիւն .....	Ապ. 8, Յունիս 19
Աւետարանչութեան Աստուածաբանութիւնը .....	Մայ. 19
Աւետարանչութիւն .....	Ապ. 12, Մայ. 25, Յուն. 10
Բազմամշակոյթ .....	Մայ. 26, Յուն. 19
Բարեկամութիւն .....	Յուն. 18
Գոհունակութիւն .....	Ապ. 23
Գութ .....	Ապ. 8, 12
Դատել .....	Յուն. 30
Դրախտ .....	Ապ. 15, Մայ. 17, 27, Յուն. 11
Եկեղեցի՝ Մասնակցութիւն .....	Ապ. 26
Իմաստութիւն .....	Ապ. 21, Մայ. 11, 18, Յուն. 26
Ծառայել .....	Մայ. 7, 21
Կռապաշտութիւն .....	Յուն. 8
Համայնք .....	Ապ. 1, 2, 8, 15, 22, 24, 26, Յուն. 25, 26
Հաշտութիւն .....	Մայ. 21
Հաւատք՝ Յաղթանակ .....	Ապ. 24
Հաւատքի Պատմութիւններ .....	Մայ. 12
Հնագանդութիւն .....	Ապ. 16, 23
Հոգեկան Աճում .....	Ապ. 6, 9, Մայ. 6, 11, 24, Յուն. 5

Յոգիին Առաջնորդութիւնը .....	Մայ. 30, Յուն. 15
Յոգեկան Կարգապահութիւն .....	Ապ. 27
Յոգեկան Պատերազմ ..Ապ. 18, 28, 29, Մայ. 1, 8, 15, 22, 27	
Յոգիին Պտուղները .....	Յուն. 29, Մարտ 27
Մատակարարութիւն .....	Մայ. 9, Յուն. 7, 9, 17
Մեղք .....	Յուն. 16
Մեղքերու թողութիւն .....	Յուն. 3
Մեսակութիւն .....	Յուն. 18
Մտահոգութիւն .....	Ապ. 14, 27
Յարաբերութիւններ .....	Ապ. 30, Մայ. 29
Յոյս .....	Ապ. 10, 12, 13 Մայ. 14, 26, 27, Յուն. 20
Ներել Ուրիշներու .....	Մայ. 21, Յուն. 8
Շնորհակալութիւն .....	Ապ. 7, Յուն. 6
Որոշում Կայացնել .....	Ապ. 17, 21, Մայ. 11, 31,
Ուրիշ Յաւատացեալներու հետ Ապրիլ .....	Ապ. 1, 22, 30
Պաշտամունք .....	Ապ. 11, 19, Մայ. 23, 28, Յուն. 22
Սեր՝ Ուրիշներու .....	Ապ. 2, 30, Մայ. 6, Յուն. 29
Ստեղծագործութիւն .....	Ապ. 11, 13, Մայ. 2, 9, 16, 23, Յուն. 12, 28
Սրբութիւն .....	Յուն. 1, 8, 15, 23
Վախ .....	Ապ. 14, Յուն. 4, 24
Տառապանք .....	Ապ. 12, 13, Մայ. 26, Յուն. 10, 14
Փրկութիւն .....	Ապ. 5, 10, Մայ. 10, Յուն. 3, 11, 16, 21, 29
Փորձութիւն .....	Ապ. 7, Յուն. 6
Քաղաքացիութիւն .....	Ապ. 2, 9, 16, 23
Քաջալերութիւն .....	Ապ. 4, 26, Մայ. 5, 29
Քրիստոս՝ Անձ/Գործ .....	Ապ. 6, Յուն. 6
Քրիստոս՝ Վերադարձ .....	Յուն. 13, 28
Քրիստոսի Հետ Միութիւն .....	Ապ. 5, 13, Մայ. 5, Յուն. 21
Քրիստոսի Յամար Ապրիլ .....	Ապ. 17, Մայ. 7, 13, Յուն. 30
Քրիստոսի Նման Ապրիլ .....	Ապ. 3, 16, 23

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴԻ

Եթէ կը ճանչնաք անձեր, որոնք պիտի փափաքին այս գրքոյկին յաջորդ թիւերը ունենալ կրնաք անոնց անունները ու հասցեները գրել վարի կտրօնին վրայ եւ ղրկել հետեւեալ հասցեներէն մէկուն.-

Սփիւռքի հասցէ՝  
Armenian Missionary Association  
31 West Century Road  
Paramus, NJ 07652  
Tel. 201.265.2607 - E-mail: info@amaa.org

Հայաստան եւ Կովկասեան երկիրներ դիմել՝  
Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն  
Բաղրամեան Փողոց, Թիւ 18  
Երեւան, Հայաստան  
հեռ. (374-10) 54-35-76

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

Tel./Հեռ.....

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

Tel./Հեռ.....